

ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ ԺԱ. — ՆՈՅԵՄԲԵՐ. ՇՐՋԱՆ ԺԱ. ՏԱՐԻ ԺԱ. — ԹԻՒ ԺԲ. — ԴԵԿՏԵՄԲԵՐ.

ՀԱՒԱՏՈՅ ՊԱՐԶՈՒԹԻՒՆԸ՝

Խիստ քիչ քրիստոնեաներ կան, որոնք այն մտքով կրօնի առարկաներով կպարապին, որ բացատրեն կրօնի յաւիտենական եւ ամենեցուն յայտնի ճշմարտութիւնները եւ մանաւանդ հաւատոյ խորհուրդները։ Նոքա աւելի ուշադրութիւն կդարձնեն այլ եւ այլ քրիստոնէական եկեղեցիներու տարբեր ուսմանց վերայ, քան թէ այն սուրբ հիմնական խօսքերուն վերայ, որոնք մեզ ազնուացնելու եւ երջանիկ անելու համար ասած է ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Քրիստոսի աշակերտներուն հաւատը խիստ պարզ էր, նաեւ ագէտ ու զարթնել նոր սկսող խելքի եւս յարմար։ Բայց մարդիկների անգուլ քննութիւններովն այնպիսի բաներու վերայ, որ Քրիստոս ինքն յայտնի անել կամեցած չէր, եւ որ ոչ մի մարդկային խելք քննել կարող չէ, յառաջ եկան քրիստոնէութեան միւս դարերու մէջ տեսակ տեսակ մոլորութիւններ, կուսակցութիւններ եւ հերետիկոսութիւններ. յափշտակուած մտքով ծուռ մեկնելով սուրբ գիրքը, քրիստոնէական եկեղեցւոյ մէջ մտան այնչափ տեսակ տեսակ հերձուածներ, որ իւր պարզութիւնը գրեթէ բոլորովին կորցրեց եւ այս այն քրիստոնէի համար դժուարաւ թափանցելի մի ամպի մէջ ծածկուեցաւ։

Դեռ մեր օրերն եւս կգտնվին մարդիկ, որոնք կրօնական բաներու մէջ իրենք իրենց կնուիրեն ծայրայեղ քննութիւններու եւ վերջը ամենապարզ բանն անգամ իրենց համար դժուար հասկանալի կդառնայ, եւ իրենց խիստ լուսաւորուած կհամարին, երբ որ ամենայն բան կմերժեն։ Ուրիշները, որոնք գուցէ գիւրագրգիռ ղգայման եւ վառ երեւակայութեան տէր են, կպարապին հին կտակարանի մթին մարգարէական ասացուածներով, կամ

Յովհաննու Յայտնութեան խորհրդաւոր եւ այլաբանութիւններով լի զրուցուածներով, քան թէ կեանքի եւ հաւատի այն պատուէրներով, որ Քրիստոս մեզ աւանդեց իբրեւ ամենակարեւոր մեր երջանկութեան համար։ Կճգնին հաշուել եւ գտնել Քրիստոսի երկրորդ գալստեան, կամ ամենայն կրօնների միաւորվելուն, աշխարհս վերջանալուն, կամ հազարամեայ թագաւորութեան ժամանակները։ Այսպէս յափշտակուած մտքով կընկնին նոքա այլ եւ այլ ծայրայեղութիւններու մէջ, եւ ինչպէս որ անհաւատութիւնը քիչ բաներու կհաւատայ, ոքա եւս չափազանց շատ բաներու կհաւատան եւ այսու թերահաւատութեանը դուռն կբանան։

Այսպէս շատ աւելի կգտնվին հաւատի յայտնութիւններու վերայ մտածողներ, քան թէ իսկապէս քրիստոնեաներ խօսքով ու գործով։ Բայց Քրիստոս նոցա չկամենար, այլ վերջիններուս։ «Ոչ ամենքը, որոնք ինձ Տէր, Տէր կկոչեն, պիտի երկնքի արքայութիւնը մտնեն,» ասաց նա, «այլ որոնք որ իմ երկնաւոր Հօրս կամքը կկատարեն»։

Վտանգաւոր է, մանաւանդ անուսումն քրիստոնեաների համար, որոնք ամենայն հարկաւոր նախագիտելիքներէն զուրկ են, կրօնական անպտուղ խնդիրներով, քննութիւններով պարապել։ Բայց աւելի վտանգաւորն այն է, որ նոքա իրենք իրենց ուսուցիչների տեղ կդնեն իրենց հնարած կարծիքը եւ ուրիշներուն համար եւս խղճմտանքի պարտաւորութիւն անել կկամենան։

Անշուշտ սխալանքի մէջ պիտի ընկնին այն մարդիկը, որ առանձին կոչումն չունին ոուրբ գիրքը մեկնելու եւ նորանից հաւատի ճշմարտութիւնները պարզ եւ պայծառ կերպով դուրս ցատկեցնելու։ Այսպիսի մարդիկը անծանօթ լինելով այն լեզուին, որով շարադրուած են այդ գրուածները, կկարդան միայն թարգմանութիւնները, որոնք սխալական մարդիկների գործ են, ուրեմն եւ կարող էին դիւրաւ սխալ անել աստուածների թարգմանութեան մէջ։ Հին եւ նոր կտակարանի գրքերը ոչ մի եւ նոյն հեղինակներու գործ են, ոչ մի եւ նոյն ժամանակի, եւ ոչ մի եւ նոյն նպատակով գրուած, բայց այլ եւ այլ մտքերով եւ այլ եւ այլ ժամանակի մէջ եղած հեղինակութիւնների հաւաքումն են։ Կարո՞ղ ենք արդեօք մենք բոլորովին պարզ հասկանալ մի հին գրուածք, որ հարիւրաւոր տարիներով մեզնից առաջ է շարադրուած թէեւ մեր իսկ մայրենի լեզուով։ Ո՞ւրքան տեղեր մութ եւ անհասկանալի կմնան մեզ համար նորա մէջ, երբ որ ոչինչ տեղեկութիւն չունինք այն ժամանակուան աւանդութիւնների, սովորութիւնների, եւ մասնաւոր հանգամանքների վերայ։ Ուրեմն ո՞րչափ աւելի եւս դժուարին պիտի լինի հասկանալ իմաստը բաւական բառերի, որ հազարաւոր տարիներով յառաջ են խօսուած, այնպիսի երկիրներու մէջ, որ մեր տեղերէն շատ ու շատ հեռու են, եւ այնպիսի ազգի մէջ, որոնք բոլո-

րովին ուրիշ կարգադրութիւններ, ուրիշ կանոններ, եւ ուրիշ գաղափարներ են ունեցել, քան թէ մենք։ Առանց ամենաճիշդ եւ հարուստ տեղեկութիւն ունենալու այդ ասածներուս վերայ, հետեւաբար եւ անկարելի է հիմնաւոր կերպով մեկնել այն սուրբ գրքերը։ Կպատահին նոցա մէջ ակնարկութիւններ այնպիսի բաներու վերայ, որ այսօրվան օրս չկան. կպատահին նմանութեամբ զրուցուածներ, որ այն ժամանակ ամենուն հասկանալի էին, բայց նոր ազգերի մէջ բոլորովին անհետ եղած են։ Ուրեմն սուրբ գիրքը ամենայն կողմէն անթերի եւ կատարեալ կերպով հասկանալու համար, յառաջ պէտք է, այսպէս ասեմ, համաքաղաքացի դառնալ այն արեւելեան աղգերին, որոնց մէջ այդ գրքերը գրուած են. պէտք է նոցա օրէնքները, նոցա լեզուն, նոցա գաղափարները, նոցա հակամիտութիւնները, նոցա սովորութիւնները գիտնալ։

Ուրեմն միշտ զգուշութեամբ պիտի ձեռնամուխ լինինք սուրբ գիրքը կարդալու։ Վասն զի եթէ Փիլիպպոս Առաքեալը հարկաւոր համարեց իւր ժամանակներուն մէջ Կանդակայ թագուհւոյ ներքինիին, որ Եսայի մարգարէի գրուածքը կկարդար, հարցնել թէ «կհասկանաս, ինչ որ կկարդաս». (Գործք Առաք. 8. 30), տասն եւ ութ դար անցնելէն յետոյ Փիլիպպոս Առաքելոյ ապրած ժամանակէն, եւս առաւել հարկաւոր է այս հարցումը։

Տհաս մտքի հետազօտութիւնը սուրբ գրքի մութ տեղերին մարդուս սիրտն եւս չհարստացներ, այլ միայն միտքը կլցնէ այլանդակ կարծիքներով։ Որչափ անբաղտ պիտի լինէինք մենք, եթէ Քրիստոսի մեզ յայտնած կրօնի գլխաւոր բանը այդ մթութիւնը միայն լինէր։ — Այն ժամանակ մենք մեր ամենասուրբ կարիքի մասին տարակուսանքի մէջ պիտի լինէինք. այն ժամանակ Քրիստոս ոչ թէ ամենուն, այլ նոցա համար միայն աշխարհ եկած կլինէր, որոնք ժամանակ եւ տեղեկութիւններ ունին այսպիսի քննութիւններ անելու։

Բայց Փրկիչն մեր ապրեցաւ եւ մեռաւ նաեւ նոցա համար, որոնք առանց բարձր գիտութիւն ունենալու, մանկական պարզամտութեամբ նորա ուսմանը կհետեւին եւ կկատարեն հլու հնազանդութեամբ այն ամենայն պատուէրները, որ աւանդեց նոցա իբրեւ պարտականութիւններ առ Աստուած, առ ընկերն եւ առ անձն։ «Երանի նոցա, որոնք հոգւով աղքատ են, վասն զի նոցա է երկնքի արքայութիւնը։

Սուրբ գիրքը այդ վատ կերպով գործածելէն յառաջ եկան թէ հին եւ թէ նոր ժամանակներու մէջ շատ հերձուածներ եկեղեցւոյ մէջ, մեծ տարաձայնութիւններ քրիստոնեաների մէջ, տեսակ տեսակ հաւատոյ կուսակցութիւններ, կամ աղանդներ, դատապարտելի հալածանքներ, արիւնահեղ պատերազմներ, որ քրիստոնեաներ քրիստոնեաների դէմ սուր քաշեցին։ — Ոչ թէ իսկ Քրիստոսի խօսքերու պատճառով, այլ աւելի իրենց առանձին

կարծիքներին համար Քրիստոսի անձին վերայ երկպառակութիւն ընկաւ իրենց մէջը։ Բայց մարդուս երջանիկ անողը մեր կարծիքները չեն, հապա Քրիստոսի եկեղեցին գնալը, երբ որ մենք կկատարենք կամքը մեր Հօր, որ երկինքն է։ Խիստ պարզ են այն վարդապետութիւնները, որ Քրիստոս բերեց աշխարհին երջանկութեան համար. Նոքա մութ լաբիւրինթոս չեն, որոյ մոլորուելու ճանապարհների մէջ մարդկային մտածողական զօրութիւնը կորչի, այլ պայծառ տաճար, որոյ երկայն սրահներու մէջ տեղ կայ ամենուն համար, ինչ հասակի եւ սեռի, ո՛ր դարու եւ ո՛ր աստիճանի լուսաւորուած մարդ եւս լինի։ Վասն զի Քրիստոսի վարդապետութիւնների մէջ չկան մարդկային մտքին համար խիստ օտարոտի, իբր թէ Քրիստոսէն իրանից նոր հնարած գաղափարներ աստուածային եւ մարդկային գործերի վերաբերութեամբ, այլ մանաւանդ թէ նորա վարդապետութիւնը բնական կատարելագոյն զարգացումն է այն աստուածային օրէնքների, որ խիստ սկզբնական ժամանակէն մարդու որտի մէջ դրոշմուած են։ Քրիստոսի աւետարանը՝ իւր ամենաբարձր ճշմարտութեան աստիճանին զարգացած եւ հասունացած մարդկային խղճմտանքն է։ Ուրեմն թէ ճշմարիտ եւ թէ գեղեցիկ ասած է եկեղեցւոյ հայրերի մէկը. «ամէն մի մարդկային հոգի ի ծնէ քրիստոնեայ է»։ Մեր ամենաներքին մտածմունքը եւ զգացմունքը պէտք է այնպէս համաձայն լինի հարկաւորապէս Քրիստոսի ուսման սուրբ սկզբունքներուն եւ այն սկզբունքներու մէջ եւս համաձայն ամենայն մարդկային արարածներու հետ, ինչպէս որ աչքի տեսութիւնը, ականջի լսողութիւնը, ուրախութեան եւ վշտի զգացմունքը բոլոր մարդկային սեռի համար բնականաբար մի եւ նոյն է։ Ներդաշնակ կերպով կարգաւորուած մարմնաւոր եւ հոգեւոր աշխարհի մէջ տարբեր եւ միմեանց հակառակ ճշմարտութիւններ չեն կարող լինել, այլ մի միայն է ճշմարտութիւնն։ Բայց այս մի ճշմարտութիւնը հասկանալը այլ եւ այլ կերպ կարող է լինել, ինչպէս որ արեգական ճառագայթը անձրեւի ամպերու վերայ ընկնելով տեսակ տեսակ գոյներով կերեւի։ Այլեւայլ դարերը եւ ազգերու լուսաւորութեան աստիճանները պատճառ եղան յառաջ գալուն մեծ եւ բոլորովին միմեանց հակառակ տարբեր կրօնների, որոնց կամայական յաւելուածները եւ ներմուծած բաները աստուածային մէկ օրէնքին մէջ մարդկայինն է, իսկ առհասարակ ամենուն ընդունածը միշտ աստուածայինն է։ Սակայն Քրիստոսի փրկագործութեան անմահ արդիւնքը նորա մէջ է, որ նա կրօնի այս աստուածային մասը մաքուր եւ ամենայն մոլորութիւններէ ու սխալներէ ազատ կերպով քարոզեց ու սովորեցրեց իբրեւ հետեւելի օրինակ մեր մարդկային ազգին եւ այն իւր օրինակով մինչեւ իւր մահը գործով ցոյց տուեց։ Ըստ այսմ աւետարանը ոչ միայն ամենաբարձր գիտութիւն է, այլ եւ միանգամայն Աստուծոյ ամենասուրբ զօրութիւնը։

Քրիստոսի վարդապետութիւնը խիստ պարզ է. ամենայն արարածներու ըստեղծող Աստուածը հոգի է, որ ամենայն բան իբրեւ կեանք եւ կենդանութիւն կլցնէ ու կթափանցէ. Նորան պէտք է մենք հոգւով եւ ճշմարտութեամբ երկրպագանենք: Աստուած մեր Հայրն է, որ մեզ անթերի սիրով կկառավարէ եւ աշխարհիս արկածների չար ու բարով կկամենայ մեզ կրթել եւ կատարելութեան տանել. Նորան պիտի սիրենք ամենայն սրտով, ամենայն հոգւով եւ մեր մերձաւորին մեր անձի նման. վասն զի ամենայն մարդիկ Աստուծոյ զաւակներն են, ուրեմն եւ մեզ հետ հաւասար իրաւունք ունեցող եղբայրներ են: Աստուած մեր յաւիտենական թագաւորն է. Նորա թագաւորութիւնը միայն այս աշխարհէ չէ, արտաքին կերպարանքով չգար, հապա մեր ներսը մեր սրտի մէջն է: Որոնք սուրբ սիրտ ունին, նոքա Աստուած կտեսնեն: Նորա թագաւորութիւնը կշարունակուի մահէն ու գերեզմանէն յետոյ եւս հայրական տան անվերջ տեղերուն մէջ հանդերձեալ աշխարհը. այնտեղ է լրումն: — Այս քիչ խօսքերի մէջն է բոլոր աւետարանի ուսումն եւ ո՛ւր որ մարդկային բանականութիւն կայ, ո՛ւր որ մարդկային խղճմտանք կայ, այս քիչ խօսքերուն մէջ կգտնէ իւր ամենասուրբ կարիքը, սոցա մէջ կգտնէ իւր երջանկութեան լրութիւնը:

Սորա համար ցանկանք ամենայն սրտով հաւատի պարզութիւնը պինդ պահել եւ միշտ նորա մէջ հաստատ ու անսասան մնալ: Մանկական հոգւով փափագենք պինդ կպչել Քրիստոսի խօսքին. վասն զի ինչ որ նա խօսել է յաւիտենական ճշմարտութիւն է: Նա եւ ոչ մի ուրիշը ցոյց տուեց մեզ փրկութեան ճանապարհը, որ դէպ ի կատարելութիւն կտանի: Նա է մեր ուսուցիչը եւ ոչ ուրիշ մի մահկանացու. միայն Քրիստոսն է եւ մենք նորա եղբայրները: Մի է միայն մեր ամենուն Հայրը, որ երկինքն է:

Եւ եթէ որ այստեղ այնտեղ կարծիքներ կարծիքներու կփոխուին, այն տեղ եւս մենք միշտ կառավարող տեսչութիւնը ճանաչենք, որոյ իմաստութիւնը կկամենայ, որ երկպառակութենէն ճշմարտութիւնը շահուի, կա՛մ զտուելով, կա՛մ հաստատուելով: Չկամենար այո՛ բարի Հայրն մեր երկնաւոր, լուսաւորուելու համար մեր ունեցած մանկական ձգտումն ու փափագը արհամարհել, կամ իւր զաւակների դիւրագայթ եւ սխալական բանական հոգին դատապարտել: Միայն խնդրենք մեր Ողորմած Հօրէն պարգեւել մեզ ամենեցուն այն շնորհը, որ ամենքս աւելի ազնիւ սիրտ ստանանք, որպէս զի արժանի լինինք ճշմարտութիւնը տեսնելու, մաքրուած լինելով այս զգայական աշխարհիս չար եւ պղտոր կիրքերէն:

Գ. Ե. Ա.

ՀԻՆԳ ԿՐԹՈՒԹԻՒՆ.

Կառաջարկենք «Արարատի» ընթերցողներին Ֆրանսիայի հռչակաւոր պ. Լըգուվէի այս հիանալի յօդուածի թարգմանութիւնը, որ կյուսանք պիտի ուսումնասիրեն մանաւանդ մեր մասնագէտ մանկավարժներն: Թող այս յօդուածը ուշադրութեամբ կարդան նոքա եւս, որոնք առանց մի առարկայ ուսումնասիրելու կպնդեն շատ անգամ թէ ֆրանսական ազգը ճշմարիտ կրօնական զգացմունք չունի: Այսպիսի յօդուածը ֆրանսական լրագիրների մէջ ուշադրութեան արժանի երեւոյթ կկազմէ, — ուստի Հայերիս մէջ հարկաւ ամեն դպրոցասէրների ուշք պիտի գրաւէ: Պ. Լըգուվէն այս ճառը կարդաց Մօնժ վարժարանի մէջ պարգեւաբաշխութեան օրը: Սա կարող է նորա «Հայրէր և Մանուկներ 19 դարում» հեղինակութեան մի նոր եւ գեղեցիկ գլուխ համարվել: Պ. Լըգուվէն շատ յօդուածներ հրատարակած ունի ընտանիքի մասին բազմահամբաւ «Տան» լրագրի մէջ, որտեղ տպված էր սոյն այս յօդուածն եւս: Խմբ.

Տիկիններ եւ Պարոններ.

Ամենայն յառաջադիմութիւն հակառակորդներին կհանդիպի, ամենայն յաջողութիւն թշնամիներին կհանդիպի: Ի՞նչպէս պատասխանելու է թէ մինին եւ թէ միւսներին: Նորանոր յաջողութիւններով եւ նորանոր յառաջադիմութիւններով: Ահա Մօնժ վարժարանը չափազանց յաջողակ է, ուստի ենթարկված է յարձակմունքին: Տեսնենք ուրեմն թէ ի՞նչ կգտնեն նորա մէջ նախատելի եւ մենք պիտի իմանանք յետոյ թէ ի՞նչ քայլեր կարօղ է նա անել դէպի յառաջ:

Նորա հակառակորդներն երկու տեսակ են. ոմանք կմեղադրեն նորան նիւթականութեան համար, եւ ոմանք շառլատանութեան համար: Նիւթականութիւնն այն յարմարաւոր բառերից է, ինչպէս ընկերավարութիւն (սօսիալիզմ): հասարակավարութիւն (կօմունիզմ), արմատականութիւն (բադիկալիզմ), որ կձգեն հակառակորդների երեսին իբրեւ արջասպ, նոցա անճոռնացնելու համար, այն բամբասանքներից մին է, որի մասին կասէ Մօլիէրը, թէ երկնքի անունով վարագուրվելով «կսպանէ մարդիկներին սրբազան սրով»:

Բայց ի՞նչ պատճառով է, պիտի ասէք ինձ, նիւթականութեան մեղադրանքը: Ի՞նչի վերա կհիմնվի սա: Ի՞նչ է սորա առիթը: Առիթը նախ այն է, որ Մօնժ վարժարանի հիմնադիրը բազմարուեստեան (պօլիտէխնիկեան) ուսումնարանից է դուրս եկել . . . . Գիտութիւնը Գալիլէից սկսած եղած է միշտ կարծիքական բան մի տեսակ գլուխների համար: Յետոյ առաւելապէս այն է առիթը, որ վարժարանի վարչութեան խորհուրդը կմիաւորէ իւր մէջ կաթոլիկների հետ, բողոքականներին, իսրայէլացիներին, իմաստասէրներին: Այս պատճառը ձեզ օտարոտի կերեւի, սակայն նոր չէ սա: Աշ-

խարհից երբէք չեն պակասել այն մարդիկ, որոնք կնայեն կրօնին իբրեւ իւրեանց անձնական գործին, կնայեն Աստուծուն իբրեւ իւրեանց շահերին ծառայողին եւ կքարոզեն, որ Աստուծուն հաւատալու միակ եղանակը նոցա հաւատալն է։

Բարեբաղդաբար Աւետարանը հեռու չէ նոցա պատասխանելու եւ ահա նոյն ինքն Քրիստոսի բերանից դուրս են եկել այս բառերը. «Իմ հօր տան մէջ շատ օթեւաններ կան»։

Ես չեմ կամենայ Մօնժ վարժարանի վերաբերմամբ, նորա իբր . . . գաղտնի նիւթականութիւն ուրիշ կերպով արդարացնել։ Խղճմտանքի ազատութիւնը, որ նոյն ինքն կրօնի գրքի մէջ հաստատված է, կապացուցանէ, որ կրօնական միտքը կարող է զանազան ձեւեր ունենալ։ Շտապենք աւելացնելու, որ հնարաւոր չէ ոչինչ կըրթութիւն առանց կրօնական մտքերի։ Իմ կողմից ես չեմ վախենայ ասելուց, որ եթէ ես անշուշտ ստիպված լինէի ընտրելու մի մանուկի համար աղօթել իմանալուց եւ կարդալ իմանալուց մին, ես կասէի. թող նա իմանայ աղօթել, որովհետեւ աղօթել կնշանակէ կարդալ ամեն գրքերից ամենագեղեցիկ գիրքը, կարդալ Նորա ճակատի վերա, որտեղից կծագէ ամենայն լոյս, ամենայն արդարութիւն եւ ամենայն բարութիւն։ Բայց մենք ստիպված չենք երկուսից մին ընտրել եւ ի հերքումն Մօնժ վարժարանի հիմնադրի կարծված սկզբնական արատաւորութեան, նորա ուսուցիչներն եւ աշակերտները պիտի ապացուցանեն, ինչպէս ասաց Բէկօնը, որ եթէ սակաւիկ գիտութիւնը կհեռացնէ Աստուծուց, շատ գիտութիւնը կմօտեցնէ Աստուծուն։

Շառլատանութեան մեղադրանքը ոչինչ ուրիշ հիմն չէ կարող ունենալ բայց ի վարժարանի պրոգրամից։ Արդ ճիշդ այս պրոգրամն է, որ ինձ նոյն վարժարանի այոչափ հաստատամիտ կուսակից դարձրեց։ Նորա համար արդեօք, որ ես գտայ աւելի բարեկեցութիւն, աւելի օդ, աւելի ընդարձակութիւն, սակաւաթիւ աշակերտներով դասարաններ, աւելի իմաստուն զբօսանքներ, աշխատութեան օրեր պակաս ծանրաբեռնված։ Այո, իհարկէ այս ամենն հաշուի կառնէի գաղափարա կազմելիս, որովհետեւ ես չեմ կարողանայ հասկանալ, որ օրէնք լինէր մանուկների աշխատութիւնը չափաւորելու համար գործարանների մէջ եւ չլիներ նոյնպիսի մի օրէնք վարժարանների համար, որ իրաւ մարդիկ վախենային մարմինները գօսացնելուց եւ չսարսափէին միտքը գօսացնելուց կամ բթացնելուց։ Բայց իմ զգացմունքս առաւել նշանաւոր պատճառի վերա են հիմնված. ինձ առաւելապէս հիացրեց եւ զմայլացրեց պ. Ֆօդառի յօրինած պրոգրամի մէջ նորա յարմարումն մանկութեան մտաւոր զարգացման օրէնքների հետ։

Բոլոր աստղերը երկնքի մէջ միանգամից չեն երեւի, մի թուփի բոլոր ծաղիկները միասին չեն ծաղկի միեւնոյն ճիւղի վերա, նորա կբուսնեն հետզհետէ իւրեանց ժամին։ Միեւնոյն է

եւ զանազան մասաւոր ընդունակութիւնների վերաբերմամբ։ Այս ընդունակութիւնները կծնվին մանուկի մտքի մէջ նոյնպէս, ինչպէս նորա անդամներ եւ գործարաններ կզարգանան նորա մօր արգանդի մէջ մին միւսից յետոյ։ Արդ ինչ կարգով կծնվին նորա։ Վերացական ընդունակութիւններն են յառաջ երեւում արդեօք թէ զգայարաններից կախումն ունեցողները։ Իհարկէ զգայարանական ընդունակութիւնները։ Եւ զգայարաններից որն է այն զգայարանը, որի զարգացումն յառաջընթաց է եւ կիշխէ բոլոր միւսներին։ Աչքերը։ Մանուկը ամբողջապէս աչք է։ Մանուկը տեսութեան անօրինակ մի ոյժ ունի։ Մենք կոյրեր ենք նորա առաջ։ Մտէք ձեր որդու հետ մի սենեակ, մի արուեստանոց, մի պալատ եւ դուրս գալիս հարցրէք նորան. դուք զարհուրած տիսուր մնաք թէ ինչեր տեսած է նա։ Մի հայեացքով միայն նա ցուցակ կազմած կլինի կարասիքի, պատերի, ճարտարապետական կամ արուեստական իրերի։ Իւրաքանչիւր մասնաւոր վարպետը չէր կարող նոյնչափ շուտ ցուցակագրել։ Բոլոր մանուկները գործակալ գնահատողներ են ծնված։ Ուստի Մանուկ վարժարանի պրոգրամը նախ գործակալ - գնահատողներ կմեծացնէ մանուկներին։ Մանուկների այնտեղ ստացած առաջին կրթութիւնը աչքերի եւ աչքերի միջնորդութեամբ ստացած կրթութիւնն է։ Նոցա առաջին դասերը արտաքին, գործածական իրերի վերա են, նկատողական ուսման դասեր են։

Սա արդարեւ մեծ յառաջադիմութիւն է, բայց այս յառաջադիմութիւնը արտադրեց մի ուրիշն, առաւել նշանաւորը գուցէ։ Այս առաջին նորաձեւութենից ծագեց մի երկրորդն, դեռ եւս առաւել համարձակ նորաձեւութիւնը։ Արդարեւ ինչպէս եւ որո՞նց միջնորդութեամբ աւանդելու է այս նոր դասերը մանուկներին։ Սովորական ուսուցիչները յարմար չեն ամենեւին սորա համար։ Նոցա ուսուցանելու սովորութիւնները հակառակ են սորան, նոցա ինքնասիրութիւնն անգամ արգելք է սորան։ Նա, ով կարող է սովորեցնել լատիներէն եւ յունարէն, նա ով քան տարուց աւելի վարժված է լուծելու քերականական եւ բանասիրական խնդիրներ, փոքր ինչ նուաստութիւն կհամարէր նիւթական իրերի գործածութիւն եւ ընաւորութիւն մեկնելը։ Հարկաւոր են նոր ուսուցիչներ այս նոր կրթութեան համար։ Այն ժամանակն ահա պ. Գօդառը մտաբերեց մի կնոջ, որ հնարած է իրերի (իրական) դասեր. կանայք միայն կարող էին իրերի դասեր տալ։ Նա ասաց, որ կանանց խելքը, որ մերի չափ փիլիսոփայական չէ եւ որ աւելի պարապած է իրողութիւններով քան թէ խղէանեերով, նոյն այս պատճառով այս գործնական դասաւանդութեան կոչումն ունի, եւ այնուհետեւ նա վստահութիւն եւ պատիւ ունեցաւ ուսուցչուհիներ հրաւիրելու կանանց իւր վարժարանի մէջ։ Բոլոր առաջին դասարանները նոցա են յանձնված, բոլոր փոքր մանուկները

նոցա ձեռին են։ Պէտք է ասել բարձրաձայն, որ այս յառաջադիմութիւնը յեղափոխութենից պակաս բան չէ, ամենաբաղդաւոր, ամենապողաբեր մի յեղափոխութիւն։ Բանալ այս վարժարանի դռները կանանց առաջ, սա մի եւնոյն էր թէ այնտեղ մացնել նոր եւ ամենակարող մի տարր—«էջ։ Քաւ լիցի, որ ես մեղադրեմ մեր համալսարանական ուսուցիչներին իբր թէ նոքա իւրեանց աշակերտներին չեն սիրում։ Հազարաւոր օրինակներ կվկայէին, որ ես անարդար խօսած կլինիմ։ Այո՛, համալսարանը հայրական է, բայց մայրական չէ։ Սակայն փոքրիկ մանուկի զգացած ամենակարեւոր պայմանը մայրականութիւն է։ Կին ուսուցչուհիների հետ ընտանիքը կմոնէ, այսպէս ասենք, վարժարանի մէջ, կընդարձակէ կշարունակէ ընտանեկան փայփայանքների, խանդաղատանքի, մոերմութեան ազդեցութիւնը։ Կանանց հետ վերջապէս կիրագործվի Սոկրատի գեղեցիկ միտքը։ Սոկրատը խօսելով իւր աշակերտներից մինի մասին, որ նորա դասերից օգուտ չէր քաղում, կասէր. «Ի՞նչ կարող եմ ես նորան սովորեցնել։ Նա ինձ չէ սիրում»։ Երբ կանայք կխառնվին մանուկի կրթութեան մէջ, մենք իրաւունք կստանանք ասելու. «Մանուկն ինչ չի սովորի նոցանից։ Նա նոցա կսիրէ»։

Մենք լաւ բան շատ ասացինք Մօնժ վարժարանի մասին, թող ասենք նորա մասին փոքր ինչ վատն եւս։ Ասենք ինչ որ կպակասի նորան։

Այս անելու համար բարձրանանք, եթէ կհաճիք, Մօնմարտրի սարը, մի հայեացք ձգենք այն տեղից Փարիզի տեսարանի վերա եւ պատենք թէ ուրիշ ինչ ուսումնարաններ կարող են Մօնժ վարժարանին օգտաւէտ դասեր տալ։

Ես կսկսեմ լատինական թաղից։ Ես կնկատեմ Պանտէօնի եռեւ, Վալ-դը-Գրասի մօտ մի փողոց, որ կկոչվի Տուրնրֆօր եւ այս փողոցի մէջ մի տուն, որի արտաքին տեսքը ինձ կգրաւէ։ Մտնենք։ Սա մի սկզբնական դպրոց է։ Առաջին անգամից ոչինչ առանձին բան չես տեսնի։ Մանուկներն իւրեանց արկղիկների առաջ նստած, աշխարհագրութեան քարտէզներ պատերի վերա, քաշի եւ չափի նկարներ, բոլորն ինչ որ ամեն տեղ կայ։ Կէսօր կխփէ։ Բոլոր մանուկները վեր կկենան։ Ո՞ւր կգնան։ Խաղալու։ Ոչ, դեռ եւս ժամանակ չէ։ Նոքա կշտապեն դէպի երկու երեք արուեստանոցներ. հիւսնանոց, փականագործնոց, ձուլարան, փայտի քանդականոց։ Եւ ահա աշակերտներս արուեստաւորներ դարձած։ Դրչի փոխանակ սղոց, մուրճ, հարթիչ, մկրատ, թելագրութիւն անելու փոխանակ նոքա կշինեն սեղաններ, նստարաններ, փոքրիկ պահարաններ։ Բոլորն ինչ որ պէտք է իւրեանց գործածութեան համար նոցա ձեռից դուրս կգայ։ Յետոյ զանգակի երկրորդ ձայնին, նոքա կթողնեն այնտեղ գործիք եւ գործաւորի դոգնոցը, եւ ահա նոքա նորէն կվերադառնան աշխարհագրութեան, թուաբանութեան, պատմութեան դասերին։ Այս տեսարանը չէ զրաւում արդեօք ձեզ։ Մատ-

ւորական կրթութեան եւ ձեռագործական կրթութեան այս միաւորութիւնը չէ թւում արդեօք ձեզ օրինակելի դաս։ Զէք տեսնում արդեօք սորա մէջ մի բան փոխառնելու եւ սովորելու։ Հանգստացէք, ես չեմ կամենայ հետեւել ժան ժաք Ռուսսոյին եւ ձեզ փականագործներ շինել ձեր հացը վաստակելու միջոց տալու համար յեղափոխութեան ժամանակ, եւ դուք շատ վատ կվաստակէիք կարծեմ։ Եւ որքան օգտաւէտ է նոյն իսկ կարող դասակարգի զաւակների Մոնժ վարժարանի աշակերտների համար աչքերի կրթութեան հետ միաւորել մատների կրթութիւնը։ Մի իրողութիւն կղարմացնէ ինձ միշտ, երբ ես կմտնեմ հիւրասենեակ մի երեկոյեան։ Կանայք կիսօսեն, կասղնակարեն, կգործեն, կմտնեն, կնկարեն, կնուագեն փիանո, կձեւեն։ Ի՞նչ կանեն տղամարդիկ։ Նոքա իւրեանց բթամատներ կդարձնեն մին միւսի շուրջ կամ քնած են։ Որովհետեւ, լաւ նկատեցէք այս, ընտանեկան խնջոյքների ժամանակ տղամարդիկ միայն կքնեն։ Ի՞նչի։ Որովհետեւ կըձանձրանան։ Ի՞նչի։ Որովհետեւ ոչինչ չեն անի։ Ի՞նչի։ Որովհետեւ նոցա չեն սովորեցրած ոչինչ շինել։

Ֆրանկլինը նուիրած է խելացի խօսքերով լի երկու ամբողջ երես ձախ ձեռի ապերսագրին, որով նա կգանդատէ թէ նորան ոչինչ չեն սովորեցրած եւ թէ ամեն բան կսովորեցնեն նորա աջը աջ ձեռին *)։ արական մատները կարող էին միեւնոյն դանդաղ բարձրացնել իգական մատների դէմ։ Սոցա համար մի հիանալի անուն են հնարած, յաւերժահարոյ մատներ։ Մենք, ի՞նչ ենք մենք։ Պարապ եւ ծոյլ մատներ։ Սա մի հին աւատական նախապաշարմունքի մնացորդ է, երբ չէին թոյլատրի բարձր դասակարգերին ոչինչ ուրիշ արուեստ բացի զէնքի արուեստից, եւ երբ ազնուական մարդը, գործիքների վերաբերմամբ, պիտի գործածել իմանար միայն թուրը։ Իսկ այսօր ժամանակ չէր արդեօք հասկանալու թէ որովհետեւ Աստուած պարգեւել է մեզ, ինչպէս հասարակ ժողովրդի մարդիկներին, այս տասն սիրուն փոքրիկ գործիքներ ձեռներիս ծայրերի վերա, նորա համար է, որ մենք նոցա գործածենք։

Փրկել ձեր տասն մատներ, սա կնշանակէր ձեզ փրկել, ձեր ամենածանր լծից — պարապութենից եւ ամենավատ ստրկութենից — անյաջողակութենից։ Ես կարող եմ ձեզ համարձակ խօսել անյաջողակութեան մասին, որովհետեւ ինձ յայտնի է սա։ Ես չեմ կարող մի մեխ պատի մէջ խրփել առանց մուրճով ինձ ցաւեցնելու, ես չեմ կարող մի փայտ կտրել կամ հարթել առանց ձեռս կտրելու նոյն հարուածով եւ ես շատ յաճախ հարցրած եմ զարհուրանքով ինձուինձ. ինչ կդառնայի արդեօք ես, եթէ Ռոբէնսոն Կրուզոյի տեղ լինէի։

Կյուսամ որ ձեզանից ոչ ոք չի ձգի անաղատ կղզու մէջ։ Սակայն առանց դուրս գալու կեանքի ամենասովորա-

(*) Ձախ ձեռի գանգատը տպված էր «Հայկական Աշխարհի» մէջ (1874 թ. ապրիլ — մայիս)։

կան պատահարներից, որքան վայելչութիւն կատանաք դուք հարթիչի, սղոցի գործածութենից, յաջողակութենից վերջապէս։ Յաջողակութիւնը կմխիթարէ, կհեռացնէ վիշտ եւ տրրտմութիւն, կփոխէ մարդին։ Կարելի չէ միշտ մտածել, խօսել, գրել։ Յաջողակութիւնը կլցնէ մտաւոր պարապմունքի դատարկ միջոցները, որոնք շատ անգամ ձանձրալի կլինին։ Որսի, ձկնորսութեան, ճանապարհորդութեան, ամարանոցի, նոյն իսկ ձեր խաղերի մէջ, հնարագէտ երիտասարդը իւր՝ ընկերակիցների նախախնամութիւն է, որովհետեւ հնարագիտութիւնը ձեռին ունեցած գործիքներ կամ խաղալիքներ գործածելու մէջ չէ կայանում միայն, այլ նա կհնարէ նոցա, երբ չըկան, հնարագիտութիւնը ստեղծող է, ուստի բարերարող է։ Դուք ամենքդ զինուորներ կլինիք, ուրեմն պատերազմի մէջ զինուորը իւր վիրկութիւնը իւր ձեռների հնարագիտութենից պիտի յուսայ։ Ղրիմի պատերազմի բոլոր զինուորները կասեն ձեզ, որ ֆրանսական զինուորի ճարտարախօս եւ բնական հընարագիտութիւնը, նորա ձիրքը իւր համար անպատրաստ ապաստան կանգնելու, խոհանոցի գործիքներ շինելու, բրիտանական զօրքի համար պակաս բարեբաղդութիւն չէր։ Մատների կրթութիւնը կնպաստէ զանազան գիտութիւններ ուսումնասիրելուն եւս։

Երկու հռչակաւոր օրինակ կլինին իմ վերջին միտտ։

Իմ ճանաչած ամենահնարագէտ կամաւոր փականագործ Ս. Մարկ Ծիրարդէն էր։ Նա կփառաւորվէր, որ կշինէր իւր մատենադարանի պահարաններ։ Երբ նա յոգնած կլինէր իւր գրքերը կարգալուց, նա կհանգստանար նոցա դասաւորելով։ Մօլիէրի հայրը, որ այնչափ կյուսահատէր, որ իւր որդու մէջ չէր տեսնի օթոցագործի կոչումն, բարեմաղթութիւններով կընդունէր իբրեւ իւր արժանաւոր ժառանգ Վիկտոր Հիւգոին։ Ոչ ոք արդարեւ չէ կախում վարագոյրներ, չէ ծածկում բաղկաթոռներ, չէ մեխում պատատաւակներ այնպէս, ինչպէս «Դարեգրութիւնների» հեղինակը։ Կասեն, որ մի խորին տրտմութեան մէջ Վիկտոր Հիւգոն միթեթեւութիւն գտաւ միայն փակվելով բոլորովին միայնակ իւր տանը ամբողջ ամիս եւ նորոգելով իւր ընակարանի կահ կարասիքը։ Կասեն՝ որ գրիչը եւ գործիքը երբեմն համաձայնութեամբ կապրին եւ լաւ ձեւ կատանան միեւնոյն ձեռի մէջ եւ կարելի է առանց կոչումն արատաւորելու լինել արհեստագէտ եւ արհեստաւոր։ Կյուսամ, որ այս օրինակները կհամոզեն պ. Գոդառին եւ նա կգտնէ իւր պրոգրամի մէջ, — թէ սրտեղ եւ ինչպէս, ոա նորա գործ է, — մի աննշան անկիւն մատների կրթութեան համար, եւ ես կվերջացնեմ այս առածով. «Իւրաքանչիւր մանուկը կներկայացնէ իւր մէջ մի փոքրիկ հնարագէտ կենդանի, մի ապանէք փոքրիկ կենդանին։ Մարդին կրթեցէք իբրեւ կաստոր (բէշկ մշկոյ որ խելացի եւ շինող է)»։

Ես ունիմ առաջարկելու երրորդ կրթութիւն, ունիմ դարձեալ մի չորրորդը, ունիմ դարձեալ մի հինգերորդը, բայց կարգով գնանք եւ մանաւանդ մի վախենաք։ Իմ ամբողջ նախագիծը տասն րոպէից աւելի չի տեւի։

Պանտէօնից մենք կանցնենք Ֆօբուր — Պուասօնիէրի փողոցը։ Դուք կգուշակէք թէ ո՞ւր կտանեմ ձեզ։ Ուրեմն . . . . այս այնտեղ է դէպի երաժշտանոց (կօնսէրվատուար) եւ իմ առաջ կրթութիւնը ձայնի կրթութիւն է։ Օտարոտի չէ մի՞թէ, որ ամեն վարժմունքի համար ուսուցիչներ կան, բայց չկայ ուսուցիչ միմիայն այն զգայարանի համար, որը մեզ կծառայէ ամեն օր, ամբողջ օրեր եւ ամեն տեսակ պարապմունքի մէջ, ձայնը։ Մեզ կսովորեցնեն լողալ, պարել, մենամարտել, մարմնամարզել, սրախաղալ, եւ մեզ չեն սովորեցնի ոչ խօսել, ոչ կարդալ։ Այլ դեռ եւս աւելի, մեր դպրոցներում մեզ մոռանալ կտան երբեմն կարդալ։ Մի օր իմ զաւակներից մին Լաֆօնտէնի առակ դաս ունենալով եւ սերտած լինելով, անբաղդութիւն ունեցաւ իմ տուած խորհուրդները մոռաբերելու եւ յիմարութիւն էր արածիւր առակը լաւ ասելու։ Նոյն ժամայն նորա բոլոր ընկերները սկսել էին ծիծաղել եւ ուսուցիչը ասած է նորան խոտութեամբ.

— Պարոն, այդպէս կարդալ չէ կարելի, դա ծիծաղելի է»։ Մօնժ վարժարանը պատիւ ունեցաւ այս հին փտած եղանակը խորտակելու, օգնութիւն կանչելով, մի ամիս յառաջ, ընթերցանութեան արհեստի մէջ ուսուցիչների ուսուցիչ պ. Բէնիէի խորհուրդները։ Սակայն որպէս զի նորա դասերը բոլոր իւրեանց ոյժն ունենան, հարկաւոր է որ դուք ամենքդ նոցա օգտաւէտութեան խորին համոզումն ունենաք։ Ուստի ես կդառնամ ձեզ ամենքիդ։ Դուք, ուսուցիչներ, ընթերցանութեան արհեստը ձեզ կօգնէ միանգամայն դաս աւանդելու եւ չմաշվելու դաս աւանդելիս։ Ձայնը ձեր աշխատութեան գործիք է, սովորեցէք նորան գործածել եւ դուք սովորած կլինիք նորան պահպանելու հնարը։ Ձայնը ձեր համոզելու գործիք է, սովորեցէք նորան գործածել, որ կարողանաք ձեր աշակերտների ականջը վաստակել, որովհետեւ ականջի միջնորդութեամբ կը գնան դէպի սիրտը եւ միտքը։

Դուք, մանուկներ, ես ձեզ ամենազգայուն տեղից պիտի բռնեմ։ Ի՞նչ կձանձրացնէ ձեզ ամենից շատ ձեր աշակերտութեան մէջ։ Դասերն անգիր սերտելը։ Արդ եթէ դուք կկամենաք սովորել ձեր դասերը երկու անգամ աւելի շուտ, սկսեցէք նախ նոցա լաւ կարդալ։ Դասը միանգամ լաւ կարդալ միեւնոյն է թէ դասի կէսը սերտած։ Այն աշխատութիւնը, որ գործ կդնէք դասը կարդալու, կօգնէ ձեզ դաս հասկանալու, իսկ հասկանալդ կօգնէ ձեզ մտքում պահելուն։ Բառի հնչումն անգամ կմուծանէ նորան ձեր մտքի մէջ եւ կամրացնէ նորան այնտեղ։ Կկամենաք փորձ փորձել։ Ես մի հին յիշողութիւն ունիմ, որ ինձ շատ վաղուց կը ծառայէ, ուստի եւ սկսած է շատ մաշ-

վել, այն ինչ ձեր յիշողութիւնը բոլորովին թարմ, բոլորովին դիւրաթեք է։ Արդ ես կառաջարկեմ ձեզանից նորան ով կցանկայ հետեւեալ պայման. վերցնենք նա եւ ես ըստ պատահման մի յօդուած, որ չիմանայինք ոչ ես ոչ նա եւ սկսենք միասին սերտել։ Ես գրաւ՝ կդնեմ, որ եթէ նորան պէտք կլինի 25 րոպէ, մի քառորդ ժամ ինձ բաւական կլինի։ Ի՞նչի։ Որովհետեւ փոխանակ նորա պէս բառերը մեծ դժուարութեամբ ուղեղիս մէջ տպաւորելու նոցա մեքենայաբար կրկնելով, ես կըյանձնեմ ձայնիս եւ մտքիս, որ օգնութեան գան յիշողութեանս։ Ասացէք ուրեմն, մի՞թէ կյօժարէք, որ տանել տաք արագութիւնը եօթանասուն տարեկան մի աշակերտին։ Ոչ, չէք յօժարի, այնպէս չէ՞։ Ուստի սովորեցէք ձեր ունայն վաստակից շուտ ազատվելու միջոց . . . . Սովորեցէք կարդալ։

Իսկ ձեզ, երիտասարդներ, առաւել ծանր պատճառ կոտիպէ առ այս։ Դուք ամենքդ նշանակված էք մտաւորական եւ ազատ պարապմունքի համար։ Դուք կլինիք փաստաբաններ, դատաւորներ, բժիշկներ, գիտնականներ, արհեստագէտներ, եւ այս կոչմամբ ձեզ հարկաւոր պիտի լինի ճառեր ասել, զեկուցմունք կարդալ, հաշիւներ պատրաստել, յիշատակագրեր քննել; ցուցմունք ներկայացնել։ Ուստի ընթերցանութեան արհեստը ձեզ համար ոչ թէ վայելչութեան, այլ շահաւէտութեան արհեստ է։ Պ. Բէնիէ ձեզ պիտի ապացուցանէ, որ կարդալ սովորելը նոյն է թէ խօսել սովորել։ Իսկ եթէ կան ձեր մէջ քանի մի քաղաքական անձների բողբոջներ, ես նոցա կառաջարկեմ այս դասերը նոցա ապագայ պերճախօսութիւնը աչքի առաջ ունենալով։

Մի չորրորդ յառաջադիմութիւնը կը հրաւիրէ մեզ։ Ո՞ւր։ Դէպի Վօժիրարի փողոց։ Վօժիրարի փողո՞ց։ Այո, բոլորովին փողոցի գլուխը։ Բայց այնտեղ ճիզվիտ հայրերի դպրոց է։ Ճիշդ այդպէս։ — Դուք մեզ կտանէք յառաջադիմութեան դպրոց ճիզվիտների մօտ։ — Առանց ամենայն կասկածանքի։ — Սա ի՞նչ յառաջադիմութիւն է արդեօք։ — Մի յառաջադիմութիւն, որ միայն պահպանված աւանդութիւն է, միայն հին սովորութեան գործադրութիւն է, սակայն ձեռք բերել այն, ինչ որ լաւ բան եղած է մեզանից յառաջ, կնշանակէ դէպի յառաջ գնալ։ Արդ ճիզվիտների դպրոցները գրեթէ միակ են, որտեղ աշակերտները կխաղան եւ կվազեն առաջվան պէս։ Մեր դպրոցների մէջ այլ եւս չգիտեն վազել։ Ահա այն կրթութիւնը, որ կցանկայի փոխ առնել գերապատիւ հայրերից, — ոտների կրթութիւն։ Ճշմարիտ է, որ նոցա աշակերտները ընդարձակ տեղ ունին, եւ մերերը չունին, բայց ընդարձակութիւն չէ, որ առաւելապէս պակաս է ձեզ, դուք սրբազան կրակ չունիք։ Հազիւ պատանեկութեան հասած, դուք ծանր եւ հանգիստ կդառնաք, դուք կզբօսնէք զոյգ զոյգ, դուք կխօսակցէք զոյգ զոյգ, աչալուրջ ուսուցիչների վերահսկողութեան տակ։ Ճիզվիտների մօտ ուսուցիչները կժողովեն իւրեանց լօդիկները եւ կվազվզեն աշակերտների հետ։

Մի խօսէք ինձ իբրեւ սորա փոխարէն մարմնամարզութեան մասին։ Ես շատ գին կդնեմ մարմնամարզութեան, բայց սա վարժութիւն է, սա խաղ չէ։ Խաղ՝ այս բառը ոսկեղէն տառերով պիտի գրված լինէր մանկութեան տասնաբանեայ օրէնքի մէջ։ Սա առողջութեան, ուրախութեան, նաեւ բարութեան համանիշ բառ է։

Ես տեսած եմ այսպիսի օրեր, ես բարձրացել եմ այսպիսի մի ամբիոն, որտեղ ինձ պիտի պսակով զարդարէին եւ պիտի համբուրէր ինձ նոյնպէս մի ծեր մարդ։ Ես լսեցի ինչպէս կհռչակվէր անունս Սորբոնի մեծ դահլիճի մէջ, ընդհանուր մրցանակցութեան ժամին։ Սակայն չեմ երդուի որ դպրոցի տարիներիս պահած իմ ամենակենդանի յիշատակը այն վառ եւ բորբոք բառերի անունով խաղի յիշատակ չլինի, երբ չորս կամ հինգ ժամ շարունակ կխաղէինք։ Ի՞նչ կեանք կղդայինք։ Ի՞նչպէս կշտապէր արիւնը ուրախ առատութեամբ երակներիս մէջ։ Ի՞նչպէս ազատ էր մեր դլուխը ամենայն հոգսերից։ Ի՞նչպէս կծիծաղէինք։ Ծիծաղել — դարձեալ ածանցական մի բառ, ոչ թէ քերականօրէն, այլ բարոյապէս, վաղել բայից։

Ես չեմ հասկանայ թէ հները, որոնք տաճարներ կկանգնեցնէին երիտասարդութեան, գեղեցկութեան, մինչեւ անգամ երկիւղին, նուիրած չլինէին մի տաճար ուրախութեանը . . . . ծիծաղին։ Սա այնքան հզօր մտերիմն է կեանքի մէջ։ Ես կարող էի յիշել ձեզ այնպիսի հռչակաւոր պատմական անձներ, որոնք գուցէ այնքան մեծ մարդիկ չէին լինի, եթէ այնքան շատ ծիծաղող չլինէին։ Կկարծէք թէ Հէնրիկոս Դը կկատարէր այն բոլորն, ինչ որ արեց, եթէ նա իւրեան օգնական չունենար ուրախութիւնը։ Երբ նորա բանկոնը ծակոտված կլինէր, երբ նորա թշնամիները նորա առաջ որոգայթներ կլարէին, երբ նորա բարեկամները կդաւաճանէին նորան, երբ նորա դանձերը կդատարկվէին. նա շատ անգամ մերձ իյուսահատութիւն կլինէր, բայց յանկարծ կցայտէր նորա շրթունքից մի ցայտ, որ կհեռացնէր բոլոր հոգսերը մի բարձրաձայն ծիծաղով։

Ես կհարցնէի մի օր պ. Լէսսէպսից թէ ինչ զօրութիւն պահպանեց նորան այնքան փորձութիւնների, դաւաճանութիւնների, թշնամութիւնների մէջ։ — Իմ ուրախութիւնս, պատասխանեց նա ինձ։ Ես յաղթեցի մարդիկներին եւ գործերին, ուրախ դէմք ցոյց տալով միշտ նոցա։ Վերջապէս մեր կենդանի մարդիկներից ամենահռչակաւորն, նա որի փառքին ոչինչ չպակասեց, եւ ոչ դրպարտութիւն եւ ապերախտութիւնն անգամ, կկարծէք թէ նա կկարողանար, եօթանասուն հինգ տարեկան հասակում, կատարել մեր աղատութեան քաջագործութիւնը, եթէ երբեմն ամենազարհուրելի փորձութիւնների մէջ նորա հարաւային ուրախութիւնը չհասցնէր նորան ուրախ բարձրաձայն ծիծաղ, — սա արեգակի մի ճառագայթ է, սա մաքուր օդի յանկարծաշունչ քամի է։ Ծիծաղեցէք ուրեմն, իմ բարեկամներ, ծիծաղեցէք

վազեցէք, խաղացէք քանի որ դուք դեռ եւս ձեր քանամեայ հասակի մէջ էք։ Դորանից ձեզ գուցէ մի բան կմնայ եօթանասնամեայ հասակի մէջ, եւ այն ձեզ կօգնէ նոյն տարիները անցուցանելու։ Ծիծաղը նման է լաւ գինու հոսանքին, սա ծերունիների կաթ է։

Դարձեալ մի քայլ եւ մեր շրջագայութեանը վերջ կլինի։ Այս անգամ մենք երկար ճանապարհ չունինք անելու։ Ձեզանից քանի մի քայլ միայն հեռի է վերջին կառարելագործութիւնը, որ ես կցանկամ ձեզ համար, դա Նապոլեոն դպրոցի մէջ է։ Նապոլեոն դպրոցը, ինչպէս յայտնի է ձեզ, Ֆրանսիայի մէջ արուեստական ուսման օրօրոց է։ Նա կկոչվէր նախ — Ֆրանսուա I-ի դպրոց։ Բայց ոչ Ֆրանսուա I, ոչ Նապոլեոն ոչինչ տրած չեն այնտեղ, միակ հիմնադիրն էր Դուբօ։ Իւր ձեռնարկութիւնը հաղիւ վերջացրած, այս բարեգործ մարդը մի միտք ծնեց, որ այնուհետեւ շատերը գործադրեցին, այն է իւր աշակերտներին թաղի աղքատների եւ թշուառների շարունակ այցելուներ շինել։ Նա գանձանակ սահմանեց իւր դպրոցի մէջ ողորմութիւն ժողովելու համար։ Ահա վերջին կրթութիւն, որ ես կկամենամ փոխադրել ձեր մէջ, — սրտի կրթութիւն։ Բայց Նապոլեոն դպրոցը կարող է սորա վերաբերմամբ դարձեալ մի ուրիշ եւ նշանաւոր դաս տալ ձեզ։ Դուք իհարկէ ձեզ ու ձեզ կհարցնէք, թէ սա ինչպէս կլինի, որ Դուբօի անունը, որը մի ազգային գործ է շինել, գրված չէ նոյն հիմնարկութեան վերա։ Սա մարդկային այն ապերախտութեան հետեւանք է, որը կարծես վայելչութիւն կհամարէ յափշտակել հնարագործներից նոցա գիւտերի փառքը։ Մեր դարի մեծ գիւտերից մին չկայ, որ կրէր նորա անունը, ով որ հնարել է նորան։ Ծաղիկ կորելը, շոգին, խլօրոֆօրմ, էլեկտրական հեռագիծ, լուսանկար, այսքան բարերարութիւններն անմահ եւ անանուն են։ Ես միայն մի բացառութիւն գիտեմ այս մոռացման կանոնից, սա անբաղդ Գիլլիոտէն գօկտօրի մասին է, որ մեռաւ կասեն վշտից, տեսնելով իւր անունը Գիլլիոտինին (գիլխատման մեքենայ) յատկացած։

Առանց նմանեցնելու Դուբօն մեծ հանճարներին, որոնց գիւտերը յիշեցի ես, կարելի է ասել, որ նա համարված է իւր ժամանակի բարերարների թիւում, որովհետեւ նա մի հորիզոն աւելի բացեց ընդհանուր լուսաւորութեանը։ Արդ կհաւատաք արդեօք, որքան տարի շարունակ ես լիզուր խընդրագործ կլինէի ամեն կառավարութիւններից, որոնք մին միւսին յաջորդեցին Ֆրանսիայի մէջ, որ աւելացնէին Դուբօի անունը Նապոլեոնի անունին, — ամեն տեղ եւ միշտ անյաջող գտնվեցայ։ Իզուր կյիշեցնէի ես այն բոլոր զոհաբերութիւնները, այն բոլոր ուժգնութիւնները, այն բոլոր պատերազմները, որ նոտեց նորան այս հիմնարկութիւնը։ Իզուր կկրկնէի թէ նա հարստացրել է Ֆրանսիան մի նոր ուսմամբ, թէ նա հարստացրել է Փարիզ քաղաքը մի աննման հաստատութեամբ, թէ տերութիւնը ոչ թէ շնորհ

պիտի անէր, այլ թէ պարտք պիտի վճարէր, թէ այս յաւերժացրած յիշատակը Գուբօի զաւակների միակ ժառանգութիւնն էր, թէ այս տան վերա գրված այս անունը կլինէր աշակերտների համար հայրենիքին անձն նուիրելու մի մշտնջենաւոր դաս, ոչինչ չեզաւ. ամեն տեղ միշտ ես մի գաղտնի, անանուն, դանդաղ, անյաղթելի ընդդիմութիւն գտայ, եւ ահա բարերարը զբրկված է, հեռացրած է իւր բարերարութենից: Օգուտ քաղեցէք այս օրինակից, իմ սիրելի բարեկամներ: Դուք, որ բաղդաւորութիւն ունիք ազատ դպրոց պահելու, դուք որ կարող էք միակ օրէնք ունենալ միայն ձեր խըզճմըտանքը եւ ձեր սիրտը, ամաչեցրէք նոցա, որոնցից կախումն ունի Շապտալ դպրոցը, նոցա ապերախտութեան համար ձեր երախտագիտութեամբ, եւ թող մի օր կարդան այս տան սեամի վերա. «Մօնժ — Գօդառ դպրոց»: Կըյուսամ որ սա շատ ուշ կլինի, որովհետեւ պ. Գօդառը ուրիշ միջոց չունի բարերարների թւում դասվելու, եւ մարդիկներին բարերարների կարգն կըդասեն միայն նոցա մահից յետոյ: Մինչեւ այն օրը, նա ժամանակ կունենայ ճշմարիտ եւ հաստատուն ֆրանսիացիների բազմաթիւ սերունդներ կրթելու:

Եթէ Ֆրանսիան շատ կարիքներ ունի, բարեբաղդաբար դուք պատրաստ էք, դուք, երիտասարդներ, դուք, Ֆրանսիայի ապագայ: Ձեր գործը դժուար է, բայց գեղեցիկ է: Ձեր ազգասիրութիւնը չէ կարող ունենալ մեր յափշտակութիւններ եւ ցնորքներ:

Մենք 1830 թուի սերունդս, կսիրէինք Ֆրանսիան հպարտութեամբ այն ամեն բանի համար, ինչ որ նա էր, դուք սիրեցէք նորան այն ամեն բանի համար, ինչ որ նա պիտի դառնայ: Բայց սորա համար յոյսերդ դուք միայն ձեզ կապեցէք: Նախախնամական մարդիկների ժամանակն անցաւ: Նոցա տեղ կթագաւորէ այն, ինչ որ Գերմանացիները իմաստուն խօսքով կասեն Հէր օմնէս, պարոն ամենքը: Ահա ձեր կանոնը, եւ պինդ տպաւորեցէք ձեր մտքում, որ եթէ «ճանաչ՛ր Թէղ» առանձին անձների առաջին բարոյական օրէնք է, մեծ ազգերի առաջին պարտքը «Ֆրկէր Թէղ» խօսքի մէջ է:

Խ. Վ. Ս.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ.

Մանկական հասակը պահանջում է խաղ և զբօսանք օրօրոցից սկսած մինչ ցհասուն հասակն, որ սիրում է իւր թանկագին հագուստներից, համադամ կերակուրներից և միրգերից աւելի, արհամարհում է ցուրտն ու տօթն, քաղցն և ծարաւն: Բնական է այս միտումն, այս ցանկութիւնն, որի դէմ արգելք դնօղն մեղանչում է նոյն իսկ բնութեան դէմ, լինելով պատճառ բազում վնասների նիւթապէս և բարոյապէս: Ուստի նա որ ծնօղ կամ խնամածու կամ ուսուցիչ լինելու կոչումն ունի, պարտաւոր է հաւասար մանուկի սննդի և ուսման հոգս տանել, նաև նորա խաղերի և զբօսանքի տեսակներին, և ընտրել խաղալու և զբօսանքի տեսակները, և արգելել միայն այն խաղերն, որոնք բարոյականութեան կամ առողջութեան վնասում են:

Այն մանուկն, որ դատապարտված է չխաղալ և չզբօսնել, լինում է վատառողջ, ապուշ և բթամիտ, մի խօսքով բնութեան վիժած և մարդկութեան անպիտան անդամ, յայտնի ճշմարտութիւն է, որ մանուկի ամենամեծ պատիժն է խաղից զրկվելն, որի համար բարեմիտ և խոհական ծնօղները կամ ուսուցիչները սահմանել են փոխանակ մարմնական պատիժների, զրկել ծոյլ և վատաբարոյ մանուկն իւր խաղերից, որը շատ անդամ յօժարում է քաղցած մնալ ժամերով, բայց փոքր ինչ միջոց չզրկվել իւր խաղից: Ուստի շատ հարկաւոր պիտոյքների մին է սահմանել ուսումնարանների մէջ զբօսալի խաղեր, իւրաքանչիւր $^{3}/_{4}$ ժամ դասառութիւնից յետոյ, $^{1}/_{4}$ ժամ բաց օդի մէջ ազատօրէն խաղալ և ապա $^{1}/_{4}$ ժամ ևս պարապել ուսումնական խաղով, որով զուարճանալով ուսանին և ուսանելով զուարճանան, որովհետեւ երբ ուսումն զբօսալի և զուարճալի եղանակով կաւանդվի, աշակերտներ յօժարութեամբ կուսանին և անմոռանալի տպաւորվում է նոցա մտքի մէջ գործնական մշակութեան միջոցով, որ է ուսումնական խաղով, որ պատրաստելու է հետևեալ կերպով:

Ուսուցիչն իւր դասախօսած առարկայի վերաբերեալ գիտելիքներից զանազան հարցեր հանելով, առանձին տոմսակների վերա գրելով խաղաթղթի (կարտի) ձևով, զբօսանքի ժամանակը դնում է սեղանի վերա, որի շուրջը հաւաքելով մի դասակարգի աշակերտներ սկսում են խաղանել. մին վեր է առնում մի տոմսակ, բարձր ձայնով կարդում է նորա վերա գրված հարցն, և երբ օրինաւոր կերպով պատասխանում է, իւր մօտն պահում է նոյն տոմսակը: Յետոյ միւս ընկերն վեր է առնում մի ուրիշ տոմսակ և հարցնում է ու պատասխանում է, բայց երբ չէ կարօղանում ճիշտ պատասխանել, միւս ընկերն ձեռքից առնելով ինքն է պատասխանում, այսպէս շարունակվում է խաղն, մինչև կաւարտվին տոմսակներն: Յետոյ իւրաքանչիւր ոք համարում է իւր տոմսակներն, որին շատ է, նա տարած է խաղն, իսկ որին սակաւ է, նա յաղթված է համարվում: Ուսուցիչն ներկայ լինելով խաղին, դիտում է, որ երբ պատահի մի հարց, որին չկարօղանան պատասխանել, ինքն պատասխանում է և պարզում է, ապա նոյն տոմսակը կրկին դնում է տա-

կաւին վեր չառած տոմսակների մէջ և շարունակել է տալիս խաղն։ Բայց պէտք է որ ուսուցիչը իւր դէմքի վերա ցոյց տայ քաղցրութեան ժպիտ և միանգամայն համարվի իբրև մի խաղընկեր։ Դժուարին հարցերն պարզելու է կամ կրկնելու է այնպիսի եղանակով, որ բովանդակէ իւր մէջ պատասխանին վերաբերեալ բառեր, օրինակ. երբ հարցն կլինի թէ «համաշխարհական ջրհեղեղն ինչի համար եղաւ է», եթէ խաղացողն չկարողանայ պատասխանել, հարցման ձևն փոխելով հարցնելու է ուսուցիչն. «Ինչ մարդիկ լարառալով, Այլենի ցեղի հետ խնամուն-ն անելու համար, Նոյոնաւ ինչպէս պատժեց», իսկոյն աշակերտի միտքն արթնալով պատասխանում է թէ «համաշխարհական ջրհեղեղով ընկեցան»։

Այս կերպ ոռոնական պէօսանէով և խաղով ծագում է աշակերտների մէջ ուսմամբ միմեանց յաղթելու դովելի եռանդ մի և նախանձ, որի փորձն ես ինքս տեսած եմ Կ. Պոլսի և Վանի ուսումնարանների մէջ գործադրելով, որի օգտակարութեանը վերա Խրիմեան Ա. Հայրիկը ընդարձակ գրել է 1864 թուի «Արծիւ Վասպուրականի» ամսագրի մէջ և յորդորել է Վանի ուսումնարանները հետևել մեզ, և որոնք հետևելով բաւական օգուտ տեսան աշակերտների մտաւոր զարգացմամբ։ Յետոյ Ռուսաստանի մէջ Էգիրի և Վաղարշապատի ծխական ուսումնարանների մէջ ևս շարունակելով յիշված ռոռոնական պէօսանէն, շարունակ նոյն օգուտն տեսնված է։ Ուստի առաջարկում եմ ծխական ուսումնարանների պատուելի ուսուցիչներին, զէթ իբրև մի փորձ հետևել մեզ, մանաւանդ նոքա որոնք չունին բուսաբանական պարտէզներ, զանազան կենդանիների տեսակներ կամ զէթ նոցա պատկերներ, թանգարաններ ևն, նոցա վերա ուսումնական զբօսանք և կրթութիւններ անել տալու համար, գոնէ իւրեանց աւանդած չոր և ցամաք դասերն հետաքրքրական հարցերով և պատասխաններով մշակելով կարող լինին փոքր ի շատէ մերձենալ իւրեանց նպատակին։ Աշակերտներն ինքնին բնական բերմամբ ստիպվում են հարցասիրել իւր դասընկերին իւր դաս առած առարկաների վերա միմեանց յաղթելու նպատակով, և շատ անգամ աշակերտներ յօժարակամ նուիրում են իւրեանց պարապ և զբօսանքի ժամերն այս կերպ ուսումնական խաղին։ Երբ առաջնակարգ աշակերտներ պարապին այս կերպ զբօսանքով, վերջին կարգի ուսանողներ ինքնին հարցման տոմսակներ են շինում պ. Տէր Ղևոնդեանի Ա. տարու մայրենի լեզուի առարկաների վերա օրինակ դասական խաղալիք, գործիք, սարք ևն. առարկաների, միմեանց հարցնում են և ազատօրէն պատասխանում են մանրամասն գիտելիքներով, և այս անում են առանց ուսուցչի հարկադրութեան։

Մենք ցանկանալով օգնել ծխական ուսումնարանների ուսուցիչներին և աշակերտներին, պատրաստել ենք ռոռոնական խաղաթերթիկ իւրաքանչիւր առարկայից 300 տոմսակ քերականութենից, 300 տոմ. քրիստոնէական վարդապետութենից, 300 տոմ. ընդհանուր պատմութենից, 300 տոմ. բնՔ

նական զիտութենից և աշխարհագրութենից, 300 տոմ. ս. պատմութենից։ Այս հարց ու պատասխանին հաւաքել ենք ամենընտիր դասագրքերից, որ այժմ ընդունված են և գործադրվում են շատ տեղեր։ Հարցերն հետաքրքրական են և պատասխաններն պարզ, բովանդակ և մաքուր լեզուով, որ խոստանում եմ նուիրել յօգուտ Բագուի Մարդասիրական Ընկերութեան, եթէ բարեհաճէ տպագրութեամբ ի լոյս ընծայել խաղաթերթի ձևով հաստ թղթի վերա։

Այս հարց ու պատասխանի խաղաթերթերն թէ իբրև դասագիրք կարելի է գործադրել ծխական ուսումնարանների մէջ և թէ միանգամայն իբրև ուսումնական զբօսանքի խաղաթերթերը։

Ս. ԳՆՈՒՆԻ.

Վաղարշապատ։

Ուրախութեամբ կհրատարակենք պ. Գնունու ներկայ յօդուածը, որ օգտաւէտ առաջարկութիւն կանէ և կդարձնենք սորան հոգևոր դպրոցների ուսուցիչների ուշքը։ Խմբ.

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԵՒ ՄԻՋԱԳԵՏՔԸ ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ ԴԱՐԵՐՈՒՄ.

Հին ժամանակներն արեւմտեան Ասիայի քաղաքական կեդրոնը Միջագետքն էր. գտնուելով շրջակայ աշխարհներն իւր հանգուստի մէջ միացնօղ մի հովտում, Միջագետքը շատ կանուխ ժամանակներից մի հզօր աշխարհակալութեան ասպարէզ էր եղած։ Այստեղ էր փորձում ամենայն մի աշխարհակալ իւր քաղաքական բաղդը. այստեղ էր ամենայն մի նոր քաղաքական ասպարէզ ելնող ազգի կամ ցեղի ցանկալի նպատակը։ Այսպէս մենք գիտենք, որ այստեղ ծնաւ Ասորեստանի աշխարհասասան պետութիւնը, որի փառաւոր յիշատակը կապուած է Նինոսի եւ Շամիրամի առասպելների հետ. այստեղ զօրացաւ գոռոզ Բաբիլոնը, Իսրայէլի գերութեան նախապատճառը եւ ազգերի ու աշխարհների հզօր լծադիրը. այստեղ կանգնեցաւ Աքէմէնիսեան թագաւորների գահը, որ օտար ազգերի արքայական ծանր թագերից էր կռանած. այստեղ յագեցուց իւր անհուն փառասիրութեան ծարաւն եւ մեծն Աղէքսանդրը, հելլենական քաղաքակրթութեան առաջին առաքեալն Արեւելքում. այստեղից դողացուցին Պարթեւներն աշխարհասասան Հռովմայեցիներին. այստեղից ջղակտոր արին Սասանեաններն եւ խարդախ Բիւզանդիային. ի վերջոյ այստեղ ծաղկեցաւ Արեւելքի քրիստոնէութեան գլխին սուր եւ հուր տեղացող Բաղդադ մայրաքաղաքը, ուր երկար դարեր ծածանում էր Մահմէտի քաղաքակրթութեան արիւնաթաթախ դրօշակը։

Քանի որ այսչափ մեծ էր Միջագետքի քաղաքական նշանակութիւնն իբրեւ կեդրոն, այնչափ ծանր էր եւ ազգերի ու աշխարհների վտանգը։ Այն ազգերը, որոնք իրենց երկրի աշխարհագրական պայմանների երեսից աւելի նուաստ վիճակի մէջ էին, չգտնուելով Միջագետքի քաղաքական սահմանների մէջ,

ստիպուած էին անդադար մաքառելու այնտեղ տիրապետող զօրութեան դէմ։ Եւ մենք գիտենք, որ հին Բակտրիացիք, Հրէաները, Մեդացիք, Պարսիկները եւ ի վերջոյ համայն Արեւմտեան Ասիայի մանր ազգերը երկար մաքառելուց յետոյ ընկնում են Միջագետքում իշխող զանազան աշխարհակալների տիրապետութեան ներքոյ։

Հայոց ազգը, որ Միջագետքի սահմանակից ազգերից մէկն էր հիւսիսային կողմից, նոյնպէս ազատ չմնաց այդ կեդրոնական զօրութեան ճնշումից. գտնուելով մի լեռնային բազմահովիտ երկրում, ուր սնանում էին Միջագետքին կեանք ու կենդանութիւն պարգեւող Տիգրիսի եւ Եփրատի ակունքը, ուր մթերուած էր ամենայն տեսակ հարստութիւն տնտեսական պիտոյքների, Հայաստան աշխարհը վաղուց արդէն հրապուրում էր Միջագետքի աշխարհակալներին իւր ծոցը։ Այստեղ նոքա թէեւ ձգտում էին թագաւորեցնելու իրենց զէնքի զօրութիւնը բազմադիմի քաղաքական եւ տնտեսական շահեր վաստակելու համար, սակայն նոցա զէնքը տկար էր եւ զօրութիւնը թոյլ՝ Հայոց լեռները թափանցելու եւ նոցա գագաթներում իրենց պետական դրօշակը խարսխելու. տկար էր այն պատճառով, որ նոցա դիմադրում էր մի լեռնական ազգ, որն առաջնորդուած էր Միջագետքի քաղաքականութեանն օտար սկզբունքներով. այդ ազգը սիրում էր իւր պարզ լեռներն եւ հովիտները եւ չէր ուզում մի որոգայթալից ու կաշկանդեալ քաղաքականութեան մէջ կեդրոնանալ։

Եթէ աչքի առնենք Հայոց պատմութեան դիւցազնական դարերը, մենք կըտեսնենք, որ Հայոց մաքառումը Միջագետքի աշխարհակալների դէմ նոյնչափ հին է, որչափ եւ նոյն իսկ Ասորեստանի եւ Բաբիլոնի թագաւորութիւնքը. սակայն մեզ համար որչափ այս հնութիւնն է նշանաւոր, այնչափ նշանաւոր է եւ այն եռանդը, որով Հայերը դիմադրում են օտարի ստէպ յարձակմունքներին։

Հայոց դիւցազնական աւանդութիւնների մէջ զանազան կերպ է հանդիսանում այս դիմադրութիւնը. որովհետեւ Միջագետքի աշխարհակալների աչքին էլ շատ փոփոխական է եղած Հայաստանի քաղաքական նշանակութիւնը։

Նախ որ «Հպարտացեալ բարուց» ապաստարան էր այս աշխարհը. այստեղ «ի մէջ ցրտութեան սառնամանեաց» ապաւինութիւն էր գտնում կեդրոնական իշխանութեան լուծը չընդունող հպատակը. այստեղ սնանում էր անօրէն իշխանութեան դէմ ազատութեան գաղափարը, որ մարմնացած է Հայկի պատմութեան մէջ. այդ գաղափարին էին հանդիպում եւ խորտակուում բռնակալութեան խորհուրդները, որոնք մարմնացած են Բէլի մէջ. եւ մենք գիտենք, որ եթէ Հայոց դիւցազնական աւանդութիւնը միայն մի Բէլի անուն է տալիս, Ասորեստանի սեպագիր յիշատակարանները մի քանի աշխարհակալների անուն

ենյիշում՝ *) որոնք թէեւ ձգտել են Հայաստանը նուաճելու՝ բայց չեն հասել իրենց նպատակին։ Այսպէս՝ Սարդանապալ Ա-ը՝ որ թագաւորում էր 900—868 թուին Ք. յա.՝ արշաւում է Հայաստան՝ այլ անյաջող է լինում նորա արշաւանքը. Սարդանապալի որդին եւ յաջորդը Դիւանուբար արքայն՝ որ թագաւորում էր 868—836 թ.՝ նոյնպէս արշաւում է Հայաստան. եւ որովհետեւ սեպագրութիւնքը ոչինչ չեն յիշում՝ ուստի պէտք է կարծել՝ որ սորա արշաւանքն էլ յաջողութիւն գըտած չէ։ Դիւանուբարի արշաւանքներից յետոյ լռում է սեպագրութիւնը. այսքանս դարձեալ յիշուում է՝ որ գրեթէ երկուհարիւր տարի Դիւանուբարից յետոյ՝ այսինքն 667 թուին Ք. յա. յարձակուում է Հայաստանի վերայ Ասորեստանի Սաոզդուքին թագաւորը։

Ի վերջոյ այսպիսի յարձակմունքներն այնքան ստէպ են կրկնուած՝ որ Ասորեստանի եւ Պարսկաստանի սեպագրութեանց մէջ գրեթէ ամենայն մի նոր թագաւոր պարտք է համարում ծանուցանելու՝ թէ արշաւեց Հայաստան՝ առաւ այս ինչ քաղաքը՝ պատժեց այս ինչ իշխանին կամ բերեց այսքան գերի ու աւար։ Այս ամենն ապացուցանում է՝ որ Հայոց աշխարհն իւր տեղագրութեամբ եւ իւր երկրի կազմութեամբ աւելի հակումն է ունեցել ազատ ինքնագլուխ ապրելու եւ իւր այդ հակումին համաձայն՝ չէ ուզեցել ճանաչել իւր գլխին ոչ մի այլ մեծ. այդ հակումն է՝ որ սնուցել է նորա մէջ եւ սէր դէպի ազատութիւն՝ որով եւ պահպանել է իւր ինքնուրոյն կեանքը. այնպէս որ շատ Բէլեր են եկել խլելու նորանից այդ ազատութիւնը՝ բայց նոցա դիակները միայն շատ անգամ զարդարում էին Հայոց աշխարհի «բարձրաւանդակ տեղերը՝ որպէս զի կանանցն ու որդւոցը տեսանելի լինին» իբրեւ խրատ ոգեւորութեան։

Երկրորդ՝ որ Հայաստանն հանդիսանում է մի դիւցազնական հայրենասիրութեան ասպարէզ. ուր մի բուռն ժողովուրդ եռանդով մաքառում է մի կանոնաւոր կազմակերպութիւն գըտած ահեղ զօրութեան դէմ՝ որովհետեւ «աւելի լաւ է համարում մեռնել քան թէ տեսնել՝ որ օտարի որդիքը կոխում են հայրենեաց սահմանները.» ուր հայրենասէրն Արամ ու «արանց քաջաց եւ աղեղնաւորաց» բազմութիւնը այնքան ահարկու են թշնամիներին՝ որ նոյն իսկ Նինոսի նման խրոխտ աշխարհակալների թշնամական խորհուրդներն եւս ի դերեւ են հանում։ Մի աւանդութիւն հաստատում է՝ թէ Նինոս կամենում էր Արամից առնել Բէլի մահուան վրէժը՝ որ իւր նախահայրն էր՝ սակայն լսելով Արամի սքանչագործութիւնքը եւ քաջասիրտ լինելը՝ ոչ միայն հրաժարուաւ այն մտքից՝ այլ մինչեւ անգամ իշխանութիւն տուեց նորան մարգարտէ պսակ կրելու եւ իւր երկրորդը կոչուելու։ Այս առասպելը ցոյց է տալիս՝ թէ Հայոց աշխարհն առանց գտնուելու Ասորեստանի պետու-

(*) Տես Abriss der Assyrischen Geschichte, von Raulinson, եր. 137։

թեան սահմանների մէջ՝ ունեցել է մի պատկառելի քաղաքական նշանակութիւն, բովանդակելով իւր մէջ այնպիսի մի դիմադրող զօրութիւն, որը դիւցազնական աւանդութիւններով մարմնացած է հայրենասէր Արամի մէջ:

Հայաստանի քաղաքական նշանակութիւնն՝ իբրեւ անկախ երկիր՝ վերոյգրեալներից զատ երեւում է եւ մի այլ աւանդութեան մէջ. Խորենացին ասում է «ութսուն ամօք աւելի կամ պակաս յառաջ քան զթագաւորութիւնն Նաբուգոդոնոսորայ էր եւ Սենեքերիմս կացեալ արքայ Ասորեստանի, որ զԵրուսաղէմ պաշարեաց առ Եղեկիայիւ Հրէից առաջնորդաւ, զոր սպանեալ որդւոց նորա Ադրամելայ եւ Սանասարայ՝ եկին փախստական ա-մէջ:» *) Նաբուգոդոնոսորը թագաւորում էր 604—561 թուին Ք. յա., իսկ Սենեքերիմը 691—674 թուին Ք. յա. **) ուրեմն եօթներորդ դարի ըսկիզբները դեռ Սաօղդուքինի արշաւանքներից յառաջ Հայաստանն այնպիսի ազատ վիճակի մէջ էր, որ Ասորեստանի հայրասպան արքայորդիք կարող էին ապաւինութիւն գտնել այդ երկրի մէջ, ուր Հայոց Նահապետը պարգեւում է Սանասարին Սիմ լեառը այնտեղ բնակութիւն հաստատելու:

Մի առասպել հաստատում է, որ Ասորեստանի զօրքերը մտած են Հայաստան. այդ է Շամիրամի եւ գեղեցիկ Արայի պատմութիւնը. սորա մէջ դարձեալ երեւում է Հայոց ազգի մաքառման անընկճելի ոգին եւ այն՝ մի ուրիշ կողմից. այստեղ գեղեցիկ Արայի պատմութեան մէջ մարմնացած է Հայի հաւատարմութեան գաղափարը դէպի իւր ընտանիքը. այստեղ պատկերացած է երկու միմեանցից տարբեր աշխարհատեսութիւն. եւ դիւցազնական աւանդութիւնն ընդունելով բարին եւ գեղեցիկը, մերժում է մի եւ նոյն ժամանակ պիղծը եւ գարշելին: Եւ ահա՛ որպիսի բացայայտութեամբ. այստեղ Հայոց չքնաղ լեռները, ծաղկաւէտ հովիտները, «ծիրանի ծովերի» սքանչելի տեսարանները եւ նահապետական կեանքի ոգեպարար քաղցրութիւնքը, որոնք առհասարակ պակաս էին Միջագետքին, ներկայացնում են Հայաստանն իբրեւ մի գեղեցկութեան պատկեր, որն Հայոց դիւցազնական աւանդութիւններով մարմնացած է գեղեցիկ Արայի պատմութեան մէջ: Ահա՛ այս գեղեցիկ Արայի առաջ մեծամեծ հրապոյրներ դնող «այրասիրան եւ կաթոտն Շամիրամ» Ասորեստանի չքնաղ թագուհին ձգտում է քանդելու այն ամուսնական սուրբ կապը, այն միակ սրբութեան տեղին, որ սերմն է բարի հասարակութեան, ձգտում է քանդելու Հայոց գերդաստանը, որպէս զի իւր պիղծ աշխարհատեսութեան օրէնքները թագաւորեցնէ նորա մէջ. սակայն այստեղ՝ այդ դիւթական միտումների առաջ չէ տկարանում առաքինի ժողովրդի առասպելը. մերժում է թագուհու մեծամեծ խոստումները,

(*) Տես Խոր. Գիրք Ա. Գլ. ԻԳ:

(**) Տես Ռոլինսոն.

անպտուղ է կացուցանում նորա բոլոր հրեշտակագնացութիւնքը, ստիպում է նորան կռուի դաշտ գալու եւ անձամբ փորձելու Հայի հաւատարմութիւնը դէպի իւր ընտանիքը. եւ ի՞ նչ հրաշք. այս Հայը, այս գեղեցիկ Արան մեռնում է պատերազմի դաշտի վերայ իւր հայրենիքի մէջ եւ կենդանւոյն չէ ընկնում Ասորեստանի զօրականների ձեռքը. չքնաղ Թագուհին իւր երազական բաղձանքը լցուցանելու համար հազիւ ուրեմն կարողանում է իւր հետ տանելու միայն մի մեռեալ դիակ . . .

Բայց նոյն աւանդութիւնը Շամիրամի ձեռքը տալով Հայոց երկիրը, բարեզարդել է տալիս Հայոց աշխարհը Ասորեստանի ճարտարապետութեամբ. այստեղ նոյն այրասիրան Շամիրամ ընտրում է մի քաղաքատեղի եւ «հրաման տայ բիւրուց եւ երկու հազար արանց. անարուեստից գործաւորաց յԱսորեստանեայց եւ յայլոց իշխեցելոց եւ վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի եւ քարի, պղնձոյ եւ երկաթի . . . ածել ի փափաքեալ տեղին:» Եւ այդ տասներկու հազար մշակն ու վեց հազար վարպետը Ասորեստանից գալով, Աղի ծովակի վերայ կանգնում են ամբարտակներ, ապարաններ, բուրաստաններ ու ծաղկոցներ եւ այլ այնպիսի շինութիւններ, որ «ամենայն Թագաւորականաց գործոց առաջին եւ վեհագոյն համարեալ:» Խօսք չկայ, որ բնութեամբ գեղեցիկ Հայաստանն ունէր կարօտութիւն եւ արուեստօրէն գեղեցկանալու. եւ ահա՛ ազգային աւանդութիւնը Շամիրամի պատմութեան մէջ է պատկերացնում իւր կարօտութիւնը. այդ աւանդութիւնից երեւում է, որ ինչպէս ամենայն տեղ, Հայաստանումն էլ առաջին անգամ ընդհանրացած էր Ասորեստանի ճարտարապետութիւնը:

Աւանդութիւնն ասում է, որ Շամիրամ Թագուհին Արայի տեղը նորա որդուն Արայեան Արային (Կարդոսին) կարգեց նահապետ Հայոց. սորանից երեւում է, թէ Հայաստանն ընկաւ Ասորեստանի իշխանութեան ներքոյ. սակայն այդ իշխանութիւնն անշուշտ բոլոր Հայաստանի վերայ չէր տարածուում, այլ միայն Հայոց հարաւային գաւառների վերայ. որովհետեւ Շամիրամը Վանայ ծովակից հիւսիս հասած չէ: Իսկ Արայեան Արայի որդին Անուշաւանը դարձեալ յիշատակուում է իբրեւ ազատ Նահապետ Հայոց:

Թէ Հայաստանն ընկած չէր Ասորեստանի տիրապետութեան ներքոյ, այդ երեւում է եւ այն բանից, որ Մարաց աշխարհը գլուխ քաշելով Ասորեստանի իշխանութիւնից, միանում է Հայոց հետ եւ կործանում է Սարդանապալ Բ. ի գահը, որ Թագաւորում էր 625—607 Թ. Ք. յա: *) Աւանդութիւնն այստեղ յիշում է մի նախարարի Պարոյր անունով, որն օգնելով Մարաց եւ կործանելով Ասորեստանի գահը, ինքն պսակուում է առաջին Թագաւոր Հայոց: Այս աւանդութիւնն ապացուցանում է, որ Հայոց աշխարհը

(*) Տես Ռոլինսոն:

եօթներորդ դարի վերջերում այնքան զօրեղ էր, որ միանալով մի այլ տէրութեան հետ, կարողացաւ փոխել Միջագետքի քաղաքական վիճակը եւ մի նոր կազմութիւն տալ նորան։ Այդ նոր կազմութեամբ Միջագետքը որքան եւ նոր զօրութիւն է առնում, կեդրոնանալով Բաբիլոնի մէջ, այնու սմենայնիւ Հայաստանի վերաբերութեամբ նա մնում է բարեկամ եւ դաշնակից։ եւ մենք տեսնում ենք, որ Նաբուգոդոնոսոր արքայն, որ թագաւորում էր 604—561 թ. Ք. յա. արշաւելով արեւմտեան աշխարհները եւ երկիրների ու տէրութիւնների տիրելով, գործում է Հայոց թագաւորի հետ միասին։ Հայոց աւանդութիւնն ասում է, որ երբ Նաբուգոդոնոսորն Իսրայէլի ժողովուրդը գերի վարեց, իւր գերիներից մի մասը, որոնց մէջն էր եւ Հրէից նշանաւոր իշխաններից մէկը Շամբատ անունով, պարգեւեց Պարոյրի յաջորդին Հրաչեայ թագաւորին։

Իսկ Նաբուգոդոնոսորից յետոյ, երբ Բաբիլոն քաղաքը բոլոր Միջագետքովն հանդերձ ընկնում է Կիւրոսի ձեռքը (538 թուին Ք. յա.), մենք տեսնում ենք, որ այս հզօր աշխարհակալի դաշնակիցն եւ օգնականն է նոյնպէս Հայոց թագաւորը Տիգրան Ա. որ միեւնոյն ժամանակ ահ եւ սարսափ էր եղած Մարաց թագաւորութեանը։

Այսպէս ուրեմն Հայոց պատմութեան գիւցազնական դարերում, այն ժամանակ, երբ Պաղեստինէն ու Փիւնիկիան, երբ Մարաց աշխարհն ու Փոքր Ասիան հարկատու էին Միջագետքի աշխարհակալներին, Հայաստանն իւր անօրինակ մաքառումով ազատ էր մնացել նոցա քաղաքական լծից։ իւր ազատութիւնը վայելում էր նա թէ երկրի աշխարհագրական անառիկ դրութեան շնորհիւ եւ թէ նահապետական բարքերի պարզութեան եւ հարազատութեան։ իւր բարոյական տոկունութեամբ, իւր ջերմ հայրենասիրութեամբ եւ իւր անօրինակ հաւատարմութեամբ դէպի իւր տունն ու իւր ընտանիքը՝ Հայ ազգը նոր չէ, որ զարմացնում է բոլոր աշխարհին։ Նորա այդ գովելի յատկութիւններն արդէն յայտնի էին դիւցազնական դարերի աշխարհակալներին, որոնց սրերը բթացան եւ բոլոր ռազմական մթերքն սպառեցան Հայոց լեռների հարաւային ստորոտներում, այլ Հայի մաքառման ոգին մնաց միշտ թարմ եւ անընկճելի եւ այն եղաւ միայն նորա մշտական ճակատագիրը։

Կ. Կ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՏՄՈՒՆՔ

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Կնոջ ունեցած դրութիւն այս կամ այն ժամանակում, այս կամ այն երկրում կպայմանաւորուի նոյն իսկ հասարակութեան մտաւոր և բարոյական դրութեամբ: Հին հեթանոս աշխարհի քաղաքակրթութիւնը զանազան մասերում անհամապատասխան էր ճշմարիտ հասկացողութիւններին մարդկային արժանաւորութեան մասին. ուստի և կնոջ դրութիւնը կռապաշտական աշխարհում չէր կարող գոհացուցիչ լինել: Բռնակալութիւնն և եսականութիւնը, բարոյազուրկ մեղկութիւնն և ուրիշ երևոյթներն, որոնք սեպհական էին հեթանոս աշխարհին, նաև նորա մշակուած զարգացման վերին աստիճանների վերայ, իւրեանց բոլոր զօրութեամբ կներգործէին կնոջ դրութեան և կրթութեան վերայ: Ամենուրեք, ուր կիշխէր Ֆիզիքական բիրտ ոյժը, կնոջը դժուարին էր մաքառել այր մարդի հետ, իսկ ուր տիրող էր հանդիսանում բարքի ապականութիւն, նա բոլորովին կկորցնէր իւր արժանաւորութիւնն և յարգուելու որ և իցէ իրաւունք:

Վայրենի վիճակում, մարդկային զարգացման ստորագոյն աստիճանների վերայ, ուր ինքն կրօնը հիմնուած էր բնութեան Ֆիզիքական ահացուցիչ զօրութիւններից զգացած ստրկացնող երկիւղի վերայ, և ուր հասարակական կազմակերպութիւնը կյենու զօրեղի իրաւունքի վերայ, կինը կկատարէ ամենատխուր դեր. նա չունի այդ հիմնական իրաւունքը, զօրեղի իրաւունքը. և տղամարդը կվարուի նորա հետ իբրև իրի հետ: Բայց քանի գնալով հասարակութիւնը դուրս կգայ պարզ կենդանական կեանքի վիճակից, նորա հետ ևս կսկսեն զարգանալ և ընտանեկան շահերն ու սէրը. կինը այն ժամանակ կստանայ վեհագոյն նշանակութիւն իբրև մայր և տան տիկին: Տղամարդը կսկսէ տածել յարգանք դէպի նա. նորա դրութիւնն աւելի ապահովուած կլինի: Այս մենք կտեսնենք, օրինակ, ցեղական կամ նահապետական կեանքի մէջ: Այս տեղ ընտանիքի անդամները միացած են իրանց գլխի հետ ոչ միայն դէպի նա իբրև դէպի ամենազօրեղն ունեցած արտաքին, անպայման հնազանդութեան պարտաւորութիւններովն, այլ և այն անկեղծ մտերմութեամբ, որ տեղի չէ տալի կոպիտ բռնութիւնների: Այսպիսի յարաբերութիւնների պատկերը բնութեան անմիջական ազդեցութեան ներքոյ կներկայացնէ մեզ Հոմերոսը. նորա մօտ մեծ է կնոջ նշանակութիւնը. կինը կերևի ներգործող ոչ միայն ընտանիքում իբրև մայր և սնուցիչ իւր զաւակների, ոչ միայն իբրև տանտիկին տնային բարեյարդարութեան վերայ հսկող, այլ կարտայայտէ արդէն իւր ազդեցութիւն և հասարակական կեանքի մէջ, տալով իւր կարծիքն, քաջալերելով տղամարդիկներին և պահպանելով նոցանում անյողդողդ հոգի: Պէնէլօպի, Անդրօմաքայի, Հեղինէի, Կլիտէմնէստրայի և ուրիշների Հոմերեան տիպերը լի են բարոյական բարձր արժանաւորութեամբ. նոյնպէս և Հոմերեան աստուածուհիների բնաւորութեան և գործունէութեան մէջ կարտափայլէ կանացի տարրի արգոյ նշանակութիւնը: Այս տեսակէտից կարե-

լի է նայել կնոջ նշանակութեան վերայ և հին գերմանական և սլաւոն ցեղերի մէջ: Հռովմէական մատենագրերը իբրև դաս իրանց անբարոյական հայրենակիցներին նկարագրելով Գերմանացիների պարզ և մաքուր բարքը, գովասանքով կխօսեն և գերմանացի կնոջ վերայ: Այսպէս Տացիտի վկայելով Գերմանացիներ կնայէին կնոջ վերայ իբրև մի նուիրական էակի. և այս պատճառով կնոջ կարծիքն ու խորհուրդը մեծ մասամբ ունէր կարեւոր նշանակութիւնը:

Մեր ժողովրդական աւանդութիւնների մէջ կինը շատ անգամ կերևի նախագուշակ աղջիկ, կախարդ:

Այս ամէնն շատ թէ սակաւ ցոյց կտայ այն, թէ կանացի տարրը երբեմն ինչ նշանակութիւն կարող է ստանալ նախնի հասարակութեան մէջ, որ կգտնուի զարգացման բարեյաջող պայմաններում: Բայց որովհետև նախնի հասարակութիւնները մեծ մասամբ հարկադրուած էին մշտատև պատերազմ մղել բնութեան և դրացիների դէմ, ուստի Ֆիզիքական ոյժն կերևի այդ դէպքում կեանքի գլխաւոր շարժիչը. և կանացի տարրը կամ ինքն իրան պիտի երկրորդական տեղ բռնէ, կամ երևի նոյնպէս արտաքին զօրութեան, նորան չտուած յատկութիւններով: Գերմանացի կանայք կաշխատէին յետ չմնալ տղամարդիկներից քաջութեան և պատերազմականութեան մէջ, ըստ որում այդ յատկութիւնները առանձնապէս յարգելի էին և անհրաժեշտ կհամարուէին բնութեան և դրացիների հետ շարունակաբար տուած կռուի պատճառով: Գերմանուհիները տանելով արշաւանքների բոլոր ծանրութիւնները, պատերազմի բոլոր զարհուրանքներն իրանց ամուսինների հետ միասին, շատ անգամ կզրգռէին կշարժէին վերջիններին դէպի կռիւ և դէպքն եկած ժամանակ իրանք ևս կսկսէին իբրև էդ վագրներ: Նոքա կատաղութեամբ կմորթէին ոչ միայն գերիներին, այլ և իրաններին, որոնք անպատուաբար կփախչէին պատերազմի դաշտից:

Գին դնելով միմիայն ազատ կեանքին, նոքա մանուկներին կզարկէին գետնով, կպաշտպանուէին ինչով որ կպատահէր, մինչև անգամ իրանց սեպհական մանուկներով, կընկնէին վիրաւորուած և սրաբեկ, կխեղդուէին իրանց սեպհական երկար մազերով, որ կենդանի չընկնեն թշնամիների ձեռքը: Գերմանուհիների նման և Սլաւոն կանայք կաշխատէին արտայայտել իրանց Ֆիզիքական ոյժը դիւցազնական շրջանում. այսպէս երբ որ Սվետոսլավը կպատերազմէր Բուլգարիայում, շատ կանայք կկռուէին իրանց մարդիկների հետ հաւասար: Այդ ժամանակամիջոցի ինչպէս Գերմանացիների, նոյնպէս և Սլաւոնների մօտ սէր առանց Ֆիզիքական ոյժի նշանակութիւն չունի. հարսը շատ անգամ պսակ մանելուց յառաջ պիտի ցոյց տար իւր ոյժը փեսայի հետ ըմբշամարտելով: *) Կնոջ այսպիսի անկանոն

(*) Չէ կարելի չցաւել, որ մեզանում դեռ ոչ ոք յանձն չառաւ հետազօտել դիւցաբանական եւ հին պատմական շրջանների Հայ կնոջ դրութիւնը: Յիրաւի առաջին անգամ պ. Ա.Դ. Երիցեան տուեց մեզ ռուս լեզուով այդ նիւթին վերաբերած մի փոքրիկ գրքոյկ "Историческое положеніе современной Армянки", բայց այդ աշխատութիւնը միանգամայն անհամապատասխան է իւր վերայ կրած վերնագրին: Սա-

զարգացումն չհամապատասխանելով նորա արժանաւորութեանն, անյուսալի էր նորա բարօրութեան համար: Իւր Ֆիզիքական ոյժը տղամարդի հետ ըմբշամարտելում արտայայտելու ձգտումն պէտքէ տար նորան կեղծ դրութիւն և վախճան կառնու ոչ յօգուտ նորա: Նորա մրցումն տղամարդի հետ այդ մասում անկարելի կերևի. հսկայութեան և հերոսութեան կատարելատիպը այսու ամենայնիւ կերևի ի դէմս տղամարդի և կնոջ: Գերմանացիների սկզբնական դրութեան մէջ կարտայայտուին կնոջ տառապակրութեան սկզբունք, որի հաստատութիւն կարող է լինել օրինակ այն փաստն, որ շատ գերմանացի ցեղեր մեռած մարդիկների հետ մահի կտային և նոցա կանանցը. համարելով նոցա իբրև ամուսինների սեպհականութիւն:

Պետական և քաղաքական սկզբունքների զարգանալու հետ միասին կնոջ ըստրկական վիճակն աւելի և աւելի կծան-

---

կայն այդ տեղ պակասութիւնը բազմաշխատ հեղինակի կողմից չէր, որ մի այդպիսի ծանր խնդիր ուսումնասիրելու համար կարօտ էր աղբիւրների: Հայ գրականութեանն ամենամեծ ծառայութիւն արած կլինէին այն պարոններն, որոնք յանձն առնէին ժողովել խնամով եւ զգուշութեամբ ժողովրդական զրոյցներն (հեքիաթներն), աւանդութիւններն եւ երգերն, որոնց շատերը ամենահին, ժամանակներից մինչեւ այսօր անկորուստ պահուելով աւանդապահ ռամիկների մէջ, պարզ ցոյց կտան Հայ կնոջ դրութիւնը ընտանեկան եւ հասարակական կեանքի մէջ վերոյիշեալ շրջաններում: Այս մասում երախտագիտութեան արժանի է Հ. Գ. Սրուանձտեանի «Գրոց ու Բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ» պատուական աշխատութիւնը, որի մէջ կտեսնենք, որ Հայ կինն իւր փեսացուին ձեռքը տալուց յառաջ դիւցազնական քաջութեան փորձեր անել կտայ: Սասունցի Դաւթի ամուսնութեան խնդրած հերոսուհին—Խանդուդ Խանումը բաւական չէ համարում նորան ուղարկել հանդունատիպ Դիւցազունների—Շըբըդան, Խորասական, Լօռայ Հըմզայ Փահլիվըներու գլխները բերելու, այլեւ երբ Դաւիթ «օր մը յար իրիկուն» կռուելով կսպանէ այդ դիւցազուններին—որոնց մէկի—Շըբըդանի «վերին ունք էնքան էր կախուի, որ եկեր էր հասե վըր սրտին; ու չանգալով կապեր էր ու զարկե ետեւանց վըր պառեկին, ըն մէկէլ Լօռայ Հըմզայ Փահլիվանի ներքեւիմուտ զգետին կաւլէր ու կերթէր» եւ երբ գլխներն առած յետ կդառնային կտեսնէին «որ մէկ ծիաւոր մէջ երկինք մէջ գետին խառկի գայ ընդիէն, կանչեց վըր Դաւիթ.» հը, զքըզի քո վախտին հաղըր պահէ

. . . պառեկի (քամակի) Թարաֆն առաւ Դաւիթից, կուրզ մի զարկեց: Դաւիթ Թամք դարտըկեց, կուրզն առաւ ծիու զանգուն տարաւ զետին. Դաւիթ մէկ լէ շիտկաւ վըր Թամքին, զկուրզ տարաւ որ զարկէր գլխուն ըդի գճաւ, ծամեր Թափաւ առջեւու. Դաւիթ ճանչցաւ որ Խանդուդ խանումն էր, ուր խըլըխ փոխեր էր եկե Դաւթի առէզ . . առան զուրար. զուրանց պսակն էրեցին, եօթն օր եօթն գիշեր հարսանիք էր»: Այսպէս են նաեւ այն զրոյցներն, որոնցում հարսնացուներն իրանց ձեռքը խնդրողներին առաջարկում են դնալ բերել «անմահական ջուր» անմահական խնձոր, եւլն. իսկ այդպիսի յանձնարարութիւնների կատարումն ամեն հասարակ մահկանացու չէր կարող յանձն առնել, ըստ որում, պէտք էր մինչեւ տեղը հասնելը անասելի անպատմելի վտանգների ենթարկուէր. նորան կըսպասէր ամեն մի քայլում մահ. մի տեղ խնձորին պահապան էր «քառասուն գլխանի դեւ. մի տեղ անքուն հսկող պահապան զօրք. մի ուրիշ տեղ կախարդական անմատչելի պարիսպ. որոնց ներսը «ոչ զուշն իրա թեւովն մտած կլինէր, ոչ օձն իրա պորտով» պարիսպներ, որոնց շատ բրգերը կառուցած կլինէին այդպիսի նպատակով ուղարկուած եւ այնտեղ սպանուած կտրիճների գլխներից: Յաջողութեամբ վերադարձողը իսկոյն կստանար քաջութիւն խնդրող աղջկան ձեռքը: Թ. Ծ.

բանայ։ Տղամարդը գործելով գլխաւորապէս արտաքին զօրութեան ասպարէզում, ընտանեկան կեանքի մէջ չէ զսպւում որ և իցէ բարոյական պարտաւորութիւններով և կներկայացնէ զօրեղի իրաւունքները։ Նորա բռնակալութիւնը կինխանակէ առաջին նահապետական յարաբերութիւններին և սորա հետ միասին, իբրև անխուսափելի հետեւանք յառաջ կգայ կնոջ բարոյական անկումն, որ կարող է հասնել սարսափելի ընդարձակութեան, ինչպէս կտեսնենք այդ, օրինակ, ասիական արևելքում։ Արևելքում կնոջ բաղդը և այժմ էս կմնայ այն, ինչ որ էր Քրիստոսի ծնունդից մի քանի դար յառաջ։ Նորածին աղջիկներին սպանելն կամ ի բաց ընկենուլն, նոցա կրթութեան մասին բոլորովին անփոյթ առնելն, կանանցը վաճառափոխոցում վաճառելն կանանոցների (հարէմների) համար։ Նոցա փակել—արգելելն և ծառայացնելն բոլորին, հօրից և մարդից սկսած մինչև որդիքներին և եղբայրներին, և ամենահեռաւոր ազգականներին — տղամարդիկներին, նոցա բաղմհամակին (պօլիգամական) դրութեան սարսափելի ճնշողութիւնը, թշուառ այրիների մեռած մարդիկների հետ միասին խարոյկի վերայ այրելն ևն, — այս ամենն այնպիսի փաստեր են, որոնց մասին շատ է դրուել և որոնց նկարագրին անձնատուր լինելը կլինէր ամենայն մեր նպատակի հատմամբ։ Մահմետական իմաստունները բացի իրանց բաղմաթիւ ասացուածներից, որոնցում կատորացնեն կնոջ, կտային և այսպիսի զրծնական խորհուրդ տղամարդիկներին, հիմնուելով ի հարկէ և Ղուրանի վերայ, և կենսական փորձի և աւանդութեան. «Եթէ կգտնուիս ամենազժուարին դրութեան մէջ, կասեն տղամարդին արևելեան խրատիչները, և չգիտես ինչ անել, ժողովիր քո բարեկամներին, հիւրասիրիր նորանց, բացատրիր նոցա բոլոր գործն և ընթացիր ինչպէս նոքա քեզ խորհուրդ կտան։ Եթէ բարեկամներ չունիս, խորհրդակցիր առաջին հանդիպողի հետ և կատարիր նորա խորհուրդը. բայց եթէ այդ վայրկենում չկան քեզ մօտ ոչ բարեկամներ ոչ տղամարդիկ, որոնց հետ կարողանայիր խորհրդակցել, այն ժամանակ հանդիսանօրէն բացատրիր բոլորը քո կնոջը, խնդրիր նորա խորհուրդը, լսիր համբերութեամբ բոլորն, ինչ որ նա քեզ պիտի ասէ, և բոլորովին նորա ասածի հակառակն արա։»

Այս կերպով կինն կերևի մինչև անգամ իբրև սկիզբն կատարելապէս հակառակ այն ամենին, ինչ որ բարի է, խոհեմ և սուրբ, նա տղամարդի հաճոյքի զոհն է և կհամարուի նորա իրական ըստացուածքի թուում։ Արևելքում հարբասութիւնն և տոհմական նշանաւորութիւնը կճանաչուի կանանոցում փակուած կանանց թուով։ Յունաստանն և Հռոմը—ներկայացուցիչներն հին քաղաքակրթութեան, որի մնացորդներից մինչև այժմ օգուտ կքաղէ լուսաւորեալ աշխարհն, կնոջ վերաբերութեամբ նոյնպէս անարդար կերևին։ Հին ազգերի կրօնական և ազգային կեանքի առանձնայատկութիւնն կերևի և հասարակական կեանքի մէջ։ Առաջին տեղը կբռնէ այստեղ ոչ անձն, այլ տէրութիւնը։ Սորանով արդէն նախապէս կսահմանուի կնոջ ճակատագիրն և դասաւորութիւնը։

Պետական կեանքում կինը, յայտնի կերեւի, չէ կանգնել և չէ կարող կանգնել տղամարդի հետ հաւասար. նա չէր համարւում ազատ, լիազօր քաղաքացիների հետ. և մանուկների, մշակ դասի և ստրուկների հետ միասին կկազմէր ստորին ցեղ մի: Սխալ կլինէր կարծել, որ հին դասական (կլասիքական) աշխարհի հասարակապետութիւնների մէջ մարդկային ազատութիւնն ունէր իւր փառաւոր տեղը: Կար արդարեւ ազատութիւն, բայց ազատութիւն միայն ընտրած սակաւամասնութեան, — ազատութիւն, որ ձեռք կբերուէր և կպահպանուէր ահագին բազմամասնութեան ստորութեան և ստրկութեան գնով: Հեռացրած լինելով հասարակական բոլոր գործերից, շատ քիչ անգամ տեսնելով իւր մարդին, որ բոլոր ժամանակն կանցուցանէր հրապարակում, յոյն կինը դատապարտուած էր փակուելու տանը առանձին մասում (ինէկէ): Սա, ինչպէս Քսենոֆոնն կասէ, պիտի նմանէր մայր-մեղուի, չպիտի դուրս գար տանից, պիտի վերահասու լինէր գերուհիներին և նոցա աշխատանքներին, պիտի կարգաւորած պահէր տնտեսութիւնը, կերակրէր մանուկներին ևլն:

Սանձ, աւել և բու — ահա խորհրդանշանը կանացի առաքինութիւնների — լռակացութեան, տնտեսութեան և հսկողութեան: Լինել մարդի բարեկամը կամ զրուցակիցը նա չէր կարող: Կորնելիոս Նեպոտի ասելով «Յունաստանում կնոջը կփակեն ծածուկ սենեակներում. նա մի բան չէ տեսնում, բացի իւր ամենամօտ ազգականներից և երբէք ներկայ չէ գտնւում խնջոյքների». կանանց համար արդելուած էին և Ոլիմպիական խաղերն, որոնք փառքի զլխաւոր ասպարէզն էին Յոյնի համար և կետրոն ազգային միութեան բոլոր յոյն ցեղերի համար: Կանանց բարոյական ստորութիւնը Յունաստանում այն աստիճանի կհասնէր, որ մինչև անգամ հրապարակ կհանէին վաճառելու օրէնքով — սահմանուած գնով: Տարօրինակ և անհաւատալի զուցէ երևի Յոյների այսպիսի յարաբերութիւնը դէպի կինը, Յոյների, որոնք ունէին մեծ ճաշակագիտական զգացումն և միշտ ձգտել են դէպի ներդաշնակ զարգացումն: Կանացի գողտրիկ և չքնաղ տարրի պակասութիւնը չէր կարող զգալի չլինել այդպիսի ժողովրդի մէջ. և ահա, իրրև բաւարարութիւն այդ զգացման, Յունաստանում Պերիկլէսի ժամանակներից կերևի մի առանձին դասակարգ կանանց, որոնք յայտնի էին հիտերաներ անունով: Բնութեամբ տաղանդաւոր, իւր դրութեամբ ստիպուած դէպի ինքնակրթութիւնը, գեղեցկատես, ուրախ և սրամիտ հիտերան կգրաւէր Յոյնին: Նա ազատօրէն մուտ կգործէր հասարակական կեանքի բոլոր շրջանների մէջ և ունէր նշանաւոր ազդեցութիւն: Պերիկլէսի նման պատմական նշանաւոր անունները կապուած են Ասպազիայի նման նշանաւոր հիտերաների անունների հետ: Այսպէս չնայելով իւր ճնշուած և ստորացած դրութեանը, կանացի տարրը երևան կհանէ իրան այսպէս թէ այնպէս և իւր ոյժով ձեռք կբերէ իր նշանակութիւն: Արևելքում այդ ճնշման արդիւնքը կլինին նենդաւորութիւն և խորամանկութիւն, որոնց օգնութեամբ տընարգել և հասարակական իրաւունքներից

զրկուած կինը շատ անգամ իւր ձեռքն կառնու մարդի ղեկը։ Յոյների մէջ կինը որպէս հիտերան, ձեռք կբերէ նշանաւոր ազդեցութիւն, բայց հանդէս դուրս գալով այդ դերում, նա չէր ապահովում իր իսկապէս բարոյական նշանակութիւնն և անսասան բարօրութիւնը։ Կանացի դեղեցկութիւնների և տաղանդների անջատումն կանացի առաքինութիւններից, կնոջ մտաւոր զարգացմանը—նորա բարոյական վսեմութիւնից, անջատումն, որը կտեսնեն յոյն հիտերաների մէջ, կտար մի խիստ անբնական հետևանք, որ յետոյ նոյն իսկ Յոյների զգուանքին և երգիծաբանութեանն ենթարկուեցաւ։

Այս կերպով, հիտերաների նշանակութիւնը չբարձրացրեց յոյն կնոջ նշանակութիւնն և նոցա իշխանութիւնն, որ հիմնուած էր միակողմանի սկզբունքների վերայ, կեղծ էր և անյարատև։ Փոքր ինչ տարբեր էր կնոջ դրութիւնը Սպարտայում։ Լիկուրգոսի տէրութիւնը աւելի կնմանէր զինուորական եղբայրութեան քան թէ քաղաքական հասարակութեան։ Բոլոր շահերը կկետրոնանային արտաքին Ֆիզիքական ոյժի, այրութեան և ճարպիկութեան զարգացման վերայ։ Համաձայն սորան և Սպարտուհին կկրթուի միևնոյն դաժան պայմանների ներքոյ։ Ինչպէս սպարտացին, սպարտուհին ևս կըվարժուէր մարմնամարզութեան, ըմբշամարտութեան, վազելու և բռնամարտութեան մէջ։ Նա չէր կարող ունենալ որ և իցէ կանացի անձնական շահեր։ Նա պիտի հրաժարուէր իւր կանացիութիւնից և ջանար լինել տղամարդի նման խստաբարոյ։ Այսպէս սպարտացի կնոջ համեմատաբար ազատ դրութիւնն և նորա հաւասարութիւնը տղամարդի հետ կըգնուէր կանացի բնութեան յատկութիւններից հրաժարուելով։ Այսպիսի երևոյթի անբնականութիւնը վաղ թէ ուշ պիտի ծնէր սպարտական կեանքի համար վնասազդեցիկ հետեւանքներ. այսպէս Արիստօտէլը կյանդիմանէ սպարտացի կանանց անսահման ինքնակամութեան, անժուժկալութեան և շռայլութեան համար. նորա կարծիքով սպարտուհիներն իբրև կանայք փչացան օրէնսդրութիւնից, ուստի և բնականաբար խանգարումն պատճառեցին հասարակական կեանքին, գործով չհաւասարելով տղամարդին, այլ օգուտ քաղելով իրանց ազատութիւնից ի վնաս իրանց և իրանց մարդիկների։ Զարմանալի է, որ հնութեան այդ մեծահամբաւ մտածողն կնոջ բնութեան և նշանակութեան վերայ ունեցած իւր սեպհական հայեացքով կհասնէր ծայրայեղութեան, որ վիրաւորական էր կանացի սեռի համար։ Իւր ժամանակի և ազգի ընդհանուր նախապաշարմունքից վեր կանգնած լինելով, Արիստօտէլ սաստիկ կզինուէր կանանցը ստրուկների հետ համահաւասարելու դէմ։ Բայց այսու ամենայնիւ նոցա բնութիւնն կընդունէր տղամարդի բնութիւնից շատ ցած և շատ վատթար։ Նա կասէր որ, թէև կինը ունենայ կամք ևս, բայց այդ կամքն առանց իրաւունքի է. թէև կինը ընդունակ ևս լինի առաքինութեան, բայց այդ առաքինութիւնն երբէք չէ կարող հաւասարուել ազատ քաղաքացու առաքինութեանն և միայն մի փոքր բանով կտարբերուի այն առաքինութիւնից, որին ընդունակ է ստրուկը։

Հռովմում չկային արևելեան կանանոցներ և ստրկութիւնն, չկար և յունական կնոջ անարգելութիւնը, բայց տաղտկալի հոգաբարձութիւնը կծանրանար այստեղ կնոջ վերայ նորա ամբողջ կեանքի ընթացքում: Հռովմայեցին յարգելով կնոջ միայն պետական նշանակութիւնը, որոշեց նորա դրութեան համար ամենախիստ իրաւաբանական կանոններ և սխմեց նորա անձի վերայ իր ծանր ձեռքը: Արդէն աղջկան նոյն իսկ ծնելու միջոցին հայրը կարող էր աքացելով հեռացնել և դուրս ձգել իբրև ապօրինի ծնունդ: Մինչև ամուսնութիւնն աղջիկը կմնար հօր լիազօր իշխանութեան ներքոյ: Ամուսնութեան մէջ ևս նա կպահէր ստորադրեալ և միշտ հպատակեալ դրութիւնն. ինչպէս յառաջ հայրը, նոյնպէս այժմ մարդն իրաւունք ունէր սպանել նորան, տանից դուրս ձգել կամ ուրիշին յանձնել:

Ճշմարիտ է, Հռոմայեցիների, ինչպէս ուրիշ ժողովուրդների մէջ ընտանեկան կեանքի բարոյական սկզբունքների գլխաւոր նշան կերևի յարգանք դէպի կնոջ անձնականութիւնն: Հռոմում կինը ըստրուկ չէր համարւում, այլ մի էակ, որ թէև համահաւասար չէր տղամարդին, բայց ունէր ուղղակի և ընդարձակ ազդեցութիւն ընտանեկան կեանքի ներքին կազմակերպութեան և հոգու վերայ, և մինչև իսկ շատ անգամ հասարակական գործերի ընթացքի վերայ. կյիշենք, որ հին Հռոմում թագաւորական իշխանութիւնը կործանելու ամենամօտ առիթն, ըստ աւանդութեան, կնոջ հասցրած անպատուութիւնն էր. (Կօլատինոսի կնոջ — Լուկրէցիային), որ տասնապետների անկման պատճառը Վիրգինիայի — ստորին ծագումն ունեցող կնոջ անարգութիւնն էր, որ Կօրիօլանոսի մայրը իւր որդու վերայ ունեցած ազդեցութեամբ ազատեց Հռոմը Վօլսկերի զարհուրելի յարձակումից, որ Գրակքոսներն իրանց քաղաքական վսեմ սխրագործութիւններով պարտական են իրանց մօր — Կօրնէլիայի ազդեցութեանն և դաստիարակութեանն ևն: Բայց վերջերում Հռոմում ամուսնութեան խիստ ձևերը սկսան կորցնել իրանց պարտաւորիչ զօրութիւնը, ամուսնութիւնը կորցրեց նախկին պետական և կրօնական նշանակութիւնը, և դարձաւ դատարկ ձևապահութիւն. երևան եկան ամուսնութեան քակմունք, որոնք յայտնի չէին հռոմէական պատմութեան առաջին ժամանակում, նորա հետ միասին և կնոջ արժանաւորութիւնը սկսաւ հետզհետէ աւելի ընկնել: Կինը սկսաւ վայելել արտաքին ազատութիւն, որը յառաջ չունէր, բայց այդ արտաքին անկախութիւնը (էմանցիպացիա) զարգացաւ ի վնաս նորա բարոյական արժանաւորութիւնների: Շուտով մոռացուեցան այն ժամանակներն, երբ մանելն ու գործելը կհամարէին կնոջ բարեմասնութիւններ. Հռոմում սակաւ էին Լուկրէցիայի, Կօրնէլիայի, Վիտուլիայի, Ագրիպպինայի և Կալպուրնիայի — Պլինիոսի կնոջ նըմանները. Այս օրինակները ցոյց կտային միայն, թէ Հռոմում կինը ինչ կարող էր լինել այն համեմատաբար բարեյաջող պայմանների մէջ, որոնցում նա կարգուած էր այնտեղ: Հռոմում կնոջ բոլոր ժամանակը, բոլոր ձգտմունքը նուիրուած էին պատմուճանին և զարդարանքին, ա-

մենայն միջոցներ գործ կդներ նա, որ աւելի գեղեցկութիւն տայ իրան և երկար պահպանէ այդ գեղեցկութիւնը, տանը ժամանակն ապարդիւն կորցնելով պաճուճանքի վերայ, և անփոյթ առնելով տնտեսութիւնն ու մանուկների կրթութիւնն, մատրօնաները մնացած ժամանակ կղուարճանային ներկայ լինելով թատրոնում յունական անբարոյական կատակերգութիւններին կամ կիրկէսում հանդիսատես կլինէին սուսերամարտիկների վայրենի ամարդի մենամարտութիւններին և կծափահարէին, երբ որ արիւնը վազելիս կերևէր։ Եւ այսպէս պճնասիրութեան հետ միասին զարգացան հռոմէական կընոջ մէջ վայրենի, կենդանական կրքեր, որոնց պատկերները կներկայացնէ Տակիտէս։ Ընտաւակ Մէսսալինայի, անագորոյն փոքր Ագրիպպինիայի, խորամանկ Պօպպէա Սաբինայի և ուրիշների անուններն ընդհանրական դարձան յայտնի անսանձ կրքեր նշանակելու համար։ Հռոմում վերջապէս կինը կորցրեց իւր բարոյական արժանաւորութեան վերջին մնացորդներն։ Համարեա թէ բոլոր այն ժամանակի հռոմէացի հեղինակները տեսան կնոջ ստորանկման վերջին աստիճանը և նրա կարագրեցին նոյնը իրանց դրուագներում։

Այսպէս հին կռապաշտական աշխարհը կտակեց իրանից յետոյ կամ ստրկութիւն կնոջ, որ կիսէր նորանից մարդկային բոլոր իրաւունքները, կամ թէ աղաութիւն բարոյական եղծման ձևով, որ կկործանէ կնոջ իսկական արժանաւորութիւնն և կոչնչացնէ դէպի նա եղած որ և էլ յարգանք։

Հին կնոջ բոլորովին տարբեր, ինքնագոյ տիպը կներկայացնէ երբայական ազգը։ Հրէութիւնը պատրաստութիւն էր դէպի քրիստոնէութիւնն և նորա հետ սերտ կապ ունէր։ Ս. գիրքը իւր առաջին էջերում նկարագրելով անմեղ մարդի նախակիզբն վիճակը ցոյց կտայ և կնոջ սկզբնական բարձր նշանակութիւնն և ընտանեկան յարաբերութիւնների մաքուր օրինակը։ Ցանցանքը բոլորովին կերպարանափոխեց նախնեղակ վիճակը, որի հետևանք եղաւ մարդի համար խիստ մաքառումն բնութեան հետ։ իսկ կնոջ համար մայրական ցաւեր և մարդին ստորադրութիւն։ «Եւ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» (Ծննդ. 3. 16.)։ Պատմութիւնն, ինչպէս արդէն մասամբ տեսանք, կներկայացնէ այդ վիճակի սխուր արդարացումն։ Միևնոյն վիճակի ներգործութեան ներքոյ կգտնուի և երբայեցի կինը։ Թէև նորա նշանակութիւնը Ս. գրքում միանգամայն այն չէ, ինչ որ արևելքի միւս մասերում և ընդհանրապէս հեթանոս աշխարհում։ Ըստ վարդապետութեան Ս. գրքի, Աստուծոյ երևսից ընկած, իւր մեղանչանքի բոլոր հետևանքներին ենթարկուած մարդը չզրկուեցաւ միւսանգամ կորցրած երջանկութիւնն ձեռք բերելու և կեանքի բարոյական նպատակը վերականգնելու յոյսից։ Նորան խոստացուեցաւ, թէ կինը, որ եղաւ նորա անկման պատճառ, ինքն առաջինը խաբուելով օձից, պիտի լինի և նորա վերականգման պատճառը։ «Զաւակ կնոջն ջախջախեսցէ զգլուխ օձին» (Ծննդ. 3. 15.)։ Այն միտքը թէ կինն եղաւ պատճառ անկման և մահի, և կինն

պիտի քաւէ իւր այդ մեղքը ծնելով Սորան, որ պիտի Յակոբակ օձի գլուխը, կամ բոլորովին առանձին բնաւորութիւն հրէաների Հայեացքին կնոջ վերայ և այդ ժողովրդի մէջ ունեցած նորա դրութեան վերայ։ Մթէ մայրութիւնը և ուրիշ աղդերում շատ անգամ կատար կնոջը նշանաւոր արտօնութիւններ, Հրէաների մէջ գլխաւորապէս կինը կգնահատուի այն չափով, որչափ նա ընդունակ է որդեծնութեան որչափ նա շատածին է, այնչափ շատ է և նորա պատիւն ու յարգանքը։ Բազմակնութիւնն, այս հայեացքին նայելով, թէև ընդհանրապէս կնոջ ստորացումն կլինի, բայց էր կարող համարուիլ պախարակելի գործ։ Ու յիրաւի մենք կտեսնենք, որ Մովսիսական օրէնքներում բազմակնութիւնն և մանաւանդ երկակնութիւնը ոչ մի տեղ դրականապէս արգելուած չէ։ Ընդհակառակն երկակնութիւնը դեռ մի քանի դէպքերում կհամարուի օրինական։ Բայց միևնոյն ժամանակ Հին կտակարանի մէջ ամէն տեղ կարելի է նկատել մեր վեմ նշանակութիւնն և խորին յարգանք դէպի նա. որ դիքների յարգանքը դէպի մայրը չպիտի նուազ լինի քան յարգանքը դէպի հայրը. մեր մորը չյարգելը երբեմն նաև ծանր հետևանքներ կունենար։ Ս. գրքում շատ տեղ կարելի է ցոյց տալ, ուր կորնդրուի յարգանք դէպի հայրն և մայրն, ուր մահ կսահմանուի չյարգելու համար, միով բանիւ ուր հանդէս կբերուի ծնողների որդիքների համար ունեցած վեմ ամուրժելի և տևական մի որբուղան նշանակութիւնը։

Եկ ամենայնկան փախանդրած յարաբերութիւնների մէջ հրէայ կինը միշտ կերևի մարդին հպատակ դրութեան մէջ։ Նորան պարտքն է հանգստացնել մարդին, աշխատել նորա համար, լինել սիրելի նորա համար։ Երբայական բարոյախօսներն, պահանջելով կնոջից մարդի անտրրրութեան համար զանազան բարոյական յատկութիւններ, միևնոյն ժամանակ չեն սահմանում մարդի համար որ և իցէ պարտաւորութիւններ կնոջ վերաբերութեամբ։ Յանձնելով կարծես կնոջ բաղդը մարդի կամքին։ Նոցանում ամենուրեք հետևողական և խստիւ պահանջում կերերոի առաջին մեղանչող կնոջն ուղղած սպառնալի վճռի միտքը։ «Այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ»։ Այս ամենի հետ միասին երբայեցի կնոջ արտաքին դրութիւնը բաւական ազատ էր. ոչ այնպէս ինչպէս արևելեան ուրիշ աղգերում կամ Յունաստանում։ Հրէայ կանայք և աղջիկները չէին ընկած միապաղաղ կանոնի անգործութեան, ծոյլ անգործութեան և պճնասիրութեան մէջ, ամենատրծունեայ աշխատանքները տան և տնտեսութեան մէջ և բոլոր ընտանիքի տնային բարեկեցութեան համար հարկաւորուած վաստակները կհամարուէին նոցա ուղղակի գործը։ Նորա կմանէին, կկարէին և կգործէին, հագուստներ կպատրաստէին, ջուր կբերին, հաց կթխէին, օտարներին ասպնջականութիւն ցոյց կտային, կհոգային հօտերի մասին։ Են. Պատահէր, որ երբայեցի կինը հանդէս կգար և հասարակական գործունէութեան մէջ, մարգարէուհու արժանաւորութեամբ կամ դատաւորների պաշտօնով։ Են. կանայք

շատ անգամ կարտայայտէին իրանց մասնակցութիւնը հասարակական մեծամեծ դիպուածների գործին։ Նոքա երգերով և ուրախութեամբ ճանապարհ կձգէին յաղթական զօրքերին, կփառաբանէին յաղթակալներին և։ Հրէաների աղջիկները կկրթուէին իրանց մօր մօտ հնազանդութեան և Աստուծոյ երկիւղի մէջ, նոցա կուսուցանէին զլխաւորապէս երդ, քնարահարութիւն և պար, յատկապէս նորա համար, որ նոքա աւելի նշանակութիւն և շքեղութիւն տային ժողովրդի կրօնական տօնախմբութիւններին։ Բացի դորանից աղջիկներին կհրահանգէին առանձին հոգատարութեամբ բոլոր տնային և կանացի աշխատանքների և ընդհանրապէս այն ամեն բանի մէջ, որ կվերաբերուէր կնոջ հոգսերին, թէ ընտանեկան կեանքի պահանջների և թէ հասարակական կեանքի շքեղութեան նկատմամբ։ Մենք կտեսնենք խորայէլեան կանանց մէջ կրօնական խորին զգացումն, որ կարօղ է ապացոյց լինել սիրոյ և անձնանուիրութեան վեհ հոգուն։ Այսպէս ուրեմն հրէայ կնոջ կեանքում մենք չենք գտնում այն ճնշողութիւնն, որը շատ թէ քիչ յատկանիշն կերևի կնոջ հին աշխարհում ունեցած դրութեան մէջ։ Հրէաների մէջ կտեսնենք, որ կինը համեմատաբար աւելի նշանակութիւն ունի ընտանիքում, թէև չենք տեսնում նորա մէջ կատարելապէս մարդկային իրաւունքներն և արժանաւորութիւններն։

Ա. Գ. Ս.

ՃՇՄԱՐԻՏ ԱԶԳԱՍԷՐԸ.

Շատ մարդիկ կան, որոնք կցանկան ազգասէր կոչվել. եւ սորա վերայ զարմանալու չենք. որովհետեւ բարբարոսներն անգամ փոյթ եւ ջանք ունին ազգասէր կոչվելու. բայց միթէ կարող են։ Ոչ երբէք. որովհետեւ ազգասիրութիւնն եւս ունի իր համար այն ահագին եւ մեծ կրակն. եւ այն վսեմ ու ծանր պարագաներն, որ ամեն մարդի գործը չէ նոցա վերայ պայծառ ու ճշմարիտ գաղափարներ կազմել, եւ թէ պարագաների հակառակութիւններին յաղթելով, նորա անթառամ պսակն իւր ճակատին վերայ հիւսել առ ի յիշատակ յաւիտենական գովեստի։

Վայր ի վերոյ կարծիքներով, շահասիրական յոյսերով, անմիտ խորհուրդներով եւ լոկ միայն խօսքով ազգասէրներ շատ կան. բայց այսպիսիներն ազգասէրի ստուերն անգամ չեն կարօղ համարվել. այլ թէ բարոյապէս մի մի զարհուրելի ահեղ գազանների կնմանեն, որոնց վախճանը շահասիրութիւնն եւ թեթեւամիտ փառասիրութիւնը լինելով արժանի չեն երբէք ազգասիրութեան անուն ժառանգել։ Նոքա միայն կարօղ են ազգասէրի պարծանքն եւ փառքն ոտանալ, որոնք ազգասիրութեան բովին մէջ եղած այն կրակից աւելի մեծ եւ ահագին կրակով վառված են, այսինքն ճշմարիտ եւ վեհանձն ազգասիրութեամբ, մաքուր եւ անշահասէր ազգասիրութեամբ, եւ

այսպէս վեհանձն եւ ճշմարիտ ազգասէրը ոչ թէ միայն իւր ոսկին եւ արծաթը չէ խնայում, այլ եւ իւր անգին կեանքն անգամ զոհ կդնէ իր ազգին համար։ Նա մշտնջենաւոր ուխտով կապված է իւր ազգին հետ ամենից առաւել եւ ամենից յառաջ հաստատուն պահելով իր հայրենի լեզուն, իր եկեղեցին եւ ազգային սովորութիւնները եւ աւանդութիւնները. Նա նպատակված է միշտ իւր ազգի օգտին եւ բարելաւութեան համար աշխատել, վերցնելու նորանից տեսակ տեսակ թշուառութիւնները, քրտինք թափել, տառապել, չարչարվել իւր փշրված վատնված ազգի բարեկարգութեան եւ պայծառութեան համար։ Նա երբէք չի յուսար իր արածին փոխարէնը իր ազգից ստանալու, եւ կամ նորանից գովեստ լսելու ակնկալութեան. այնպէս իմն երեւակայելով, որ իբր թէ իր բոլոր արած բարիքներն ազգի համար մեծ չարիքներ պիտի երեւին, ուստի կարծես թէ ազգասէրին անջնջելի ճակատագիրն է արհամարհվել իր ազգից, նախատվել, հալածվել, բամբասվել, զրպարտվել, քարկոծվել, բարոյապէս ի խաչ ելանել։ Այժմ ո՞վ կարող է չվկայել, որ թէ յիրաւի ազգասէր մարդին վառող եւ բորբոքող կրակներն շատ մեծ են։

Եւ ուրեմն, վշտակիր Ազգասէր, եւ առ, ու կարդա քո ազգի պատմութիւնը, եւ քեզ քաջալերող մխիթարութիւնները յիշատակելով որբիր աչքերիցդ այդ քաղցր արտասուքը, որ կթափեմ ոչ թէ քո կրած վշտերի եւ թշուառութիւնների համար, որոնք յօժար սրտով եւ ծայրագոյն վեհանձնութեամբ տարար եւ կտանես յաւիտեան, այլ անզգայ մարդիկների ունայնամտութեան եւ գաղանաբարոյութեան վերայ, որոնք չարաչար կյարձակէին յափրշտակել քո վեհ ճակատից ազգասիրութեան պսակն, եւ քո ազգի սիրոյն համար թափած քրտինքն եւս մարգարտազարդ թագ ձեւացաւ լուսապանծ ի նշան եւ ի ցոյց թէ սա է ազգասէրն, սա է ազգի զարդն, ազգի պարծանքը, ազգի կենդանութեան արշալոյսն։

Ահաւասիկ, այժմեան նոր եւ լուսաւոր դարի գեղեցիկ պատմագիրն եւս արդէն սկսեց զուարթ եւ ուրախ գրչով գրել անունդ իր անմահ գրքին վերայ. բայց ես մի քանի օրից յետոյ իմ ջախջախ քնարիկը ուսս առած, Դիոգէնեան ճրագը ձեռիս, երգելով պիտի շրջեմ «Արարատի» զաւակներիդ մէջ. այլ թէ ազգասիրութեան ջերմ սիրով ծլած ու ծաղկած քանիներն (այսինքն քանի՞ ազգասէրներ) արդեօք պիտի գտնեմ արժանաւոր գովեստներով եւ տառերով իմ յիշատակարանին մէջ արձանացուցանելու, տակաւին չգիտեմ։ Մինչդեռ չազգասիրութեան խաւարով ծածկված, չար խորհուրդներով մոլորված ու շահասէր գործերով նպատակված ազգաւերների կամ ազգացեցների խումբերն պատել են մեր շուրջ եւ կխանգարեն հայկական ազգի բարոյական ապագան, կխափանեն հայկական ազգի յառաջադիմութիւն։

ԱՐԵՒ.

Ամիրայ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆ.

Ապրել և խաբել, և կեղծաւորել,
Միշտ անարգ գործել և ստախօսել,
Վաղուան օր նոյնպէս, ինչպէս որ այսօր, —
Որտեղ ոյժ գտնեմ այս կեանքի համար:
Ապագան մութ է. իւրաքանչիւր օր
Մի է և նոյն է և է նոյնպէս չար:
Ոհ, կեանք անիծված, զզուեցրիր որքան, —
Արդ երբ կառնէ քեզ մթին գերեզման . .

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ.

Դարեւոր փորձերով ապացուցված անհակառակելի մի ճշմարտութիւն է, որ մի ազգ կրթվելու, զարգանալու, ճշմարտապէս լուսաւորվելու համար երկու միջոց ունի. ուսումնարան եւ պարբերական հրատարակութիւններ, (լրագիր, ամսագիր). Առաջինը մանուկներին, վերջինները հասուն մարդիկների համար: Այս հնամի ճշմարտութիւնը, որ ասիական ազգերէ ոմանք, իրանց կրօնի շնորհով տակաւին կհալածեն, հայ ազգը սկզբից ճանաչել, յարգել եւ սիրել է. ճշմարիտ է, Հայաստանի աշխարհագրական դիրքը մեծապէս վնասեց հայկական ազգի ընդհանրական զարգացմանը, ճշմարիտ է, հայ ժողովուրդը արիական ցեղերի գրեթէ հանապազօրեայ ասպատակութեան եւ արշաւանքի առիթով շատ յետ մնաց ընդհանուր ազգային լուսաւորութեան շաւղէն, սակայն ճակատագրի այս հարուածը չկարողացաւ իսպառ Հայի բնածին յատկութիւնները ի չիք դարձնել: Ասիայի ազգերի մէջ: որ մինչեւ այսօր յայտնեալ կրօնների մէջ ամենէն գերազանց, մարդկութեան ընդհանրութեան ճշմարիտ նպաստօղ, նորա իրաւունքի հաւասարութիւն, ազատութիւն, ընկերական միութիւն շնորհօղ, քրիստոնէական կրօնէն կարողացաւ շահվիլ, այդ միակ հայ ազգն էր: Այս ազգը կարծես յատկապէս ընտրված էր եւ է մարդկային իրաւունքի հաւասարութիւն չխոստովանող կրօններէ ժառանգաբար հալածվելու եւ տանջվելու, եւ սորանով ժամանակով լուսաւորութեան եւ քրիստոնէական կրօնի կարապետ լինելու Ասիայի մէջ:

Այս եւ սորա նման յոյսեր կտածվին հայ ազգի վերայ նայելով նորա բնածին հակմանը եւ սիրոյն դէպ ի կրթութիւնը եւ դէպ ի ընդհանուր մարդկային զարգացումը: Այս սէրը եւ հակումը տակաւ առ տակաւ արծարծվելով աշխարհի ամենայն անկիւնները ցրուած հայ ժողովրդի մէջ եւ ընդհանրանալու շաւղին մէջ մտնելով ներկայ Վեհափառ, ժողովրդասէր Կաթուղիկոսի Աթոռակալութեան օրով սաստաւ եւ կստանայ իւր կանոնաւոր ընթացքը: Վկայ են հայաբնակ քաղաքների եւ գիւղերի մէջ ներկայումս փայլօղ արական եւ օրիորդական դպրոցները, ժամանակակից պիտոյքների եւ պահանջման եթէ ոչ լիամասն յարմար եւ համընթաց, գէթ հետեւօղ եւ ճիգն թափօղ նորան հասնելու:

եւ եթէ մի կողմէն այս քարի եւ փրկաւէտ խրատներուն եւ շարժումներուն մի քանի ծառայասէր, չորանմիտ եւ սնամիտ անձերի գիշերագիմ գործունութիւնները մեծապէս վնասակար հնարելու եւ կրնան ազգային գործերուն գոյութիւնը տարարդիւն եւ ումպէտ դուցանել, Ջանալով միւս կողմէն բարեմիտ խոհական ազգային ընդհանուր կրթութեան եւ զարգացման ճշմարիտ համակրող սրտերը արիացնելու գործունութեամբ ոչինչ հոգ, փոյթ, քաջալերութիւն եւ զոհողութիւն չեն խնայեր նոցա թիւը շատացնելու եւ նոցա ժամանակի պահանջման ոգիին յարմարեցնելով, կանոնաւոր դպրութիւն տալով, ազգասիրական եւ նոցա գոյութեան անհրաժեշտ կարեւորութիւնը։

Եթէ մեր լուսաւորչաշարժ ազգի մէջ շղարեալ, դիմակաւորված, փասքուս, ազգացեց մարդուկներ ոչնինք, գաղտագողի հնարներով եւ խորամանկութեամբ ազգը խաղալելու իւր եկեղեցիէն խորթացնելու եւ նոյնոյով նորա գրաբեր գոյութեան հիմքը խախտելու գիշերաջան ճգնողներ ունինք եւ այնպէս, զոհողութեան Աստուծոյ, ճշմարիտ ազգասէրներ, անձնանուէր սրտեր, ազգի գոյութեան յարատեւութիւնը միակ ազգային եկեղեցու եւ դպրոցներու մէջ տեսնողներ ալ՝ թէ են։ Դպրոցներ, ազգային դպրոցներ ալ՝ թէ են։ Մեզ ահա այսպիսի կրաղաղակէ այսօր հայ հասարակութեան ընդհանուր եւ ընտիր մասը։ Եւ կիսնդայ, ըսելէ, իւր յանկուցիչներուն եւ վարիչներուն անվնասն սիրով եւ զգուանքով ղեկավարած պաշտպան եւ ջատագով պանելով իւր եկեղեցու այսօրուան գլխաւոր գլուխը, Վեհափառ եւ մեծապատիւ Կաթուղիկոսն Գէորգ Դ։

Հարկ կայ մի թէ այս Աղգասէր Հայրապետի ազգային երկնեւ ուսումնարանների գոյութեան նոցա կանոնաւոր ուղղութեան յարատեւութեան եւ օգտաւէտութեան համար տուած հոգը եւ ջանքը խօսքերով ապացուցանելու։ Հարկ կայ մի առ մի թուել այն ոգգասէր, նկանատարան անձերի անունները, որոնք նորա օրինակին եւ յորդորներէն խրախուսված հայ մանուկներուն զարգացման նպատակ դնելով դեղեցան, զոհելով կարողութեան չափով նշանաւոր գումարներ փոցված եւ քաջալերելի ազգային ուսումնարանների համար։ Մենք հարկ չենք տեսներ ազգային այս բարերարներուն անունները եւ գործերը թուել։ Մինչդեռ փրոզուութիւնը ինքն յայտնապէս վրաղաղակէ։

Այլ հարկ է համարինք փոքր թղթերկրութեամբ որպէս յայտնել ի գիտութիւն ազգակիցներուն որ մեր ազգային քարեբարներուն վեհ անունների վերայ այս օրերս պիտի աւելանայ մի ուրիշ անուն որի բարեգործութեան եղանակը մինչեւ այժմ եղածներէն կարի նոր բերեր։ Ընդարձակ, նոպատակայարմար եւ գոյամակողմանի պիտակներ, ինչպէս որ ինքը բարեգործութեան պատրաստող պարոնը յայտնեց մեզ մի քանի պատուելի անձերի ներկայութեամբ։

Այս պարոնը մի հարուստ տունի

երիտասարդ է։ Հաճի Գարապետ Շահ-նազարեանց քենի Հայաստանի զանակ։ 40 թոռնականին Գիտուի գեղանաշարժին զոհ գնացող թշուառներին սակաւաթիւ մնացորդներն են։ Սոքա առնելի բարեգործութեան ծրագիրը այս է։

Նախ՝ Խոշանքը՝ որ այժմեան թիւրը՝ ռուսական պատերազմի շրջնորհով Ռուսերի հզօր եւ ապահով պաշտպանութեան ներքոյ վիգանվի այդ մենարանը։ Մերն նախնի մի քանի թագաւորների յաւիտենական հանգուստեան վայրը։ Այդ այժմ խոպան անշուք եւ նորոգութեան վարօտ վանքը նորոգելով կառուցանել նորա պարսպի մէջ մի ազգային դպրոց ընդ անմիջական իշխանութեամբ Նորին Գերազանցութեան ընդհանուր Հայոց Կաթուղիկոսի։ Թէեւ մեր համոզմունքը այն է, որ քանի՝ ազգային ուսումնարանների թիւը հեռագիտե շատացնելով եւ սորանով ազգային նիւթական եւ բարոյական այժը բաժանելով՝ ունենալ չայն եւ այն անկիւնը ուսումնարան նիւթասէր եւ բարոյասէր բազմակարդաց, պիտի՝ թոյլ՝ անապահով խարխուլ հիմանց վերայ յենած՝ աւելի վերի դաւէտ եւ նպաստաւոր է եղածների տնտեսական եւ ուսումնական դրութիւնը բարւոքելու հոգ եւ խնամք տանել։ Սակայն ինչ Հնազարեանի բարեգործութեան ընդարձակ ծրագիրը արժէ բան մեզ առանձին խմն գիտութեան եւ անուն։

Երկրորդ՝ Կանուցանել վանքի պարսպի մէջ բազմաթիւ սենեակներ թէ ուխտաւորների եւ թէ այն հարուստ անձնների համար որոնք կամենան ամառը հովանաւոր քնութեան գեղեցիկ թեամբ զարդարված վայրը կարոշ էին հրկաւ կամ երեք ամիս հանգիստ կեանք վարել։ Վանքը իւր յատուկ կիրպանները ունենալով հնարաւորութիւն պիտի տայ իւր այցելուների՝ ինչպէս ուտելիքների՝ ինչպէս եւ կենսական պիտոյքների նեկուութիւն չբնաշել։ այլ եւ տան եւ հինգ օր բնակարանի համար վճար պիտի չառնի ամարանոց եկողները։ այլ եւ նորանոր նոր ժամանակ եւս վանքին ձրի պիտի տան կարթն, պանիր եւ մեծուն։

Երրորդ՝ ստանալով Հոգեւոր Բարձրագոյն Իշխանութենէն հաւատարմագիր վանքին պատկանեալ հողերն պահպանելու եւ եթէ փոքրած տեղեր կան նոցա դատաստանական կարգով յետ պահանջելու։ տալ նոցա շրջակայ ընակիչներին չահիլելու։ ստանալով նոցանից որոշեալ հատը։

Չորրորդ՝ Վանքը պիտի ունենայ իւր յատուկ աբօտատեղին եւ վարելահողը։ իւրաքանչիւր ընտանի կենդանիները՝ ձի, վարսակ, եզն, գոմէշ, չլինար եզն։

Այս ծրագրի 5, 6, 7 եւ 8 յօդուածներն մէջ բերել զանց կառնենք։ որովհետ կատարումն ապագայ հանգամանքներն թնխուն պիտի ունենայ։ Այն է առաջին՝ ձիերու կոմերու, ոչխարների ընտիր տեսակներ ձեռք բերել եւ նոցա եւրոպական ազգերի՝ սնուցածի պէս սնուցանելով եւ դարմանելով։ հնարաւորութիւն ունենալ ոչ միայն վանքի համար ընտանի կենդանիների ընտիր

ՄԷՆԷԿԱՅԻՑ.

Երիացիր, տըղաներին յարմար է ահ,
Իսկ դու քաջ ես, դնա տանջանքի, զրնա վատահ,

Երիացիր, թող ապաստան ցիրը քեզ տայ,
Բայց փառք պատիւ մեռնելու չեն ցցի վերայ:

Երիացիր, տանջանքի դէմ կդողայ ըստրուկ,—
Ճակատագրի հակառակորդ ես դու կըտրուկ:

Երիացիր, ճակատագիր է թշնամին
Վեհ անձներին, ահա և քեզ մատնեց մահին:

Երիացիր, մահի կգնաս, մերելով մահ,
Բայց սրանով դու փառաւոր կլինիս անմահ:

ՀԱՅԱՍԶՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏՔԻՑ ԻՒ ԵՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ԿԱՄԷՆԷՑ — ԳԴՈՒԼՍԹՈՒՄ

Ներկայ տեղեկութիւններս կհաղորդեմ ըստ յիշողութեանս առանց գրաւոր աղբիւրներ ունենալու առ ձեռն, ուստի ներելու է ինձ այսպիսի դէպքում տեղեկութիւններիս բնական համառօտութիւնը եւ թերութիւնը: Աշխատելու եմ առաջին յարմար միջոցում լրացնել տեղեկութիւններս կամ հասցնել խմբագրութեանդ արդէն մշակված եւ հրատարակված շարադրութիւններ այս նիւթիս վերաբերմամբ:

Երիացիր, տըղաներին յարմար է ահ,
Իսկ դու քաջ ես, դնա տանջանքի, զրնա վատահ,

Երիացիր, թող ապաստան ցիրը քեզ տայ,
Բայց փառք պատիւ մեռնելու չեն ցցի վերայ:

Երիացիր, տանջանքի դէմ կդողայ ըստրուկ,—
Ճակատագրի հակառակորդ ես դու կըտրուկ:

Երիացիր, ճակատագիր է թշնամին
Վեհ անձներին, ահա և քեզ մատնեց մահին:

Երիացիր, մահի կգնաս, մերելով մահ,
Բայց սրանով դու փառաւոր կլինիս անմահ:

տեսակներ որոշել, այլ եւ նոյն տեսակներէն վերածառելով արդիւնաբեր շահատարութիւն ձեռք բերել: 2 պանրպարծութեան, իւղ շինելու, տրհեստատներ կառուցանել նման եւրոպական ոճով: Այս ամենի ընդհանուր կառավարութեան հոգը եւ միջոցը յանձնուի տարաւնէ ինքն այս բարեգործութիւնների հիմնադիրն իւր կեանքի մնացորդը (նա տակաւին երիտասարդական առոյգ հասակի մէջ կգտնուի) նուիրելով իւր ծրագրած բարեգործութիւնների հիմնաւոր եւ հաստատուն մի ուղղութիւն տալուն, եւ նորան ապագայի որ եւ իցէ պատահմունքէն զերծ մնալուն:

Այս մասին յիշեալ երիտասարդ պարոնը մտադիր է շուտով խնդրամատոյց մնել Նորին Վեհ Օծութեան յայտնելով հանգամանօրէն իւր խորհած եւ մտածած բոլոր նախագիծը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Բ. ԲԱՂԱՋՆՈՒՆԻ.

Էջմիածին:

Դեռ ԺԵ. դարում քանի մի հազար Հայեր, փախչելով մահմետականների նեղութիւններից եւ սաստիկ կրօնական հալածանքներից, գնացած են Լեհաստան, բոլորովին յուսալով ի հարկէ խաղաղութիւն եւ պաշտպանութիւն գտնելու, իւրեանց թշուառութիւններից յետոյ, քրիստոնեայ տէրութեան մէջ: Գաղթականների մի մասը հաստատվեցաւ Կամէնեց քաղաքում (այժմ ռուսական Պօդօլսկեան նահանգի գլխաւոր քաղաք է, Գալիցիայի արեւելքում): Արքայական հրովարտակներով նոքա ստացան արտօնութիւններ մի կողմից ապահովելով նոցա ազգային սովորութիւնների, վարչութեան եւ կրօնի պահպանութիւնը, միւս կողմից տալով նոցա զանազան առեւտրական իրաւունքներ: Այս պատճառով հայկական հասարակութիւնն իւր դատաստան, իւր վարչութիւն (քաղաքային) եւ իւր եկեղեցիներ ունեցաւ: Թէ ինչ յարաբերութիւններ ունեցած են սկզբում Հայերը դէպի տեղացի Ռուսինները (Մալօրօսներ) եւ դէպի տիրող Լեհերը — մենք չգիտենք: Մեզ յայտնի է միայն, որ Կամէնեցի Հայերն արդէն III դարում կաթօլիկ եղան եւ մի եւ նոյն ժամանակ լեհացան: Նոցա լեհանալը արդէն փոքր ինչ մեկնված է տեղական հեղինակների ձեռով *), որտեղից ես հետեւեալը կքաղեմ: Լեհական կառավարութիւնն, ի հարկէ ճիզվիտների — պապութեան այս ջերմեռանդագոյն ծառաների եւ բոլոր ոչ-կաթօլիկների երդուեալ թշնամիների — յորդորմամբ կաշխատէր ամեն միջոցներով ներգործել օտարադաւանների վերա, նոյնպէս եւ Հայերի վերա, նոցա հռոմայական եկեղեցու հետ միացնելու: Կամէնեցի Հայերին կառաջարկվէր ազնուականութիւն, կքաջալերէին Հայերի պսակները կաթօլիկների հետ եւ այլն: Վերջին միջոցը շատ ձեռնտու էր բազմաթիւ լեհացի պաներին (ազնուականներին), որոնք սնանկացել էին կամ ազքատացել: Կամէնեցի Հայերը առեւտրական ժողովուրդ էին, ուստի կարողութեան տէր եւ հարուստ էին: Ինչ ասելու է, որ Հայի օրիորդի վերա պատկված Լեհացին միանգամայն կբարւոքէր իւր գործերը, իսկ իւր կրօնի համար հալածված Հայն կգտնէր նորա մէջ պաշտպան: Այսպէս թէ այնպէս Լեհացիները մասամբ այս ճանապարհով, մասամբ հալածանքներով կհասնէին իւրեանց նպատակին: Կամէնեցի Հայերի սակաւամասնութիւնը միայն, փախչելով կաթօլիկների նեղութիւններից, պահպանեց հայրական աւանդութիւնները եւ հաւատը, անցնելով Թիւրքիա եւ Մօլդավիա: Մնացածներն ամենքը դարձան կաթօլիկ եւ Լեհացի: Այժմ եւս տեղական աւանդութիւնը ցոյց կտայ երկու — երեք ընտանիք իբրեւ երբեմն Կամէնեցում ապրող Հայերի սերունդներ: Ես ինքս լաւ կճանաչեմ մի ընտանիք, որի մասին ժողովրդական ձայնը կասէ թէ նա հայկական ազգից կծագէ: Թուխ երես, սեաւ

(*) Տես «Կաթօլիկութեան պատմութիւն Պօդօլիայի մէջ», Մ. Սիմաշկէվիչի. Կամէնեց — Պօդօլսկ. 1673 թ:

գանգուր մազեր, երկար փոքր ինչ անկանոն քիթ, լայն եւ պերճ շրթունք արդարեւ կարտայայտեն Կամէնէցի Հայերի արդէն սպառած ջնջված սերունդների արեւելեան նախատիպը։

Սակայն որքան եւ կործանիչ լինէին ճիզվիտների եւ նոցա օգնական Լեհացիների միջոցները, ժամանակը պահպանած է հեռաւոր Ասիայից թշուառ գաղթականների — Հայերի — անկասկածելի հետքեր, որոնք կյուսային Կամէնէցում ազատ եւ հանգիստ ապրել։ Այս նշանները մինչեւ այսօր իսկ կպահպանվին այս քաղաքում։ Այսպէս մինչեւ այսօր եւս ժողովուրդը փողոցներից մինն կանուանէ Հայկական (այժմ Նահանգապետի փողոց)։ Մօտերումս, 30—40 տարի յառաջ, մի հրապարակ կար, որ կկոչվէր «Հայկական բազար» (այժմ Նահանգապետեան հրապարակ)։ Բայց առաւել նշանաւոր են այս նկատմամբ երկու Հայկական եկեղեցիներ, որոնք շատ լաւ պահպանված են ցայսօր։ Նոցանից մին այժմ կկոչվի Հայկական կօսցեօլ *) եւ կաթօլիկներին կպատկանի, միւս փոքր եկեղեցին, Ս. Նիկողայոսի անունով, Ռուսներին կըպատկանի։

Հայկական կօսցեօլը, Աստուածածնի վերափոխման անունով, շատ լաւ պահպանված եկեղեցի է, ընտիր բիւզանդական ճարտարապետութեան ձեւով, որի սեղանը արեւելեան կողմն է, որ այժմ եւս կպահպանվի, չնայելով որ կաթօլիկական սովորութեամբ սեղանը պիտի միշտ դարձած լինի դէպի արեւմուտքը։ Արեւմտեան գաւիթում, առանց բաժանվելու եկեղեցուց, կառուցված է զանգակատուն։ Եկեղեցու մուտքը սիրուն գաւթի մէջով է, աստիճաններով գետնից $2\frac{1}{2}$ արշին բարձրութեամբ։ Այն բոլոր տեղը, ուր կգտնվի այս եկեղեցին եւ եկեղեցական երկյարկեան տունը, շրջապատված է բարձր հին պարսպով, որ մասամբ բերդի պարիսպ կյիշեցնէ։ Եկեղեցու մէջ կայ երեք սեղան։ Ձախակողմեան սեղանի վերա կգտնվի Աստուածածնի հրաշագործ պատկեր։

Շաբաթ օրերը սովորաբար կգայ ժողովուրդը բազմութեամբ այն պատկերը համբուրելու։ Նորա տօնը օգոստոսի 15ին կլինի։ Նորա այժմեան աւագերէցը Պօդօլսկեան նահանգի կաթօլիկների դէկան կամ գործակալ կհամարվի։ Նորա մօտ կան տեղապահ քահանայ եւ երկու դպիր

Ս. Նիկողայոսի եկեղեցին կգտնվի 50 սաժէն հեռաւորութեամբ վերոյգրված կաթօլիկական կօսցեօլից։ Սա շատ փոքրիկ է, բաւական անպաճոյճ, մինչեւ անգամ աղքատ է, նաւի ձեւ ունենալով, տանիքի վերա հազիւ երեւեցող փոքրիկ գմբէթով։ Սակայն սորա շինութիւնն անկասկած առաջնից առաւել հին է։ Շատ կարելի է, որ սա Հայերից Կամէնէցում կառուցված առաջին եկեղեցիներից մին լինի։ Իսկ յետոյ, երբ Հայկական գաղթականները ամրացան նոր բնակատեղում, հարստացան, նոքա

(*) Կաթօլիկ Լեհացիները իւրեանց եկեղեցի ներ կօսցեօլ կկոչեն։

կառուցած են շքեղ եկեղեցի բիւզանդական ձեւով, որի մասին վերեւ ասվեցաւ։ Ս. Նիկողայոսի եկեղեցին այնքան փոքր է, որ նորա տօնին (մայիսի 9ին) սպասաւորող տեղական արքեպիսկոպոսի աթոռը կղետեղվի նոյն իսկ գրան մօտ, իսկ աղօթօղները կանգնած են սովորաբար եկեղեցական բակում։ Բոլոր երկարութիւնը 3—4 սաժէն է։ Պատերը չափազանց հաստ են եւ ամուր, այնպէս որ կարօղ են մնալ դեռ եւս ամբողջ դարեր առանց ամենայն նորոգութեան։ Ինձ կպատմէր եկեղեցու աւագերէցը, որ երբ վերջերումս հարկ եղաւ եկեղեցու մէջ շինած վառարանի համար պատը կոտրել, չափազանց դժուարութեամբ կարօղացած են պատը քանդել։ Ծածքը երկաթեայ է, նոր շինված։ Ներքուստ մի սեղան կայ։ Զախակողմեան պատի վերա կգտնվի Ս. Նիկողայոսի հրաշագործ պատկեր, որի առաջ ամեն հինգշաբաթի օրեր օրհներգութիւն կկարդան։ Նոյն պատի վերա, մի եւ կէս արշին բարձրութեամբ յատակից, կգտնվի կոփածոյ պատկեր «Հայկական Հայրապետի մի» — այսպէս մեկնեց ինձ եկեղեցու աւագերէցը։ Որքան կյիշեմ, այս պատկերը թեքված դրութեամբ է դէպի ձախ կողմը, քահանայապետական զգեստով եւ գաւազանով։

Պատկերը դուրս եկած է պատի մակերեւոյթից մօտ մի քառորդ եւ դէպի գլուխ գրեթէ կից է ս. Նիկողայոսի պատկերին։ Կայ արդեօք այնտեղ որեւ իցէ արձանագրութիւն — ես լաւ չեմ յիշում։ Եկեղեցին ներքուստ ներկված է դեղին գոյնով, նոյնպէս ի հարկէ եւ վերոյիշված պատկերը։ Դրան վերա կայ վերնատուն, որտեղ կղետեղվին երգեցօղներն ժամասացութեան միջոցին։ Յառաջագոյն վերնատունը կբարձրանային արտաքուստ լուսամտով, որի յառաջ կդնէին սանդուղդ, եւ միայն մօտերումս ներկայ աւագերէց Հ. Մովսէս Դօրօնօվիչը մուտքը եկեղեցու մէջից շինեց։ — Եկեղեցու մէջ մի դաս միայն կայ։ Եկեղեցու գաւիթը շատ մեծ է եկեղեցու համեմատութեամբ։ Մինչեւ վերջին ժամանակ այնտեղ սփռված էին բազմաթիւ գերեզմանական քարեր արձանագրութիւններով։ Այժմ նոյն քարերից շինված է քարայատակ պարոպի դռներից մինչեւ եկեղեցու դուռը։ Յաւալի է, որ ալեւոր լուռ մունջ հնութեան այս վկաներն շատ վայելուչ կերպով չեն գործածված։ Բացի նորանից որ նոքա ամեն օր անցորդների ոտի տակ կմաշվին, նոցա վերա եղած արձանագրութիւնները անդադար կջնջվին. ուստի հայկական հասարակութեան կեանքի վերջին մնացորդները Կամէնէցի մէջ յաւիտեան կոչնչանան։ Նոյնպիսի քարեր տեսած եմ հայկական Կօսցեօլի (վերափոխման եկեղեցու) աստիճանների վերա։ Եկեղեցու բակում նոր շինվեցաւ երեք սենեակից վայելուչ բնակարան քահանայի համար նախկին խրճթի փոխանակ, որտեղ կբնակէր սարկաւագը։ Եկեղեցու սպասաւորներն են. քահանայ, սարկաւագ դպիր եւ ժամկոչ։

Ահա սոքա են իրական յիշատակարաններ, որ ես կարօղացայ իմանալ եր-

կու եւ կէս տարի Կամէնէցի մէջ բնակելով։ Շատ կարելի է, որ կգտնվին ուրիշներն եւս, օրինակ, զանազան տներ եւ այլն, բայց ես չեմ պատահած։ Շատ ցանկալի կլինէր, որ իմ այս համառօտ նկատողութիւնը որ եւ իցէ հետաքրքրութիւն շարժէր եւ երեւան հանվէր Կամէնէց քաղաքում գտնված հայկական հնութիւնների առաւել ճիշտ եւ առաւել ընդարձակ հետազօտութիւնը։ Ես կարօղ եմ միայն խոստանալ, որ տեղական հնասէրները խնայելու չեն իւրեանց գործակցութիւնն այսպիսի նուիրական ձեռնարկութեան համար։

Բայց եւ այնպէս վերոյիշված յիշատակարաններով չեն վերջանում Կամէնէցի հայազն հասարակութեան կեանքի եւ գոյութեան բոլոր նշանները։ Նա գրաւոր փաստերն եւս թողած է այն է քանի մի արձանագրական մատեաններ, որոնք կպահվին Կիէվի մէջ Կիէվեան, Պօդօլսկեան եւ Վօլինսկեան նահանգների կենտրօնական կոչված դիւանում։ Այս դիւանը զետեղված է Կիէվի համալսարանի շինութեան մէջ։ Այս մատեանները ես տեսած եմ 7 տարի յառաջ, երբ դեռ եւս անծանօթ էի հայկական այբուբենին, բայց ինձ ասացին այնտեղ նոցա մասին թէ «հայկական արձանագրական մատեաններ են»։ Այժմ եւս մտաբերելով տառերի ձեւակերպութիւնը, կարօղ եմ վկայել, որ նոքա հայկական արձանագրեր էին։ Թէ ո՛րքան են, — չեմ կարօղ ճիշտ ասել։ Բայց թէ մինչեւ այժմ նոցա ոչ որ չէ քննած եւ հետազօտած, այս ես կհաստատեմ, այն ինչ ո՛րքան հետաքրքիր տեղեկութիւններ կարելի կլինէր այնտեղից քաղել։ Շատ կարելի է, որ այս արձանագրերի երեսների մէջ թաղված են շատ ծանր դէպքեր, գուցէ եւ մխիթարական երեւոյթներ Կամէնէցի Հայերի կեանքից, որոնք կյուսային այժմեան փոքր Ռուսիայի մէջ երկրորդ եւ ապահով հայրենիք գտնել։ Թող յուսանք, որ վերջապէս այս սակաւայայտ, կամ աւելի լաւ է ասեմ, բոլորովին անյայտ հնութեան պահարանները պիտի թափանցէ մի օր լոյսի մի ճառագայթ եւ որ եւ իցէ բարեխիղճ եւ գիտնականը բանաստեղծի խօսքի համեմատ.

«Դարեւոր փոշին հրովարտակներից մաքրելով, արդար զրոյցներ պիտի հաղորդէ աշխարհին» եւ, կաւելացնեմ իմ կողմից, պիտի յարուցանէ վաղուց մեռած անձներ, նկարագրելով նոցա կեանքը եւ գործունէութիւնը։ Եւ ո՛րքան հետաքրքիր տեղեկութիւններ կբովանդակվին միշտ այն յիշատակարանների մէջ, որոնց դեռ եւս չէ մօտեցել հետազօտօղի քննական ձեռը։

Տ. ԲԷԼԷՆԿԻ. (Դիմնազիօնի ուսուցիչ։)

Բագու։

ՄՏԱԾՄՈՒՆՔ ՏԱՐԻՆ ՎԵՐՋԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ·

Փոշու մի շամանդաղ վայր ընկաւ լեռներին վերայէն — ջուրի մի կաթիլ ովկիանոսը — մի տարի անցաւ յաւիտենականութիւններին անդունդը· կարան արդէն, ո՞ւր պիտի գտնեմ։

Մի տարի· յիրաւի ժամանակներին անվերջ կարգի մէջ երակի մի զարկ է միայն, բայց եւ նշանաւոր կտոր իմ կեանքս անցնելուն համար։ Ես իմ կեանքս տարիներով կհաշուեմ, եւ շատ այսպիսի տարիներ ապրելիք չունիմ այսուհետեւ։ Ո՞վ կարող է ինձ խօսք տալ եւ միամիտ անել, որ տասն երկու ամսէն յետոյ, ձմեռվան ձիւնի կտորներն իմ գերեզմանիս չորս կողմը չեն պատի։ Ի՛նչպէս մեծ, ինչպէս բոլորովին ծայրը չերեւցող մի ժամանակ կերեւի տարին, երբ որ դեռ նոր սկսուելու վերայ է, ինչպէս երկար կտեւէ անհաճոյ ձմեռն։ Ինչպէս երկար կթուի մեզ ժամանակը, մինչեւ որ կհասնենք գարնան իւր գեղեցիկ ծաղիկներով, եւ յետոյ աշնանը հունձքին եւ այգեկութքին։ Օրերի, ժամերի, պատահմունքների, դիպուածների, քաղցր կերպով անցուցած բոպէների, բարեկամութիւնների ծայրը չերեւիր։ Այնպէս կերեւի, որ տարին շատ ուշ եւ հազիւ կվերջանայ։

Բայց եւ ինչպէս շուտ թռչող, անցնող է, ինչպէս ոչինչ բան է մի տարին, երբ որ արդէն վերջին ենք հասել։ Ի՛նչ կեանք անցուցինք արդեօք այդ մի տարվան մէջ· ինչո՞վ աւելի է որ եւ իցէ մի երազէ։ Ինչ որ էլ, այժմ այն չեմ, ինչ որ այս տասն երկու ամսի մէջ վայելեցի եւ ունէի, այժմ ոչ կվայելեմ եւ ոչ ունիմ· ամէն բան անցաւ, եւ ինչ որ ինձ մնալու է, այն եւս նոյն կերպով շուտ պիտի թռչի, անցնի, երթայ։

Որչափ երկար ապրիմ, այնչափ պիտի կարճանայ կեանքս։ Որչափ հասակս աւելի կառնում, այնչափ փոքր պիտի մնայ անցնելու տարիներս։ Ի՛նչ որ տարիներով յառաջ պատահած է, ինձ այնպէս կերեւի, իբր թէ երեկուան օրն էր, օրվան մէջ կատարած գործս դեռ եւս աչքիս առաջն է· բարեկամներիս խօսքերը դեռ եւս ականջիս մէջն են։ Երբ որ կհաշուեմ թէ որչափ ժամանակ եղաւ, կզարմանամ, որ վերան շաբաթներ ու ամիսներ անցած են։ Ի՛նչպէս վաղանցիկ է ուրեմն տարին, ինչպէս շուտ կանցնի ուրեմն եւ իմ կեանքս· եւ երբ որ վերջանայ, ինձ այնպէս պիտի թուի, իբր թէ ամենեւին ապրած չեմ։ Եօթանասուն, ութսուն տարին մի շուքի պէս բան է եղեր։

Ինձ նման մարդիկներին շատերը կեանքի շուտ անցնելու վերայ նոյն զգացումն ունին, ինչպէս որ ես կզգամ։ Բայց կան մարդիկ, որ ուրախ են ամենայն բան շուտ անցնելուն վերայ, ոչ թէ կեանքէն զզուած լինելու պատճառով, այլ այն ցանկութեամբ, որ աւելի նոր նոր եւ իրանց անծանօթ, անյայտ բաներ կըտեսնեն։ Ի՛նչ որ տեսել են, իմացել են, այն նոցա այլ եւս այնչափ մեծ բան չերեւիր, քան թէ այն, ինչ որ կցանկանին տեսնել։ Կան մարդիկ, որ ապրելը կսիրեն հեռաքրքրութեան համար մի-

այն։ Միշտ նոցա անկուշտ աչքերը դէպի յառաջ է ուղղած, ուր որ երեւակայութեամբ ապրող բաղմատեսակ տգայամիտ մարդիկը իրանց ստեղծած, կամ խելքին դրած ակնկալութիւնների եւ յոյսերի դերերը կխաղան։ Անցածի վերայ յետ նայելու ցանկութիւն չունին. հազիւ ժամանակ կգտնեն ներկան վայելելու. միշտ նոր նոր բաներ կսարքեն իրանց մտքին մէջ։ Նոցա բոլոր կեանքը մշտական ակնկալութիւն է եւ անդուլ ձգտումն եւ հետամտութիւն հեռաւոր նպատակների հասնելու։ Եւ երբ որ կեանքները վերջանալու վերայ կլինի, իրանց անպտուղ աշխատութիւնէն յոգնած կընկնեն վայր եւ կցանկային նոր ապրել սկսել այն ժամանակ, երբ որ կեանքները վերջացած է արդէն։

Ցիրաւի, տգաներն, որ առանց անցած ժամանակին վերայ տխրելու, առանց ապագայի վերայ հոգալու, մտքով տանջուելու, միշտ ներկայն լիապէս կվայելեն, խիստ շատ հասակը առած մարդիկներէն աւելի լաւ գիտեն ապրել, վասն զի նոքա իսկական եւ բնական կերպով կապրին, բայց չափահաս մարդը միայն շատ եւ շատ անգամ անդուլ արուեստակութիւններով ու ջանքով կհեռանայ բնութեան պարզութենէն։ Տգաները դեռ եւս կվայելեն կեանքը այնպէս, ինչպէս որ իրանց տրուած է, լիակատար կերպով, բայց չափահաս մարդիկը խիստ շատ անգամ անսանձ կիրքերէ բռնուած նոյն կերպով կթռչին, կանցնին կեանքի բարիքների մօտէն, ինչ կերպով որ կեանքն եւս իրանց մօտէն թռչելով կանցնի, կերթայ։ Ուշադրութիւն չեն դարձներ երկնքի պարգեւների վերայ, որ իրանց բաժին ընկած է, եւ կվազեն անուշադիր կերպով կանցնեն ծարաւ այն ամենաառատ աղբիւրների մօտէն, որ իրանց մոտ կխոխոջան։ Ով որ միշտ նոր նպատակների ետեւէ է, երբէք նպատակի չհասնիր։

Կեանքի իսկական արուեստն ու ճարտարութիւնը, ինչպէս որ քրիստոնեայն ունի ու կբանեցնէ, այն ջանքի մէջ չէ, որ մասնաւորապէս աւելի լաւ վիճակի ետեւէ վազէ, այլ ներկայ հանգամանքը իրան եւ ուրիշներին մեծ բարւոյն համար գործ ածէ ամենալաւ կերպով։ Միայն այն ժամը, որ այժմ գիտես որ քո ձեռքդ է, այն ձեռքէդ պիտի չըփախցնես մի լաւ գործ կատարելու այդ իսկ միջոցին. ինչ որ ապագայն պիտի տայ քեզ, այն անյայտ է։ Մի արհամարհեր ամեն մի օրվան մաքուր վայելքը, որ քո կեանքիդ համար կըպարգեւէ քեզ Աստուած. եթէ ոչ — անկասկած ցանկութիւններով պիտի իջնես դու գերեզման։ Յոյս ունեցիր այս աւելի լաւ բարիներին, բայց ամենեին մի՛ մոռանար այն բարին, որ արդէն ունիս և տեսնես. մի՞դ բէր անցածը, և այս իսկ ընող ուրդ պայ տեղ, ներկայն աւելի լաւ գործ ածելու, քան ըն ընաց, անցած ժամանակը։ Այս քիչ բառերի մէջն է իմաստուն կերպով կեանք անցնելու ուղ եւ ծուծը։

Իմաստուն մարդը կապրի նորա համար, ինչ որ կար, ինչ որ կայ այժմ եւ ինչ որ պիտի լինի։ Անցած օրերի վոր ձերէն կքաղէ նա իրան համար զգուշութեան խրատ եւ միանգամայն սիրտ

կառնու ամենազնիւ կերպով բանեցնել այն, ինչ որ ներկայ ժամի մէջ իւր ձեռքն է։ Եւ այսօրվան օրը կրանեցնէ այնպէս չափաւոր կերպով, որ յետոյ ոչ մի ափսոսանք չկարողանայ ունենալ, այսօրվան օրը դաւն յիշատակը չլինի իւր համար, միտքը բերելով, որ խելացի կերպով չգործածեց։

Այսպէս եւ ես կցանկամ ուրեմն այս տարւոյ վերջին, որ ինձ ողորմածն Աստուած արժանի արաւ հասնել, աչքս անցածի, ներկայի եւ ապագայի վերայ ձգել, որ ոչ թէ կատարեալ, այլ գոնէ մի կատարելութեան ամենայն կերպով հետեւող մի մարդի պէս նոր տարիս մտնել կարողանամ։ Որա համար կկամենամ անցածի մասին իմ հաշիւս վերջացնել, որ լաւ հասկանամ այն, ինչ որ բաւական կորուստներէս ետքը ինձ մնացել է եւ ինչ որ մի աւելի լաւ ապագայի համար իմաստուն կերպով պիտի գործածեմ։

ԻԷՐԼ ԼԱՊԱՊԷԷ ԿԿԱՄԵՆԱՄ ԷՄ ԱՂԲԱՊՈՒԵԱՆՔ ԵՒ ԱՍՊԱՒԱՅՈՅ ՕՐՀՆՈՒԵԱՆՔՆ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿՐԱՒՈՐ ԻՆՉՊԷՍ ՀՆԻԼ։ Ժամանակի անհանգիստ անող փոփոխութիւնը ինձ եւս կարող է նեղ տեղ ձգել, մինչեւ ադքատութեան հասցնել, եթէ ես ունեցածիս վերայ անհոգ լինիմ, եթէ չբնեմ, ի՛նչքան է արդեօք իմ սեպհականութիւնս, եւ ունեցածէս ո՞րչափ պարտք եմ ուրիշներին։ Այսպիսի քընութիւնէն ես կիմանամ, որ ես իմ երկրաւոր դրութիւնս լաւացուցած եմ թէ վատացուցած, կիմանամ, այժմեան իմ ապրելուս կերպը, իմ ծախքս, ինչպէս որ արել եմ անցած տարւոյ մէջ, արդեօք անվախ շարունակել կարող եմ, թէ՞ արդեօք իմ շատ ծախքերս պիտի չափաւորեմ, եւ իմ ու ընտանիքի բարւոյն համար աւելի ճշդութիւն եւ խնայողութիւն պիտի անեմ։

Բայց այսքանով եւս չպիտի բաւականանամ, այլ լուրջ կերպով աւելի յառաջ պիտի գնեմ ոտս եւ հարցնեմ թէ որ բաներն են, առանց որոնց կարող էի ապրել, թէեւ սկիզբը առանց նոցա լինել ինձ դժուար եւս լինի, բայց պէտք է նոր տարւոյս սկիզբէն առանց այն բաների կառավարուիմ։ Եւ եթէ ես սկիզբները միայն չնչին բան եւս յետ ձգելու լինիմ, բայց եւ այնպէս մի վաստակ արած կլինիմ, որից անբաղդ եղբայրներին, որ առաւել եւս քիչ ունին քան թէ ես, կարող եմ մի բարիք անել։ Ինչ ուրախութիւն ինձ համար, որ ես Աստուծոյ ինձ տուածէն այնպիսի մի հաւատարիմ տնտեսութիւն անեմ, որ նորանով օտար մարդիկների բաղդաւորութեանն պատճառ եղած լինիմ։

Այս տարւոյ վերջը աչքիս առաջն է, ես իմ տունս կկամենամ կարգի դնել, եւ եթէ տարւոյս վերջը միանգամայն եւ իմ կեանքիս վերջն եւս լինի, կկամենամ որ իմ մահէս ետքը ամենայն բան այնպիսի կարգի մէջ թողնեմ, որ ինձմէ ետքը մնացողները ինձ օրհնելով յիշեն։ Կկամենամ որ այնպէս պատրաստ լինիմ ամենայն օր, որ կարողանամ առանց դժգոհ լինելու իմ այս անցաւոր աշխարհիս մէջ ունեցած դիրքիս վերայ դէպ ի անանց աշխարհը փոխվիլ։ Երբ որ Քրիս-

տոս խաչին վերայ իւր արիւնը կիթափէր, նա եւս կմոռանէր եւ հոգ կանէր դեռ եւս իւր լացող մօր համար, որ անտէր ջնայ աշխարհիս վերայ։

Տարւոյս վերջին տանս գործերը կարգի դնելն եւս հերիք չեմ համարեր. կկամենամ ինձ համար մի հանգարտ, հանգիստ ժամ, որ միայնանամ եւ մոռանամ իմ ամենայն հանգամանքներիս վերայ, որոնց մէջ կապրիմ. իմ բոլոր դրութիւնս քննեմ, եւ հասկանամ թէ ինչպէս ինձ նախատինք եղած գործերս այսու ետեւ պիտի ինձմէ հեռացնեմ, կամ ինչպէս ինձ անպատուութիւն բերող արարմունքէս պիտի ձեռք վերցնեմ եւ հրաժարուիմ բոլորովին։

Իրաւ է, իմ այժմեան հանգամանքներիս մէջ կան գառն բաներ. բայց մի տեղէն են։ Արդեօք ինձ Աստուծմէ ցուցած հանգամանքներին մէջն է յանցանքը, թէ իմ ճանապարհէ դուրս կեանքս եւ իմ որոխս կիրքերին են աւելի եւ աւելի պատճառ։ Կարօղ եմ արդեօք հանգամանքներս փոխել, թէ ես ինքս ինձ պիտի փոխեմ. այո, աւելի հաւանականն այս է. վասն զի ինչ դրութիւն եւս որ լինի իմ դրութիւնս, միշտ տանելի է, քանի որ ուրախ սիրտը կօգնէ ծանր բանը միասին տանելու։ Որ եւ իցէ փորձանքի նեղութիւն տուող եւ սիրտ կոտրող լինելը յառաջ կը գայ մարդիս այն զգացմունքէն, որ կիմացնէ իրան թէ իւր յանցանքն է պատճառ իր այդպիսի դրութեանն. իսկ այն փորձանքն, որ Աստուծմէ կգայ իրան փորձելու համար, անտրտունջ պիտի ընդունի։

Այս պատճառով կկամենամ տարւոյս վերջը ինքս ինձ հարցնել. Ինչպէս է դա՝ թէ պէտք է մարդիկ հեռ, որոնց հետ Աստուծոյ նախախնամութեամբ նստել ելլել է։ Այսօր աւելի բարեկամներ ունիս արդեօք, քան թէ մի տարի յառաջ ունէիր, հէ՞։ Արդեօք քո վարմունքովդ բաղդ ունեցար նոցա մէջ, որոնց հետ նիստ ու կաց ունիս, աւելի հաւատարմութիւն, աւելի սէր վաստակել, քան թէ յառաջն կվայելէիր։ Կարօղ ես ուրախ լինել, որ քո քաղաքակիցներդ, քո մեծերդ, քո ազգականներդ, քո ստորադրեալներդ քեզ կպատուեն։ Թէ արդեօք այս այնտեղ կտեսնես դէպի քեզ վատ կարծիք, կասկածանք, պաղութիւն, մինչեւ անգամ կարելի է, յայտնի թշնամութիւն։ Մանաւանդ հարցուր ինքդ քեզ. ինչպէս են քեզ հետ քո ընտանիքդ, քո մերձաւորներդ, արդեօք պատուով ու սիրով քո չորս կողմդ կգան, կշարվի՞ն թէ կզգոս արդեօք, որ քեզնէ հեռու կքաշուին։ Արդեօք մի մեծ դժգոհութիւն արդէն եղած է ձեր մէջ։ — Այդպիսի դիպուածներուն մէջ աւելի այն ճանապարհը կբռնենք, որ դժգոհութեան ամենայն մեղքը բոլորովին ուրիշների վերայ բարձենք ու մեզ անմեղ եւ արդար կհամարինք, բայց ինչպէս շատ անգամ կյարմարի Քրիստոսի խմաստուն խօսքը թէ «Դու կտեսնես շիւղը քո եղբօրդ աչքի մէջ, եւ քո աչքիդ մէջ եղած գերանը չերեւար քեզ»։ Լաւ քննէ ինքդ քեզ եւ անշուշտ կգտնես, որ քո իսկ վարմունքը, քեզ արդար ու ուղիղ ճանաչելդ, քո ու-

նայն հպարտութիւնդ, կամ քո անտանելի ինքնասիրութիւնդ առաջին պատճառն եղան դժգոհութեան, կամ նորա մեծանալուն։ Երբէք պէտք չէ պահանջենք, որ ուրիշները միշտ մեր կամքով շարժին, որ նոքա մեր պակասութիւնները տանեն, մեր սխալներին աչք փակեն, մեր վատութիւնները համբերութեամբ ընդունին։ Ի՞նչ կցանես, այն կհնձես. կկամենաս քաղցր եւ բարեկամաբար քեզ հետ վարուին, դու ինքդ քաղցր եւ հեզահոգի եղիր. կը կամենաս պատիւ վաստակել, այդ պատուին արժանացուր քեզ։ ակամայ պատիւը պատիւ չէ, եթէ տրուի եւս, սրտէ պիտի բղխի արժանի եղողին համար միայն։ — Այս տարուոյս վերջին լաւ մտածէ, ով քրիստոնեայ, որ այս մասին եւս հաշիւ ու համար պիտի տաս։ Անցածը թող մոռացուի, թող ներուի։ Վրէժխնդրութեան հոգւով մի լցուիր, սիրոյ հոգին թող քո սիրտդ լցնէ։ Եթէ հնար կայ, կասէ մեզ սուրբ Առաքեալն Պօղոս, եթէ կարելի է, ամենին հետ խաղաղ ապրեցէք։ Զարէն մի յաղթուիր, հապա չարին յաղթէ բարիով։

Այո, ոչ միայն իմ արտաքին հանգամանքներս պարտքս է քննել այս տարուոյս վերջին հասնելով, այլ եւ ախ դնել կկամենամ Լոպոնոյ առաջին էմ ոչ դա։ Կկամենամ քննել թէ ինչպէս է իմ ընութիւնս. կկամենամ հասկանալ թէ արդեօք իմ մտածմունքս եւ գործս Աստուծոյ առաջեւ ընդունելի էին։ Զեռքս սրտիս վերայ դնեմ ու հարցնեմ ինքս ինձ թէ ի՞նչպէս եմ ես. լաւ կմտածեմ. արդեօք եւ լաւ կգործեմ։ Ամեն տեղ գտնուող Աստուածը մօտիկ է եւ ինձ, ամեն բան տեսնող Աստուածը իմ ներքին կողմս եւս կը տեսնէ։ Կարո՞ղ ես արդեօք նորա առաջեւը կեղծ բան ցոյց տալ, կամ կեղծել նորա առաջեւ, որ իմ սրտիս մէջը կընայի եւ աւելի պարզ կտեսնէ ինձ, քան թէ ես մի կաթիլ ամենապարզ ջուրը։

Կկամենամ դատաստան անել իմ անպիտան եւ դէպի իմ կորուստս ինձ տանող սովորութիւններիս վերայ, իմ սխալանքներիս վերայ, իմ շատ ու շատ անարգար հակմունքիս եւ ծածուկ մեղքերիս վերայ։ Կկամենամ որ դատաստան անեմ, քանի որ Աստուած դատաւորը դատաստան արած չէ նոցա վերայ։ Կկամենամ պարզ իմանամ արդեօք պակասութիւն, կամ թուլութիւն կայ իմ մէջս. կկամենամ, որ իմ դատապարտելի կողմերս, առանց ինքս ինձ խնայելու, իմ աչքիս առաջեւ հանեմ, դնեմ, որ լաւ տեսնեմ ինքս ինձ եւ ամենայն իմ պակասութիւններս ու վատ կողմերս։ Ասա բարձր ձայնով, ով ներքին դատաւոր, արդար խրճմտանք, իմ մեղաւորութիւնս զգացող — ահա Աստուած կլսէ։

Վերջապէս այն եւս պիտի լինի իմ կողմանէ, որ ես լաւ իմանամ իմ գինս, իմ արժէքս եւ ինքս ինձ աւելի գին չդնեմ, աւելի ինձ արժէք չտամ, քան թէ ինչքան որ պէտք է եւ ինչքան որ իսկապէս կարժէմ ես, պիտի հասկացնեմ ինձ թէ ինչ ինչ բաների մէջ արժանաւոր կերպով շարժած, գործ կա-

տարած եմ, եւ ինչ տեղ անարժան, կամ անյաջող դտնուած եմ։ Պէտք է ճանաչեմ եւ հաստատեմ, թէ ինչ բաներ էին իմ կեանքս գոհ կերպով անցնելու արգելքները, կամ իմ հանգըստութիւնս խանգարողները որոնք էին։ Արդեօք եկող տարուան մէջն ես նոցա գերին պիտի լինիմ, եկող տարուան մէջն ես հին ճանապարհներովն պիտի յառաջ երթամ, որ ինձ վերջապէս անկասկած դէպի կորուստը պիտի տանեն։ Չեմ կարող ինքս ինձմէ ծածկել թագցնել, որ, եթէ իմ անցած կեանքիս աւելի մեծ մասի մէջ դժգոհ եմ եղել, ասենք ճշմարիտը, եթէ որ յիրաւի անբաղդ եմ եղել, պատճառն իմ իսկ թուլութիւններս են եղել։ Անմտութեամբ աւելի մեծ գին ու արժէք տրուած եմ այն բաներին, որ մնալու չէ, անցաւոր է. աւելի քիչ անգամ մտածած եմ Աստուծոյ եւ իմ յաւիտենական կոչման եւ նշանակութեանս վերայ։ Սիրտ ու ոյժ չունէի, որ վատ սովորութիւններս առեմ եւ նոցանէ հեռանամ, գիտենալով, որ ինձ համար մի մի մոլութիւն պիտի դառնան, կամ արդէն իսկ մոլութիւն եղած են։

Պէտք է ես իմ մտածելու եւ գործ կատարելու կերպը եկող տարուան մէջ փոխեմ եւ ինքս ինձ փորձեմ, տեսնեմ թէ արդեօք հոգւոյ ոյժ ունիմ եւ կարող եմ չյաղթուիլ եւ չտրտնջալ, այլ մեծ լինել ինձ պատահած անյաջողութիւնների մէջ, եւ ինձ բաղդաւոր համարել այն ամենայն անբաղդութիւնների մէջ, որ ինձ կարող են պատահել։ Կկամենամ կատարել միայն այն, ինչ որ բարին է, արդար է, եւ Աստուծոյ հաճոյ է։ Կկամենամ կանուխ եւ ուշ բարւոյ ցանածները հընձել, վասն զի չգիտեմ, որն է աւելի լաւը (Ժողովողի գիրք Սողոմոնի 11, 6)։

Այսպէս ուրեմն իմ տարին քրիստոնեայ մարդին արժանի կերպով թող վերջանայ. եւ վերջին բանը, ինչ որ ես այժմ պիտի անեմ, լինի շնորհակալութեան իմ աղօթքս ամենաբարձրեալ Աստուծոյն այն ամենայն օրհնութիւնների, սիրոյ համար, որ պարգեւած եւ ցուցած է անուրանալի կերպով ինձ եւ իմ որտի համար թանկագին ընտանիքիս անցած տարւոյ մէջ։

Կարող եմ ես արդեօք մոռանալ, ով իմ Հայր, որ երկինքն ես, որ Դու անցած ժամանակի մէջ իմ Հայրս, իմ Աստուածս ես եղել։ Կարող եմ արդեօք մոռանալ թէ որչափ շնորհք իբրեւ բարիք ու պարգեւներ պարգեւած ես ինձ եւ իմ ընտանիքիս, եւ որչափ քո ողորմութիւնը տեսած ենք մեր վերայ։ Արդեօք արժանի՞ էի քո այդ սիրոյն, հաւատարմութեանն ու խնամքին. հաւատարիմ եղե՞լ էի քեզ արդեօք եւ քո սիրոյդ արժանացե՞լ էի։ Արժանի՞ էի արդեօք քո այդչափ բարերարութիւններիդ։ Եթէ որ հրեշտակի առաքինութիւններն ունենայի, դարձեալ չէի կարող ինձ իրաւունք համարել քո ողորմութիւնդ խնդրելու. ոչ թէ իմ գործերս են, այլ քո անքննելի ողորմութեան գործերն են, որ ինձ փրկութիւն, օրհնութիւն եւ երջանկութիւն բերին ու պարգեւեցին։

Շնորհակալ եմ Քեզ, Աստուած բա-

ըերար, տաք ու անկեղծ սրտով այս տարուոյս վերջին ժամերիս մէջ։ Շնորհակալ եմ քո երկայնմտութենէն իմ մեղանչական ընութեանս համար։ Շնորհակալ եմ հազարաւոր տեսակ տեսակ ուրախութիւնների համար, որով լնձ մխիթարեցիր եւ ուրախացուցիր։ Շնորհակալ եմ քո հայրական օգնութեանդ համար, որ լնձ այն ժամանակ հասաւ, երբ որ աւելի մեծ նեղութեան մէջ լնձ կտեսնէի, եւ երբ որ աւելի պէտք ունէի քո օգնութեանդ, երբ որ բոլորովին յոյսս կարած, մոլորուած, տարակուսած, աղատուելու հնարն չէի գտներ եւ ամեն ճանապարհ առաջեւս փակուած կտեսնէի։ Շնորհակալ եմ քեզ այն կարողութեան համար, որ լնձ պարգեւած ես բարին գործելու թէեւ այն այժմ եւ զօրութիւնս միշտ բարին գործելու համար բանեցուցած չեմ։ Շնորհակալեմ քեզ, Տէր, այն հոգացողութիւնների համար, որով լնձ եւ իմ ընտանիքս շատ վրտանգներէ ազատեցիր։ Շնորհակալ եմ նաեւ այն ցաւերին համար, որ ես անցած տարուան մէջ կրեցի, որոնք քո պատգամաւորներն էին, որ լնձ կյորդորէին միտքս բերելու քեզ եւ իմ կոչումս յաւիտենականութեան համար։ Այո, շատ կերպով եւ շատ անգամ ըզգացած եմ այս, «Ը Դ— «ԷՐ Է», Լ ԴԷ ՊԷՆՔԱԾ ԱՂԽԱՐՀԷ ԴԷՂ ՈՂ ՄԷ ՎԱՊԷՆ ԿԿԱՅ ԷԱՅ Է ԴԷՂԷՆ, ՈՐ ԴԷՆ ԿԳՈՒՅԺԷՆ։։

Դ. Ե Ա.

(Թարգմ.)

ՊԵՐՀՏՕՆԱԿԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑ ՅՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՌՆՕԳԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Նախկին վանահայր Սուրբ Խաչ վանուց Նոր Նախիջեւանայ Սահակ վարդապետն Բաղդասարեան վասն անբարոյականութեան եւ անվայել իւրումն կոչման չարաչար գնացիցն վասնելով զինչ լնչ եկեղեցական զարդս եւ անօթս, տնօրէնութեամբ Սինոդի Սրբոյ Էջմիածնի եւ բարձմամբ վեղարի եւ փիլոնի առաքեցաւ հնգամեայ ժամանակաւ յապաշխարութիւն ի Վանս Սեւանայ Անապատի, որպէս զի կացեալ անդ իբրեւ լոկ ունկնդիր ընդ աշխարհական տղօթողս, քաւեցէ զյանցանս իւր զղջմամբ, աղօթիւք եւ պահօք։

Զայսմանէ ընդ ձեռն «Արարատ» մատագրոյ հրատարակի ի զգուշութիւն եւ ի խրատ Վանահարց Վանօրէից ամենայն վիճակաց։

Շմաւոն քահանայն տէր Բաղդասարեան Բլէրանոյ գեղջ Ղարաբաղու վիճակի վասն տղոյ զհրաման թոյլատրութեան պսակի Աղսխեցի Ադամայ Բաբայեան ընդ Նաշխունի Բաղդասեան ի չհասականատոտիճանի ազգակցութեան, անօրէնութեամբ Սինոդի Սրբոյ Էջմիածնի ի 28ն յուլիսի 1878 ամի արգելաւ ի քահանայագործութենէ զամն երիս։

Հայրապետ քահանայն Դօլուխանեան Աւետարանոց գեղջ Ղարաբաղու

վիճակի վասն կատարելոյ գաղտնապէս ի տան զպսակ նոյն գիւղացի Սմբատայ Յովսէփ - Բէկեան Մադաթեան ընդ Լիզինկայի Խորայէլ - բէկեան Մելիք Շահնազարեան ի չհասական աստիճանի ազգակցութեան առանց հրամանի մերձաւոր Հոգեւոր իշխանութեան եւ գործակալին, տնօրէնութեամբ Սինօդի Սրբոյ Էջմիածնի ի 25 սեպտեմբերի 1878 ամի ենթարկեցաւ ի ներքոյ հնգամեայ ապաշխարանաց ի միում ի Վանօրէից վիճակին Շուշւոյ:

Եսայի քահանայն Նաջառեան Շուշի քաղաքի վասն կատարելոյ գաղտնապէս եւ առանց թոյլատրութեան եւ հրամանի Հոգեւոր իշխանութեան եւ գործակալին զպսակ աստիճանաւոր Պաւլէ Եսայի — բէկեան Դանիէլ — բէկեանի ընդ դստեր Համբարձում — բէկի Սարուխան — բէկեան ի չհասական աստիճանի ազգակցութեան ենթարկեցաւ ի ներքոյ հնգամեայ ապաշխարանաց ի միում ի Վանօրէից վիճակին Շուշւոյ:

Դանիէլ քահանայն տէր Դանիէլեան Շուշի քաղաքի վասն գիտակցաբար կատարելոյ զխորհուրդ պսակի ի վերայ Թազագիւլի Մուսայէլեան ընդ Սարգսի Միքայէլեան առ կենդանութեամբ առն առաջնոյն, տնօրէնութեամբ Սինօդի Սրբոյ Էջմիածնի յ30 հոկտեմբերի 1878 ամի ենթարկեցաւ ի ներքոյ չորսամեայ ապաշխարանաց ի միում ի Վանօրէից վիճակին Շուշւոյ:

Տփխիսաբնակ պարոն Նադվօրնի Սովետնիկ Գրիգորն Իզմիրեան շարժեալ յազգասիրական զգացմանց իւրոց նուիրեալ է զսեփհական երեք յարկեան տուն իւր ի Տփխիս քաղաքի հանդերձ ընդ նովաւ գտանեցեալ կրպակօք եւ նկուղիւք, որոյ արժէքն ըստ գնահատութեան հասանէ ց16000 րուբլի յօգուտ Նորաշէն եկեղեցւոյն Սուրբ Աստուածածնի տեղւոյն եւ Մարիամեան ուսումնարանի, որոյ մասին Սինօդս Սրբոյ Էջմիածնի համաձայն առաջարկութեան Թեմական Ատենին տնօրինեաց ըստ օրինի խնդրել զԲարձրագոյն հաճութիւն ընդ ընդունելութիւն յիշեալ տանն եւ ընդ հաստատութիւն օրինաւոր կալուածագրոյ:

Հին Նախիջեւան քաղաքի բնակիչ արգոյ Մկրտիչն Թունեան հոգւով բարեպաշտութեան նուիրեալ է ի պէտս յաջորդարանի տեղւոյն զտուն իւր կառուցեալ ի նմանէ ի վերայ եկեղեցապատկան գետնոյ, զոր կալուած Սինօդն Էջմիածնի ընդունելով հաճութեամբ արձանագրեաց ի թիւս կալուածոց Աթոռոյս սրբոյ Էջմիածնի: Նոյն պարոնն խոստացեալ է բաց յայնմանէ կառուցանել եւ զայլ նոր շինուած ի պէտս ծխական դպրոցի Նախիջեւանայ առ ի կրթութիւն եւ ի լուսաւորութիւն մանկանց եւ վասն այսպիսի աստուածահաճոյ նուիրանացն նորա առաքեցաւ առ պարոն Թունեանն գիր շնորհակալութեան ի դիմաց Սինօդի:

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՀԱՇԻՒՆԵՐԻՑ.

	ԱՆՈՒԱՆՔ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՀԱՅՈՑ Ի ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԴՄԵՐԷԹԻ ՎԱՆ 1877 ԱՄԻ	Թիւ ուսուցչաց:	Թիւ ուսանողաց: Արական	Թիւ ուսանողաց: Իգական
	Ի Տփխիս քաղաքի.		
1	Սուրբ Գայեանեան Օրիորդական միջնակարգ Դպրոց	23	»	152
2	Մողնւոյ Սուրբ Գէորգայ միջնակարգ Արական Դպրոց	13	80	»
3	Նորաշէն եկեղեցւոյ Մարիամեան Օրիորդական Դպրոց	9	»	42
4	Աւետեաց եկեղեցւոյ Արական Դպրոց . . .	3	25	»
5	Անդ եւս Օրիորդական Դպրոց	4	»	28
6	Սուրբ Գէորգայ Կաթուղիկէ եկեղեցւոյ Արական Դպրոց	5	61	»
7	Անդ եւս Օրիորդական Դպրոց	5	»	36
8	Վանաց եկեղեցւոյ Օրիորդական Դպրոց Մարկոսեան	2	»	30
9	Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Արական Դպ. Թանդոյեան	3	45	»
10	Անդ եւս Օրիորդական Դպրոց	4	»	29
11	Հաւլաբարի Մարիամեան Օրիորդական Դպրոց	4	»	60
12	Սուրբ Մինաս եկեղեցւոյ Արական Դպրոց Իզմիրեան.	4	40	»
13	Շամքոռեցւոց եկեղեցւոյ Արական Դպրոց . .	2	19	»
14	Սուրբ Կարապետ եկեղեցւոյ Արական Դպրոց . .	1	21	»
15	Զորաբաշու Սուրբ Գէորգայ եկեղեցւոյ Արական Դպրոց	2	22	»
	Ի Գօրի քաղաքի.			
16	Արական Դպրոց առ եկեղեցեաւ Սուրբ Աստուածածնի	4	20	»
17	Անդ եւս Իգական Դպրոց	4	»	25
18	Ի Սուրամ Արական Դպրոց	2	33	»
19	Ի Սղնախ Սահակեան Արական Դպրոց . . .	3	55	»
20	Անդ եւս Օրիորդական Դպրոց Շուշանիկեան . .	4	»	30
21	Ի Վելիսցիխէ գեղջ Արական Դպրոց . . .	1	33	»
22	Ի Թէլաւ Վարդանեան Արական Դպրոց . . .	5	66	»
23	Անդ եւս Օրիորդական Դպրոց	6	»	39
	ՅԱխալցխայ քաղաքի.			
24	Կարապետեան միջնակարգ Արական Դպրոց . .	10	193	»
25	Եղիսաբէթեան միջնակարգ Օրիորդական Դպրոց .	10	»	117
26	Վարդանեան Դպրոց Արական	4	152	»
27	Նոր Արշալոյս Օրիորդական Դպրոց . . .	4	»	56

	ՅԱխալքալաք քաղաքի.			
28	Արական Դպրոց Մեսրոբեան	5	150	»
29	Օրիորդական Դպրոց	5	»	51
	Ի Քուրայիս քաղաքի.			
	Արական Դպրոց	4	40	»
30	Օրիորդական Դպրոց	4	»	29
31				
32	Ներսիսեան Հոգեւոր Դպրոց Տփխիսայ	17	298	»

	ՅԵԼԻՍԱՎԵՏՕՊՕԼ ՔԱՂԱՔԻ ԵՒ Ի ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ,	Թիւ ուսանողաց	Թիւ ուսանողաց Արական	Թիւ ուսանողաց Իգական
1	Յելիսավետապօլ քաղաքի Հոգեւ: Դպրոցաց Արակ. սեռի	7	119	»
2	Անդ եւս Օրիորդական Դպրոց	8	»	58
3	Նորաշէն Թաղի Ծխական Դպրոց	1	46	»
4	Ի Գետաշէն գեղջ Արական Դպրոց	1	26	»
5	Բանանց գեղջ Արական Դպրոց	1	55	»
6	Փիփ գեղջ Արական Դպրոց	1	95	»
	Ի Ղաղախու վիճակի.			
7	Ի Հին Դիլիջան գեղջ Արական Դպրոց	1	42	»
8	Ի Քարվանսարա գեղջ Արական Դպրոց	1	63	»
	Ի Գաւառն Տփխեաց.			
9	Ի Շուլաւէր Գեղջ Արական Դպրոց			
10	Ի Սանահին գեղջ Արական Դպրոց	1	40	»
	Ի Գաւառն Ախալքալաքայ.			
11	Զիթլիկ գեղջ Արական Դպրոց	1	30	»
12	Զամտուրա գեղջ Արական Դպրոց	1	41	»
13	Գիւմբուրդէ գեղջ Արական Դպրոց	1	49	»
14	Վաչեան գեղջ Արական Դպրոց	1	32	»
15	Կուլչախ գեղջ Արական Դպրոց	1	56	»
16	Սուլդայ գեղջ Արական Դպրոց	1	19	»
17	Տաղէշ գեղջ Արական Դպրոց	1	20	»
18	Փոքր Գէօնդուրէ Արական Դպրոց	1	20	»

19	Զօհաբէկ Արական Դպրոց	1	32	»
20	Մեծ Խենչելի Արական Դպրոց	1	62	»
21	Զիկրաշէն Արական Դպրոց	1	50	»
22	Մեծ Արագիլ Արական Դպրոց	1	20	»
23	Ղաւուրմայ Արական Դպրոց	1	15	»
24	Փոքր Արակել Արական Դպրոց	1	21	»
25	Խոսպեայ Արական Դպրոց	1	17	»
26	Գանձայ Արական Դպրոց	1	42	»
27	Ապուլ Արական Դպրոց	1	23	»
28	Օլուբերդ Արական Դպրոց	1	21	»
29	Մերենեայ Արական Դպրոց	1	24	»
30	Մեծ Սամսար Արական Դպրոց	1	18	»
31	Էխտէլայ Արական Դպրոց	1	18	»
32	Տամալայ Արական Դպրոց	1	26	»
33	Կորխ Արական Դպրոց	1	36	»
34	Արակոլայ Արական Դպրոց	1	27	»
35	Օրճայ Արական Դպրոց	1	20	»
36	Զակ Արական Դպրոց	1	21	»
37	Գոմ Արական Դպրոց	1	30	»
38	Աղաւրէթ Արական Դպրոց	1	20	»
39	Բուռնաշէթ Արական Դպրոց	1	14	»
40	Ղադօլար Արական Դպրոց	1	29	»
41	Լօմադուր Արական Դպրոց	1	16	»
42	Ճանճղայ Արական Դպրոց	1	45	»
	Յընդայս 1877–78 ուսումնական ամի քաջալերեալ են հետևեալ Ծիական Դպրոցք, յորս ա. 1-ն Յունվարի 1878 ամի են ընդ ուսումն և ուսանողաց։			
43	Ի Զաքաթալայ Արական Դպրոց	1	32	»
44	Ցօձնի Արական Դպրոց	1	96	»
45	Ցանալցխայ ի Հին Թաղի Արական Դպրոց	1	28	»
46	Ի Ցխինվալ Արական Դպրոց	2	22	»
47	Ի Հախպատ Արական Դպրոց	2	23	»

ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑԱԿ

Թեմական և էկեղեցական Հոգեւոր Դպրոցաց Հայոց Արական սեռի Շամախւոյ վիճակի հանդերձ թուօք ուսուցչաց և ուսանողաց ի նոսին վասն 1877 ամի.

	ԱՆՈՒԱՆՔ ԴՊՐՈՑԱՑ.	Թիւ ուսումնարանաց	Թիւ ուսուցչաց	Թիւ ուսանողաց
1	Թեմական Հոգեւոր Դպրոց ի Շամախի քաղաքի .	1	3	79
2	Ծխական Դպրոց ի Բագու քաղաքի . . .	1	6	107
3	Ծխական Դպրոց ի Ղուբայ քաղաքի . . .	1	2	40
4	Ծխական Դպրոց ի Խաչմաչ գեղջ Ղուբայու . .	1	1	12
5	Ծխական Դպրոց ի Քիլվար գեղջ Ղուբայու . .	1	1	21
	Դումարն է	5	13	259

Ծանօթութիւն. Ի գիւղօրէսն Գիրք, Ղալակեայ եւ Սաղեան ոչ շարունակին ծխական դպրոցք ի պատճառս պակասութեան նիւթական միջոցաց եւ ուսուցչաց:

ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑԱԿ

Օրիորդական Հոգեւոր Դպրոցաց Հայոց Շամախւոյ վիճակի հանդերձ թուօք ուսուց. և աշակերտուհեաց նոցին, վասն 1877 ամի:

	ԱՆՈՒԱՆՔ ԴՊՐՈՑԱՑ	Թիւ ուսումնարանաց	Թիւ ուսուցչաց	Թիւ աշակերտուհեաց
1	Օրիորդական Ս. Սանդխտեան Դպրոց ի Շամախի .	1	4	53
2	Օրիորդական Ս. Հռիփսիմեան Դպրոց ի Բագու .	1	3	46
	Դումարն է .	2	7	99

ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑԱԿ

ԶԼՌՈՎ ՅԻՆԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՅՍ ՀԻՆԳԱԿԻՆ ՀԱՅՈՑ ՆՈՐՈՅՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ՐԻԵՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՂԼՌՈՎ ՈՍՈՒՑՉՍՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՍՆ ԻՆՈՒՆ ԸՍՊ ԵՐԿՈՒՍ ՏԵՍԻՍ։
Վասն 1877 տի։

Թիւ	ԱՆՈՒԱՆՆԵՐ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԵԱՑ ԱՌ ՈՒՍԻ ԳՏԱՆԵԻՆ ԴՊՐՈՑՔԵՆ։	Թիւ Դպրոցաց		Թիւք ուսուցչաց		Թիւք ուսանողաց	
		Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական
1	Ի Մայրաքաղաքին Ս. Պ. Բուրգայ	,,	,,	,,	,,	,,	,,
2	Ի Մայրաքաղաքին Մոսկուայի	,,	,,	,,	,,	,,	,,
	Ի ՀՆԳ—ՆԱԽԻՋԵՒԱՆ։						
3	Դպրոցն Մարգասիրական Ընկերութեան Նախիջեւան քաղաքի որ ի Վանս Ս. Խաչի	1	,,	4	,,	26	,,
4	Հոգեւոր Դպրոց Հայոց քաղաքին	1	,,	10	,,	161	,,
	Ծիսական Հոգեւոր Դպրոց։						
5	Սուրբ Լուսաւորչի	1	,,	4	,,	30	,,
6	Սուրբ Աստուածածնայ	1	,,	4	,,	35	,,
7	Սուրբ Համբարձման	1	,,	4	,,	33	,,
8	Սուրբ Թէոդորոսի	1	,,	4	,,	28	,,
	Ի ՀՅ—ԸԴՐԱՅ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ։						
9	Ի Զալթիր	1	,,	4	,,	135	,,
10	Ի Թօփալ	1	,,	3	,,	55	,,
11	Ի Մեծ Սալայ	1	,,	3	,,	50	,,
12	Ի Փոքր Սալայ	1	,,	2	,,	20	,,
13	Ի Եիոլիխայ	1	,,	1	,,	15	,,
	ՀԱՀԱՆԴԷՆ ՐԻԵՍՈՒԹԻՒՆ։						
14	Ի Քիշնեւ	,,	,,	,,	,,	,,	,,
15	ՅԱԳԻԵՐՄԱՆ	1	1	2	1	35	18
16	Ի Հնչեաստ	1	1	2	,,	11	7
17	ՅՕՐՀԷՅ	,,	,,	,,	,,	,,	,,
18	Ի Հօթին	,,	,,	,,	,,	,,	,,
19	Ի Բելց	,,	,,	,,	,,	,,	,,

	Ի Գ-ՐԷԳ-ՐԷՕՊՕԼ·						
20	Ծխական Հոգեւոր Դպրոց Օրիորդաց	,,	1	2	1	,,	16
21	ՅՕդեսսայ	1	,,	3	,,	35	,,
22	ՅԵյսկ	,,	,,	,,	,,	,,	,,
23	Ի Կերչ	,,	,,	,,	,,	,,	,,
24	Ի Թէոդոսիա	1	,,	1	,,	12	,,
25	Ի Խարսուբազար	1	,,	4	,,	64	,,
26	Ի Սիմֆերօպոլ	1	,,	3	2	54	56
27	ՅՕրբազար	1	,,	3	,,	30	,,
28	Ի Նորայսք	1	,,	2	,,	11	15
29	Ի Մելիտօպոլ	1	,,	1	,,	11	,,
30	Ի Հին Խրիմ	1	,,	2	,,	32	,,
31	ՅԵւպատորիայ	,,	,,	,,	,,	,,	,,
	Գումարն է	21	3	68	4	883	112

	ՅՈ-ցակ գԼՈՒ-այ Հոգեւոր Դպրոցաց վիճակն Հայոց Երկրագայ·	Ցանուց	Ուսուցչի	Աշակերտաց
1	Ի Քաղաքն Երեւան Իգական Դպրոց	2	10	104
2	Ի Քաղաքն Երեւան Արական Թեմական Դպրոց	1	8	132
3	Անդ Արական Ծխական Դպրոցք	3	3	125
4	Ի Վաղարշապատ Արական Դպրոց	1	2	60
5	Անդ Իգական Դպրոց	1	3	36
6	Ի Նոր Բայազէդ Իգական Դպրոց	1	2	49
7	Անդ Արական Դպրոց	1	3	150
8	Ի Հին Նախիջեւան Արական Դպրոց			
9	Անդ Իգական Դպրոց	1	3	28
10	ՅԱգուլիս Իգական Դպրոց	1	5	58
11	Անդ Արական Դպրոց			

	Յ՝-ցակ ղՒ՝-ոյ Հ՝-ոգԼ՝-ոյ Դ՝-ոլ՝-ոցոց ՀԼՇ՝-ակԼՆ Հ՝-պ՝-ոց Ղ՝-ոլ՝-ոՇ՝-ոՂԼ՝-			
12	Ի Շուշի Իգական Դպրոց	1	4	70
13	Լենքորան Արական Դպրոց	1	2	25
14	Ի Շուշի Թեմական Դպրոց	1	8	148
15	Անդ Մխական Դպրոցք	2	8	100
16	Ի Նուխի Արական Դպրոց	1	4	108
7	Գիւղն Վարդաշէն Արական Դպրոց	1	1	64
18	Գիւղն Նիգ Արական Դպրոց	1	1	21

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Գեր. Վահրամ Եպիսկոպոս Մանկուեանն՝ որ կվարէր «Արարատի» խմբագրութիւնը՝ որքան կներէին նորան իւր կարողութիւնը եւ մանաւանդ իւր միջոցները՝ յօդացաւութեան պատճառով դժուարացաւ շարունակել «Արարատի» խմբագրութեան աշխատանքը՝ ուստի Վեհափառ Կաթողիկոսը Հայրապետական կոնդակով (1878 թ. հոկտեմբերի 31՝ թ. 258) բարեհաճեց կարգել նորա տեղ «Արարատ» ամսագրի տնօրէն եւ խմբագիր եւ Մայր Աթոռոյս տպարանից հրատարակելի մատենագրութիւնների կարգադրիչ Մայր Աթոռոյս միաբան Խորէն վարդապետ Ստեփանէանն՝ որ կատարէ ամենայն ինչ Սուրբ Հայրապետի հրահանգների եւ պատուիրանների համաձայն՝ Գէորգեան ճեմարանի ուսուցիչ պ. Կ. Կոստանեանի գործակցութեամբ։

«Արարատ» ամսագրի նոր խմբագրողը՝ թէպէտեւ տասն եւ մի տարի կհրատարակէր «Հայկական Աշխարհ» սակաւաթերթ եւ Մանանայի օրագիրը՝ կդժուարանար այս ծանր պաշտօնական եւ հանրաշահ լինելի պարբերականը յանձն առնել՝ եթէ չյուսար հայասէր մտածող անձների օգնութեան — ոմանց խորհրդով եւ ոմանց գործով։ «Արարատը»՝ որ Մայր Աթոռի դէպի ազգն եւ նորա կարիքն ունեցած զգացմունքի եւ փափագների թարգմանն է՝ տաւելի քան մեծ ստորագրողներ ունի՝ «Արարատը» կմնայ այնպիսի հայաբնակ գիւղեր եւ խորշեր՝ ուր ոչ միայն պարբերաթերթ՝ այլ գիրքն անգամ շատ սակաւ կպատահի՝ ուստի «Արարատը» նոյա մտաւորական զարգացման միակ աղբիւրը պիտի լինի իրապէս։ Այս կողմից արդարեւ արժանի է ամենայն գոհունակութեան Վեհափառ Կաթողիկոսի այն տնօրէնութիւնը՝ որ ամենայն քահանայ հարկաւոր համարի թեթեւագին «Արարատ» ստանալու՝ ինչպէս եւ ամեն կեդրոնական վարչութիւն ունի իւր՝ համեմատաբար առաւել մեծագին՝ պարբերաթերթը պարտաւորված ~~ստորագրողներով։ Անկասկած՝~~

կոչատուհին այնպիսի քահանաներ, որոնք գուցէ երբեք ոչինչ գրքի ձեռք պիտի չտային, իսկ Աշխարհատը ասունալով գժուար թե մի յօդուած գրնէ յիարգանն նօրատ մէջ։ Ուրեմն Վեհափառ Հայրապետիս բարի եւ ծգտուն էնդ ատանկին գործակցելով Ազգը Ամենայն Հայոց բարձրագոյն օգուտն յարգելով, հայ ժողովրդի եւ քահանաներու եւ վերջիններիս միջնորդութեամբ գիտուն Լոյսից հեղու բազմաթիւ հայաբնակ գիւղերի ժողովրդի գաղափարներ եւ հայեացքներ զարգացնելու եւ առաջնորդելու համար, կհրաւիրվին ահա որոնք վինչոմ ար կարող են օգնել իւրաքանչիւրն իր ոլորտին վարձառու խորհուրդներով եւ ազգասիրական աշխատակցութեամբ այս ազգային նուիրական գործը յառաջ տանելու։

Նոր խմբագրութեանս վերայ պարտք կայ իւր նախորդի անունը, որ տասն տարի եռանդուն աշխատասիրութեամբ վարեց այս պաշտօնը, երախտագիտութեամբ եւ յարգանքով յիշելու։ Խոստովանելու է որ Վահրամ Եպիսկոպոս Մանկունին շատ աշխատանք ունի Էջմիածնի մէջ։ «Արարատի» տասնամեայ խմբագրութիւնը, բաւական մեծ եւ յարմարաւոր տպարանի սկզբնաւորութիւնն եւ կազմակերպութիւնը, գանազան գրքերի տպագրութիւնը, Էջմիածնի գանձարանի համար քանի մի դրամական աղբիւրների գտնելը, որոնք այս Վեհափառ Հայրապետի հրամանով եւ անօրէնութեամբ էին, սակայն անմիջական աշխատութիւն եւ դժուարութիւն կրողը Վահրամ Եպիսկոպոսն էր անդադար թէպէտեւ կիսայելէր դիմբաղդաբար շարունակ անտէրջ գրպարտանք եւ թշնամութիւն։ Արդարեւ) չկայ աշխարհիս մէջ մարդ առանց թերութիւնների կամ գաղափարների կողմից կամ հայեացքների, կամ ինչ ինչ գործերի, բայց եւ այնպէս մեր ազգի մէջ Գերվահրամ Եպիսկոպոս Մանկունու նըմանն արդիւնաւոր գործ կատարող անձները միշտ քաջալերութեան արժանի են հանրաշահ գործերի մէջ։

Ալեքսանդր Կաթողիկոսը ազգի վարիագը լցնելով բազմակարօտ պիտոյքներին բաւարարութիւն մատակարարելու համար, բարեհաճեց իւր հիմնարկած Գէորգեան ճեմարանը ընդարձակել։ Ճեմարանի մէջ այժմ ստրդէն 100 աշակերտ կգտնվին հինգ դասարանների մէջ։ Սակայն բացվելի դասարանների համար տեղ չկայ այլ եւս։ Ուստի Վեհ. Կաթողիկոսը մեծ ազգասիրութեամբ յանձն առաւ նորանոր հոգսեր ճեմարանին կից առանձին նաչարան եւ սեղանատուն շինելու։ Այս գործը Վեհ. Տէրը առաջարկեց քանի մի ազգասէր պարոններին, որոնք ամենայն յօժարութեամբ եւ բարեհիրութեամբ յանձն առան հայ ժողովրդի օգնութեանը դիմել եւ հանգանակութեամբ կարեւոր գումար ժողովել։ Վեհ. Կաթողիկոսը առանձին Հայրապետական կոնդակով հրաւիրեց Մեծապատիւ Մըկրտիչ Մանասարեանին (№ 292, Պետերբուրգ), Մեծապատիւ Յովհաննէս Յոհաննեանին (№ 293, Մոսկվա), Մեծ-

Բժշկապետ Յարութիւն Յովհաննէսեանին (№ 294), Մեծ. Պ. Անտոն Ղօրղանեանին (№ 297), Մեծ. Պ. Մելգոն Լամիձէին (№ 298), Մեծ. Պ. Յովհաննէս Զիլթախեանին (№ 295), եւ Մեծ. Պ. Ալէքսանդր Մանթաշեանին (№ 296), դարձակցել այս ազգաշէն ձեռնարկութիւնը։

Համոզված ենք, որ իւրեանց բարեսիրութեամբ եւ ազգասիրութեամբ համբաւաւոր այս պարոնները նպաստելով Վեհ. Կաթողիկոսի մեծ ձեռնարկութեանը իւրեանց աշխատութեամբ արձագանգ պիտի տան Հայրապետական Կոնդակի ամենայն ուշադրութեան արժանի յետագայ խմբագրութիւնքերին։ Եւ զի Մայր Աթոռս Ս. Էջմիածնի իրրեւ կենտրոն միութեան ազգի եւ եկեղեցւոյ մի վազ ժամանակաց անտի ուներ զգալի եմն պետս այնպիսւոյ իրիք ուսումնական հանրապետութեան, յորում զոյգ ընդ միարեւոր կենցաղագրութեան գիտելեաց աւանդեալ լինէին նաեւ բարձրագոյն ուսմունք հոմանձայն արդի պիտոյից ժամանակիս, վասն որոյ ձեռն արկաք ի շինութիւն ձեմարանիս, զաւաշլինն ի մոի եդեալ ըստ ներելոյ դրամական հանգամանաց Ս. Աթոռոյս դասախարակել զաշակերտս ոչ աւելի քան զյիսուն։

«Յօրէ անտի բացման ձեմարանիս տեսեալ զյաւելումն թուոյ ուսանողաց եւ զյանձախել թուոյ ցանկացողաց առ ի տալ յորդեգրութիւն ձեմարանիս զորդիս իւրեանց, մանաւանդ յաղքատիկ դասակարգէ ժողովրդեան, որոց վասն գլխաւորապէս կառուցաք զձեմարանս զայս, սկսին իրի պարտաւորեցաք լինորոյ յաւելուլ եւ կանգնել զերկրայրիսն ի ընդարձակ իմն շինութիւն ի պէտս ննջարանի եւ սեղանատան վասն երկուս հարիւր եւ առաւել եւս աշակերտաց, որոյն փոշինութենէ ձեմարանիս եւ այն փոքրահացեալ յոռատաձեռն նուիրատուութիւն բարեպաշտ եւ ձեռնհաս ազգայնոց մերոց։

«Ուստի յորդոր լինիմք բարեպաշտութեանդ, ի քննին առեալ զոյժ մեան անհրաժեշտ պէտս որդւոց Հայաստանի, որոց վասն չխնայէք յամենայն դէպս առատաձեռնել զոյցս մարդասիրութեան։ Ձերոյ եւ զկարեւորութիւն ննջարանին եւ սեղանատան, զոր մտադիր ենք կառուցանել միայն ի պատճառս անձկութեան շինուածոյ ձեմարանիս, բանալ զհանգանակութիւն կամաւոր որոց ժողովրդեան ի պէտս ըմման այսր ազգաշէն խորհրդոյ մերոյ, որպէս զի յաւուրս առաջիկայ գարնայնոյն, ընդ վերահասութեամբ փորձառու եւ տնտեսագէտ անձանց սկիզբն արասցուք Տեառն յաջողելով շինութեան ննջարանին եւ սեղանատան վ յիշատակ ոգեւորմնասիրութեան եւ ազգասիրութեան Հայոց Տփխիսայ Մոսկուայի եւ Փեթրսբուրգայ եւ այլոց տեղեաց, որք ընդ մեզ վայրս եւս ծանուցեալ էին զկարեւորութիւն այնպիսւոյ ուսումնական հանրապետութեան առ պարապօք Ս. Էջմիածնի։

Կամեցարեք մտաձօղ եւ հեռատես Հայերին որ իւրեանց աչքը դարձնեն անդադար դէպի փրկութեան տունն Հայ-

կական՝ եւ գործակցեն Էջմիածնի տուրբ վայրի Վ. Հատառ Տնտեսին ազգային բարոյական վրկութիւնը իրագործելու։ Փառաւոր սիրոյն արդէն դրված է, գործի կէսն արդէն կատարված է։ այսօր ահա մեծ հոգայողութեամբ կանգնվին, կենդանվին 100 ընդունակ եւ խելացի հայազն պատանեակներ Վաղարշապատի պէսոգիւղում, ծախսելով մոցա թէ ապրուստեան եւ թէ ուսման վերայ տարեկան մօտ 25 հազար մանէթ։ երբ յառաջ վանքի դպրոցի վերայ գրեթէ կրժուարանային 25 մանէթ ծախսել չլինելու պատճառով։ Որտեղ ունինք արդեօք Հայերս Թուրքայի մէջ այնչափ գեղեցիկ, արգաւանդ եւ քերքի հող՝ որ պատրաստած է մեծ լինողութեամբ Վեհ. Հայրապետը եւ որ կարիքսն մշակել, բարձրել եւ զարգացնել մեծագործ Հայրապետի հրաւիրված ուսուցիչները մի գիւղում այն կերպով երբեւ ամենայն յարմարութիւններ ունեցող մայրաքաղաքի մի մէջ։ Համոզված ենք՝ որ այս խնդրի մեծ կարեւորութիւն հասկացող եւ մոռածող իւրաքանչիւր Հայն կշտամբէ Վեհ. Կաթողիկոսի բարի բաղձանքին օգնել՝ որ ամենայն միջոցներով կաշխատի այս դժուար ժամանակին, իւր հրգեւոր հօտը սնուցանել դալարի վայրի մէջ եւ հանգստեան ջրերի մօտ։——

Մեծ ուրախութեամբ հրատարակեցինք արդ. Յովհաննէս ք. Քաջազնունու նամակը Սիսալքալաքից ներկայ տեսարակում։ Այն՝ ինչ որ վաղուց մեր միտքը եւ մեր մոռածութեան առարկան էր՝ գուցէ մեր pia desideria (բարեպաշտ ցանկութիւն մի) կհամարվէր՝ որի մասին քանիցս խօսած ենք։ Հայկական Աշխարհում՝—ամենաբարին Աստուած կշնորհէ մեզ տեսնել մեր աչքով։ Երբ աղնիւ պարոն Կարապետ Շահնազարեանն իւր դիտաւորութիւնն ի կատարածել սկսէ՝ արդէն որատրանտ հող պիտի գտնէ իւր աշխ. նպատակի համար (հայրենասիրութիւնն առաջին աղնուութիւն է)։ Արդ. Սոնեփանոս վարդապետ Ներսիսեանին արդէն սկսած է Անու մէջ մեծ գործ Վեհ. Հայրապետի օրհնութեամբ՝ որի մասին Վեհ. Տէրը բարեհաճեց յայտնել Ղարսի Նահանգապետին իւր գրութեամբ (№ 238)։ Այս մեր ներկայ տողերի Հայրապետի օրով մենք դեռ եւս շատ միթարական ազգային յառաջադիմութիւններ պիտի տեսնենք։ Բայց թող լռենք մենք մեր թոյլ խօսքով եւ թող ասեն մոռածող Հայերին ուրախութիւնը Հայրապետական Գահի բարձրութենից այս նկատմամբ ասուած նորա կոնդակները՝ որ կրանեսանք ամբողջութեամբ տպել առարկայի վսեմութիւնը այլի առաջ տանելով։

Մարգարեանցի Աբրահամեանց Վարդապետի Հայրապետական օրհնութիւն։

Լսելով զհամբաւ ջանից եւ վաստակոց քոց ի նորոգութիւն հռչակաւոր վանիցն Խօշայ երբեմն Հոռոմոս կոչեցելոյ՝ այսու Հայրապետական կոնդակաւ մերով հաստատեմք զքեզ ի վանահայ-

թեամբ նորա վիճակավայն կարգեմք ի վանս հայոց Աստուած եկեղեցւոյ Անուոյ շնորհեալով քեզ զանուանակս խաչ առ ի վրեմ ի չանչս քոս, որով եւ զքան զեւս արիացեալ ի զաչս ամենայնոց զուն գործեսցեն յաւէտ ի պայծառութիւն տաճարի Տեառն։

Լիայոյս եմք, զի գալ անդադար խորհելով զօգուտս վանիցն զամենայն ջան ի գործ արկեալ հեզգեսցես ի ձեռս բերիցես հանապազեսգես զհոգոց եւ զկարուածս նոցին վաւերական վարուածս գրելոյ եւ արդիւնաւորեսցես զնոսա բան արժանաւոր։ Ողջ լեր ի Տէր։

(1878. հոկտ. 18. թ. 242)

Պատանեաց Խոշանոց Բարեշնորհ Պատուական Պարգաւորեալ Շէրակոնոց Հայրապետական օրհնութիւն.

